


ANAHIT, REVUE ARMÉNIENNE, LITTÉRAIRE ET ARTISTIQUE



# ԱՆԱԿԻՏ

ՀԱՆԳԻՄ

ԱԶԳ. ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ 1911

ՄԱՑԻՍ - ՅՈՒՆԻՍ.

ԹԻԻ 5-6

ՓԱՐԻԶ

DIRECTEUR : A. TCHOBANIAN .

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Համառօտ տեղկկութիւններ, էջմիածնի մի քանի մանրանկարներ մասին (12 պատկերներով զարդարուաւ).	ԳՍՐԵԴԻՆ Վ. ՅՈՎՍԷՓԵԱՆ	97
Ուրուագիծեր . . . . .	ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	116
Քաններորդ դարը եւ Հայութիւնը . . . . .	Հ. Կ. ՏԸՐ-ՍԱՀԱԿԵԱՆ	118
Անօթիները (քերթուած) . . . . .	Ա. ՀԱՐՈՆ	128
Վասն նախաչ . . . . .		130
Արեւելեան խաղաչխարհ « խոժկոցիկ » . . . . .	ՉԻԹՈՒՆԻ	132
Քրոնիկ . . . . .	Ա. ՉՕՊԱՆԵԱՆ	133
Մարդկային տառապանքը ուժերու տնտեսութեան գաղափարով բացատրուած . . . . .	ԳԵՂԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ	137
Մկրտիչ Փորթուգալեանի յօրելեանը . . . . .	—	

Ա Ձ Պ

ԱՆԱՀԻՏԻ այս թիւը ուր լոյս կը տեսնէ՝ քերթիս սեօրեմին հիւանդութեան պատճառաւ :

Անահիթի անցեալ շրջանի թիւ 11—12ը եւ ներկայ շրջանի երկու թիւերը մեր Կովկասի բաժանորդներուն ձեռքը չեն հասած : Մենք ուղարկած ենք՝ ըստ սովորականին, եւ մեր ամէն երկրի բաժանորդներն ստացած են, միայն Կովկասի բաժանորդները չեն ստացած՝ չենք գիտեր ինչո՞ւ : Դիմած ենք Փրանսական փոսթայի վարչութեան, որ քննութիւն բացած է արդէն :

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Ն Ա Հ Ի Տ Ի

Տ Ա Ս Ն Ե Ր Կ Ո Ւ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ե Շ Ր Ջ Ա Ն Ի

Բաժանորդագրութիւնը պէտք է ԿԱՆԻԻԿ վճարել :

# ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ. 1911

ՄԱՑԻՍ - ՅՈՒՆԻՍ

ԹԻԻ 5-6

## ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԷԶՄԻԱԾՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ<sup>1)</sup>

Ա.

Թ Ա Ր Գ Մ Ա Ն Զ Ա Ց Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

№ 1058 (Շարունակութիւն Գեորգեան ցուցակի)

ԱԻԵՏԱՐԱՆԸ իւր անունն ստացել է Գանձակի մօտ գտնուած Թարգմանչաց վանքից, ուր մինչեւ 1900 թուականը պահուում էր այն: Այս ձեռագիրը թէև շատ հին չէ, գրուած է 1202 թուին, բայց նշանաւոր է իւր արեւելեան գրոշմ կրող՝ բիւզանդականից անկախ մանրանկարներով: Ընդհանրապէս հնագոյն ժամանակից մանրանկարներով և թուականով աւետարաններ մեր ձեռքը քիչ են հասած. Թարգմանչաց Աւետարանը մէկն է այն սակաւաթիւ ձեռագիրներից, որոնք իրենց մանրանկարչական մոտիւններով այս արուեստի արեւելեան ծագումն են հաստատում և գաղափար տալիս նախընթաց ձեռագրերի մասին, որտեղից նրանք են ընդօրինակուած:

Աւետարանի մեծութիւնն է  $29 \frac{1}{2} \times 23$  սմ. գրութիւնը երկսիւն՝ լւրաքանչիւրը  $23 \frac{1}{2} \times 7 \frac{1}{2}$  սմ. Գրուած է խոշոր երկաթագրով Տիրացու գրչի ձեռքով (183 ա), և ծաղկուած է Գրիգոր երէցի ձեռքով (10 բ, 115 ա) ՈՄԱ—1202 թուին (9 բ —

10 ա, 311 ա): Ստացողը պիտի լինի Յովհաննէս աւագերէց, որի անունը գրուած է մանրանկարների մէջ ծաղկողի ձեռքով, ուրեմն գրութեան թուին: Երկրորդ ստացողն է « Ասփայ՝ դուտոր Տարսայիճին սն. Սիւնեաց, յազգէ Ուրպելեանց » և իւր ամուսին Գրիգոր իշխան Դոփեանց, որ « ոսկէնկար կազմածով » շքեղացրեց և նուիրեց Խաղարի վանքին: Այսպիսով այս Աւետարանը Խաչենայ իշխանական տան աւետարաններից մէկն է, որ մի քանի յիշատակարաններով մեր ձեռքն է հասել (113 բ, 183, 293բ):

11բ Մատթէոսի նկարն է, ինչպէս ցոյց է տալիս նաեւ կապոյտ մակերեւութի (Փոնի) վրայ սպիտակ տաւերով գրած « Մատթէոս » բառը: Աւետարանիչը նստած է բարձր աթոռի վրայ, տակը երկար բարձ (մութաքայ կոչուած): Լաթի մի կտոր փռուած է աթոռի նստոցի ու բարձի վերայ, բարձը գրուած է այնպիսի ձեւով, որին կարծես աւետարանիչը իւր մէջքն է յենել: Նկարիչը հեռանկարչութեան (perspective) մասին գաղափար չունի: Աւետարանչի

1) Այս նօթերը ամբողջական ուսումնասիրութիւն մը չէ որ կը ներկայացնեն: Էջմիածին գտնուած ասենս՝ Գարեգին վարդապետ Յովսէփեանի հետ քրթաւելով հայ հին նկարագրող ձեռագիրներէն մէկ բանին, լուսանկարուելու համար ընտրեցի նկարներու այս շարքը զոր կը նրաստակեմ Անա-



Թարգմ. Աւես. — Մասթեոս Աւեսարանիչ (մանրանկար)

ոտքերի պատուանդանը նոյնպէս բարձր է և զարգարուած հիւսուածքներով, որոնք յաճախ կրկնուում են հայ ճարտարապետական զարդարանքների մէջ: Հետաքրքրական է յատկապէս ձախ ոտքի պատուանդան կազմող ճարտարապետութեան մէջ ևս գործադրուող զոյգ գծերով գուգահեռաբար ընթացող և իրար հիւսուող զարդարանքը՝ հանգսյցների տե-

նիս»ի այս բիւով, եւ խնդրեցի Հ. Գարեգին վ. Յովսէփեանէն որ հանի ասոնց մասին ծագութեան փոխանցումը խմբագրել. հմուտ եւ աշխիւ միաբանը գոհացում տուա խնդրանքիս՝ ուղարկելով այս շանեկան ցօքերը: Ինչպէս «Անանիս»ի վերջին յօդուածով քսած էի, Հ. Գարեգին վարդ. Յովսէփեան պատասխանեալ վրայ է ղնդարձակ ուսումնասիրութիւն մը հայոց հին մանրանկարչական արուեստի մասին, մեծ ուրախութեամբ իմացա; որ Պոստոյի գեղարուեստագէտ Հայունի մը՝ Տկն. Հ. Աղամեան, 5000 ռուպլի խոսացրէ է այդ գործի սպազութեան համար:


Այս նկարներու լիւրճներուն պատասխանութեան ծախսին համար մեզի օգնեց Տկն. Լեւոն պէյ Գափաւանեան, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնները:

Ա. 2.

ղերը «և գնդակներով: Մի այլ համընթաց, երեք զոյգ գծերի հիւսուածք, դարձեալ ճարտարապետական, նկարուած է նոյն պատուանդանի վրայ շրջանակ կազմող աջ սեան և սափորի մէջ եղած տարածութեան մէջ, վերելից վար ամբողջ պատուանդանի երկարութեամբ: Մեր նկարի մէջ երկուսն էլ պարզ չեն, մակերեսովը մոյգ կլինեմոնագոյն և գծերը դեղնաւուն լինելու պատճառով քիչ մատչելի լուսանկարչական գործիքին: Պատուանդանի կամարակապ պահարանում զրուած է ջրի սափորը, իսկ նրա տակ կողի վերայ ձեւացրած է պարզ գծերով մի խաչ: Աթոռի կողքից նկարուած է մի կամարակապ լուսամուտ, ծածկուած արեւելեան ճաշակի երկրաչափական ձեւերով: Այդ ձեւերը գործ էին զրուում արեւելքում լուսամուտների և պատշգամբների համար և մինչև այժմ էլ շարունակուում են գործադրուել Պարսկաստանում<sup>1)</sup>: Գծագրողների ուշադրութեան արժանի են դարձեալ Տ-աձևները, լուսամուտին կից, դէպ ի ձախ, ներքեկից, բայց շատ աղօտ այս պատկերի մէջ: Միւս գծագրողները, թէև յաճախ գործադրուած մեր նկարչի կողմից, բայց շատ նախնական են և անշուք: Աւետարանչի առաջ կանգնած է մի թռչուն (արդեօք արծիւ) կտցի վերայ թանաքաման ձեւացրած: Վերև նկարագրուած պատուանդանի վերայ հաստատուած է մի ձող, վրան զրակալ բաց գրքով:

Աւետարանչը նստած է մտածողի դիրքով, ձեռքը դրել է այտին, աչքերի մէջ էլ արտայայտուած է նոյն խորասուզուած վիճակը: Աջով բռնել է գրիչը և թաթախում է թանաքամանի մէջ: Հագել է կապտաւուն պարեգօտ (կապա, tunica) և կլինեմոնի գոյնով վերնազգեստ (toga): Պարեգօտի ծալքերն ու ստուերները արտայայտուած են սպիտակ գծերով, իսկ վերնազգեստինը սպիտակամոխրագոյն երանգաւորութեամբ: Աւետարանչի աջ ձեռքը ազատ է, չէ փաթաթուած վերնազգեստով, ինչպէս ձախը, և ուսին մօտ կրում է ժպակէն, իշխանական նշաններից մէկը: Աւետարանչների համար մանրանկարչական արուեստի մէջ ընդունուած ազնուականների «նշան» հագուստը ոչ միայն մեր, այլ և ասորաց,

1) Տես մեր յօդուածը «Նախնեաց յիւսակներ», «Արարչ», մարտ 1910, էր. 250;



Թարգմ. Աւես. — Սկզբնազարդ Մատթեոսի

բիւզանդացոց և արևմտեան ազգերի մէջ: Պարեգօտի աջ թևը լայն է, առանց բազկակալի: Աւետարանչի մագերը փոքրած են, միրուքն աւելի ալեղարդ, իսկ զլի մագերը նոր սպիտակել են սկսում: Դէմքը նուրբ չէ, բայց մտածողութեան հոգեբանական վիճակը, յատկապէս աչքերի մէջ, արտայայտուած է ոչ անյաշող: Գլխի շուրջը լուսոյ պակ է զրուած, ոսկու փոխարէն մի ինչ որ կեղտոտ՝ աւելի պղնձի ժանգի գունով, փոշու խառնուած: Լուսոյ պակը եզերուած է նախ կարմիր, ապա սպիտակ գծով: Ոտքերին ունի սանդալներ, որոնց կապերն են միայն նկատելի: Այս բոլորն առնուած է երկու սիւների վերայ հաստատուած կամարի տակ: Սիւները խաւրխաւ չունին, իսկ խոյակները կազմուած են երկու

տախտակի մէջ կտր վարդեակից (rosette), և մի գոյգ ականթից: Այս խոյակների վերայ հաստատուած է պարզ կամարը, արտաքին շրջանակը զարդարուած արմաւենիկների ոլորապտոյտ զարդով, իսկ ներսի անկիւնները մի մի բութ սրտաձեւով, մէջը եռատերև: Արմաւենիկների ոլորապտոյտ զարդը արծաղուած է փայտի և քարի քանդակագործութեան մէջ: Շրջանակները և կամարը եզերող գծերը ինչպէս և Մատթեոսի լուսոյ պակը կազմուած են պղնձի խոշոր փոշուց՝ խառնուած լաթի հետ, կանաչ հիմքի (dessous) վերայ:

12 ա. Մատթեոսի սկզբնազարդն է, որի ամեն մի կէտը պարզ ապացոյց է, թէ՛ բիւզանդականից անկախ մի այլ արուեստի հետ գործ ունինք այստեղ:

Ճակատագրողը մի քառանկիւնի է 16 սմ. երկարութեամբ և 10 1/2 սմ. լայնութեամբ: Քառանկիւնուներքին հիմքն է կազմում մի կարմիր մակերեւոյթով տախտակ, վրան մոյզ կարմիրով գրած « զօովհաննէս աւագ երէց յիշեա տր. Աճ. ամէն »: Տախտակի մէջտեղից բարձրանում են երկու 3/4ական շրջաններ, մէկը փոքր, պղնձի մակերեւոյթի վերայ կազմած գծերի մի հիւսուածքով. չորս « փռեղից կազմուած խաչաձևի վրայ գործուած են նոյն թուով կրե՞րէշներ (Brezel) կազմող ձևեր. սրանց շուրջը մի մի գնդակից և երկու սեպաձև եռանկիւնիներից մարգարտաշար կոչուած զարդարանք, բայց կոչու: Այս շրջանի եզերագիծը կապոյտ մի նեղ շերտ է վրան սպիտակ մի գիծ՝ մէջ ընդ մէջ երեք պարանաձև ոլորուածներով, մի մտուլ, որ յաճախ գործադրուած է այս ձեռագրի եզերագրողների շրջանակների համար: Այս և միւս աւելի մեծ շրջանի միջին տարածութիւնը ծիածան է ներկայացնում. կեղրունից դէպ ի եզերագիծը հետզհետէ սպիտակ, գորշ, կապոյտ և սև գոյների աստիճանական հետևողութեամբ: Մեծ շրջանը եզերուած է պղնձագոյն երկու գծերի մէջ առնուած կապոյտ ֆոնի վերայ սպիտակ գծագրողներով: Երջանի կողքերից նկարուած են մի մի գոյզ մեղալիոններ, փոքրների մէջ մի մի եռատերև, ներքին և միջին թերթերի միացման տեղում կարմիր գնդակով այս արուեստի բնորոշող երևոյթներից մէկը: Վերին մեղալիոնների մէջ չորս եռատերևներ են, որոնց ցողունները խաչ են կազմում, կեղրոնում սեղմած քառանկիւնի: Այստեղ ևս կան նոյն կարմիր գնդակները: Սրանց կողքերի ու քառանկիւնու վերին ճակատը կապերտագրող է, կարմիր և կապոյտ գոյներով, որոնց ձև և կենդանութիւն է տուած մոյզ և բաց կարմիր և կապոյտ և մոխրագոյն գիկզակ գծերով: Երկու մեծ մեղալիոնների մէջ՝ և մեծ շրջանի գլխի եղած զարդը արմաւենիկներից է կազմուած, ցողունները տեղ տեղ պարանահիւս երկու ոլորումներով: Քառանկիւնու կեղրոնի բուն ճակատագրողը կարուած է կազմի ժամանակ. Ծնացել է միայն խարխուր, երկու հակադիր և հորիզոնական պառկեցրած եռատերևներից, միջին թերթը երկար, թերթերի միացման տեղում կարմիր գնդակներով: Անկիւնների կոկոնանման զարդերը դարձեալ եռատերևներ են, միջին թերթը կլոր, իսկ ներքինները պարսկական նշատեսակներ: Թերթերի միացման տեղում երկու կողմից մի մի կարմիր գնդակ:

Գ-ը տալիս է գծագրական աւելի նորութիւններ, քան ինչ վերև տեսանք. բաց ի դրանից՝ տեխնիկայի կողմից սա, ինչպէս խաչագլուխ եզերագրողը, աւելի բարձր է, քան Մատթէոսի պատկերի զարդագրութիւնը: Այստեղ մակերևոյթը անփայլ ոսկի է և ոչ ժանդագոյն պղինձ, և գոյների համեմատական պայծառութիւն և ձոխութիւն է նկատուում, քան այնտեղ: Բայց այստեղ ևս մեղ համար արժէքաւորը այնքան գեղարուեստական կողմը չէ, այլ մանրանկարչական որոշ մոտիւնների գործածութիւնը, որոնք այս արուեստի ծագման հայրենիքն են մատնանշում՝ արևելքը: Այսպէս են տառի ներքին վերջաւորութեան Տ-աձևը, խաչի շուրջը բոլորող արտաքին հանգոյցները, որոնք կրկնուած են նաև Գ-ի բոլորակի վերին կամարի վրայ, զոյգ օղակները Գ-ի բոլորակի վերին կեղրոնում, որոնք բաժնուած են իրարից գոյզ կարմիր գնդակներով: Նոյն օղակները կրկնուած են նաև բոլորակից դէպ ի աջ գնացող մասնիկի ձողի վերայ: Բայց արևելեան ծագման ակնյայտնի ապացոյցը ծաղուտի շարժ հրեշտակն է՝ աւետարանչի նշանակը (symbole): Նա հագել է կարմիր պարեգօտ, որ երևում է բազուկներից և ուսերից՝ կրծքի մի մասով: Դորա վերայից կարճ, մինչև արմուկները հասնող թևերով կապոյտ վերնագգեստ: Պարեգօտի ստուերներն արտայայտուած են աւելի բաց կապոյտով, իսկ վերնագգեստինը աւելի մոյզ կարմրով: Երկու ձեռքով կրծքին բռնել է կարմիր կազմով ակնազարդ աւետարան: Թւերի վերին մասը սև է, իսկ մարմնին մօտ մասը ձիշղ ներքնազգեստի գունով և ստուերներով: Հրեշտակի լուսոյ պսակը (nimbus) ոսկի չէ, այլ պարզ, դեղնաւուն մի գոյն:

Եզերագրողն էլ հետաքրքրական է իւր մոտիւններով: Արմաւենիկից և եռատերևից զատ, նրանց ցողունների ոլորապտոյտ հիւսուածքներից կազմուած են սրտաձև կամ ձուաձև պատկերներ պատուանդանի վերայ. սորա գլխի եռատերևի վերին թերթը դարձեալ սրտաձև է, թէև անկիւններում պահուած են կարմիր գնդակները: Եռատերևի գլխի զարդը սեղմած քառակուսու վերայ ձուաձևների կողովանման հիւսուածք է՝ ձուաձևներն իրար և սեղմած քառակուսու մէջ անցկացրած: Նրանից բարձր փակագծի նմանութիւն բերող երկու զարդեր մէջք մէջքի են կպցրած, մի մտուլ, որ գործադրուած է հին պարսկական արուեստի մէջ և Մայր Հայաստանի մանրանկարչութեան բնորոշող երևոյթ-

ներից մէկն է: Սորա գլխին մի բարդ հանգուց է կազմուած, աւելի բարձր մի չքմշակուած եռատերև և ապա խաչը: ԺԲ. և ԺԳ. դարերում խաչի այս ձեւը շատ գործածական է, բաց հնութիւնից է գալիս կեդրոնում և այնտեղից խաչաձեւ գծերով իրար կապուած կարմիր գնդակները, որ մեր պատկերի մէջ աւելի սեւ է: Ենդաւոր գնդակներն՝ առ հասարակ խաչքարերի և ճարտարապետական զարդարանքների մէջ՝ քանդակուած իրար կտրուղ և ոլորապտոյտ գծերի կազմուած ձուածկների կամ բոլորակների մէջ, յատուկ են Ե. դարու մեր վանքերին, յամենայն դէպս Ժ. դարուց առաջ:



Քարգմ. Աւես. — Ծնունդ Փրկչին (Մանրանկար)

15 ա. « Ծնունդ Փրկչին » է ըստ վերնագրին: Այրի մէջ կէս պառկած կէս նստած է Մարիամ. կողքին ըսպիտակ խանձարուրով մանուկ Յիսուս, ոսկի լուսոյ պսակ գլխին, վերան երեք սպիտակ և նուրբ գծերով խաչ ձեւացրած: Յիսուս սովորական նորածին չէ, այլ աչքերի մէջ և դէմքին խելահասութիւն ու լրջմտութիւն է արտայայտուած: Երկու կենդանիներ զուկնեքը մեկնել են դէպ ի մուրքը: Մուրքի գլխին՝ երկնքում կանգնած է աստղը, ճառագայթներն ուղղուած դէպ ի մանուկը Մարիամ հագել է կապոյտ ներքնազգեստ. տակը ձգուած է կարմիր ու գծերով ներքնոց: Այս տեսարանը այրի մէջն է. իսկ դրանք կանգնած են երեք մոզերը արբայական թագով և զգեստով: Նոցանից առաջինը աւանդութեան համաձայն ծեր է, երկրորդը երիտասարդ, իսկ երրորդը պատանի: Ծերունին հագել է երկար, մինչև ոտները հասնող կանաչ ներքնազգեստ և վերան ձգել է գորշ, ծալքերն ու ստուերները սպիտակով արտայայտած ծիրանի վերարկու: Երկրորդը հագել է կարմիր ներքնազգեստ նոյնպէս երկար, կլինեմնագոյն վերարկուով. երրորդի ծիրանին կանաչ է, ծալքերն սպիտակաւուն գծերով և միայն կիսով չափ է երեւում: Վերևից երկու հրեշտակ « Փառք ի բարձունս » են երգում, թևերն իրենց վերնազգեստի տակ ծածկուած, որպէս ականածութեան նշան, իսկ երրորդը ձեռքը մեկնած

խօսելու շարժումով՝ հովիւներին աւետում է Փրկչի ծնունդը: Երկու ոչխար հօտն են ներկայացնում: Ներքևից Յովսէփի կռթնել է աջ թևի վրայ, որ յենած է ծնկան և ընկզմած է խորին մտածման և սքանչացման մէջ: Գորշ մազերով ծերունի է նա և փաթաթուած է ամբողջ մարմնով բաց ի գլխից և ոտներից վերարկուի մէջ: Աջ անկիւնում մի կլին մերկ բազուկներով լուսացնում է մանուկ Յիսուսին պատուանդանով կոնքի մէջ, իսկ մի ուրիշը սափուրով ջուր է լցնում մանկան վերայ: Առաջինը փաթաթուած է սաւանի մէջ և գլխին կլոր ձեւով թաշկինակ ունի կապած, աշխատանքի ժամանակ կանանց, յատկապէս աղջիկների թաշկինակ կապելու ձեւը, իսկ միւսը վերից վար հագել է կապոյտ, ծալքերն ու ստուերները սպիտակ ձեւացրած. երկար զգեստ:

Այս տեսարանը կայ և Եսայի Նչեցու Աստուածաշնչի մէջ, (N° 182, 445 ա), թէև ծննդեան

պատկերի ամբողջ կազմութիւնը տարբեր է Թարգմանչաց աւետարանի նոյն պատկերից : Աստուածաշնչի մէջ մանուկը կոնքի մէջ չէ, այլ լողացնող կնոջ գրկում, որ աջով բռնել է մանուկը ; իսկ ձախով ջրի տաքութիւնն է փորձում : Զուր ածող կինը նոյն իսկ թագազարդ է : Երկու կանանց այս տեսարանը կայ և յոյն ձեռագրերի մէջ և համաձայն է անվաներ գրութեանց (\*) :

Բոլոր անձնատրուութիւններն էլ լուսոյ պսակ ունին՝ պղնձի խոշոր փոշուց, որ կանաչաւուն՝ ժանգի գոյն է ստացել : Բայց Մարիամի և Յիսուս մանկան պսակները մաքուր ոսկուց և քիչ երնուար : Տակի (dessous) գոյնն այտեղ էլ կանաչն է, անքան կոշտ, որ մագաղաթի միւս երեսից նկատուում է :

Թարգմանչաց աւետարանը իւր պատկերագրութեամբ, լուսանցազարդերով, զարդագրերով արեւելեան մոտիւների ուսումնասիրութեան և համամատութեան անբաւ նիւթ է տալիս : Արուեստի կատարելութեան տեսակետով, ինչպէս նկատեցինք, թոյլ է . բայց այդ հանդամանքը չէ խանդարում այս ձեռագիրը Մայր-Աթուի մատենադարանի թանկագին զարդերից մէկը համարելու : Նորա նշանակութիւնը առաւել բարձրանում է, որ եղել է Դոփեանց իշխանական տան աւետարանը և իւր յիշատակարաններով լոյս է սփռում Դոփեանց Գրիգոր իշխանի և նորա տոհմական կալուածների մասին :

Բ.

Բ Ա Գ Ն Ա Յ Ի Ի Ա Ի Տ Ա Ր Ա Ն Ը

N° 230 (Կարիսնեան 223)

Այս աւետարանն էլ իւր անունն ստացել է Բագնայրի Ս. Աստուածածին վանքից և մէկն է մեր մատենադարանի կարևոր ձեռագրներից : Անիից և առ հասարակ Բագրատունեաց շրջանից մեր ձեռքը հասած ձեռագրերը շատ հազուադիւտ են . դոցանից մէկն է Բագնայրի աւետարանը, որ Սպասալարների շրջանի գործ է : Աւետարանը գրուած է մեծադիր 42×29 մագաղաթի վերայ խոշոր երկաթագրով : Գրիչն անյայտ է, բայց ստացողն է « Պատրոն Խաւուս որդի ամիր Սարգսի, և ամուսին իւր Խաթուն » 99 բ. որոնք ի յիշատակ իրենց վաղամեռ

(\*) St. Beissel. Gesch. der Evangelienbücher, 55. Freiburg i/B 1906.

Սասնա որդուն և նորա մօր Խութու խաթունին նուիրել են Բագնայրի Ս. Աստուածածնի վանքին : Խաւուսը « էր եղբայր մաւր կեսառուսաց Հայոց և Վրաց և ամենայն Ափիսագաց բարեպաշտիցն և ավ. դաւրացելոցն մեծին Զաքարիայի և Իւանեի » 297ա, իսկ Խաթունը, աւելի ճիշդ Ամրուխտ խաթունը, 298ա, ազգաւ տաճիկ, երկրորդ կինն էր : Աւետարանի գրութեան ժամանակը չէ նշանակուած, բայց Խաւուսը գրել տուել է Զաքարիայի մահուանից յետոյ, երբ « դեռաւէզն և նորաբողջն սիրեցեալն և մեծացեալն յԱյ. մանդատոր թախուցէս մեծի թագաւորութեանն շահանշահ, յաջորդեալ գաթու թագաւորութեանն հարն իւրոյ », ուրեմն 1212 թուականից յետոյ : Յիշուում է նաև Շահանշահի Զաքարիա որդին, որպէս « թագածին նորինձայ » :

Մենք կարող ենք աւետարանի ծաղման terminus ante quem-ը՝ ամենից ուշ ժամանակն էլ որոշել : Բագնայրի հարաւային դրան մի արձանագրութիւն, գրուած (Զմրուխտ) խաթունի կողմից ՈՀԸ կամ ՈՀԲ թուին, յիշատակում է զարձեալ Սասնայի մահը և ծնողաց անմխիթար վիճակը և այդ առթիւ եղած կալուածական նուիրաբերութիւնը (\*) : Այսպիսով ուրեմն մեր աւետարանի գրութեան և ընծայաբերութեան ժամանակն ընկնում է 1212—1223/9 տարիների մէջ :

Ուրիշ ցուցումներ ևս կան, որոնք հաստատում են այս որոշման մօտաւոր ճշգրտութիւնը : Մեր աւետարանը գրուած և ընծայուած է « ի սուրբ մենաստանին ի Բագնայրն կոչեցեալ վանք, ի տէրութեան տեղւոյն Տն. Գրիգորայ որ Մագիստրոսն ասի, վերադիտողի աթոռոյս Անույ և յաւաջնորդութե. հաւր Սիմօնի » 298 բ : Արդ այս երկու անձնատրուութիւններն էլ յիշուած են յաճախ արձանագրութիւնների մէջ : Ապուղամրի որդի՝ Անիի արքեպիսկոպոս Մագիստրոսը Արշու-Առճիի, Բագնայրի, Անիի Առաքելոց, Մարմաշէնի արձանագրութիւնների մէջ յիշուում է 1233—1213 թուականներին, իսկ Բագնայրի վանահայր Սիմէոնը իւր վանքի արձանագրութիւնների մէջ 1206—1242 թուերին (\*\*):

Վաղամեռ Սասնայի կինն էր Թայիկ թագուհի, « որ է զարմ և շառաւիղ թագաւորացն Հայոց »

(\*) « Երաւ », Այիւանի 116 :  
 (\*\*\*) « Երաւ » եր- 122, 118 եւ 121 : 63, 150, 119, Գրիգոր աբխալիսիոպոսի, իսկ 120, 122, 116, 121, 118, 122 Սիմէոն վանափօր համար :

298 ք : Բագնայրի և Հոսոսի արձանագրութիւնները (\*) պարզում են , որ Թայիկը Ապիրատի որդի Շարապղաշի և Թագուհի կնոջ զուտրն էր , եթէ տարբեր անձնաւորութիւններ չեն նոյնանուն կանայք : Սանայի և Թայիկի որդին էր Խաւազ Բ. կամ փոքր , որ երկու արձանագրութիւն ունի թուղած ՉԺԱ և ՉԺԵ թուականներից (\*\*): Խաւաա

մեծի կամ Ա.ի որդին էր բաց ի վաղամեռ Սանայից և Վասակ , որ յիշուած է մեր աւետարանի մեծ յիշատակարանին մէջ 298 ք :

Աւետարանն ունի կարեւոր , պատմական յիշատակարաններ ա) 29 ա. շեղագրով , մի մասը քերած լինելու պատճառով զժուարընթեռնլի , բ) 99 ք. աւետարանիս ստացողների և ընծայաբերութեան



Բագն. Աւե. — Սկզբնագարդ

մասին յիշատակութեամբ. գ) 297ա.—298 ք. աւետարանի ծագման , ստացման , ժամանակի և տեղի համար ամենակարեւոր յիշատակարանը , որ առաջ կցուած է եղել N° 153 Աստուածաշնչին որպէս պահպանակ , բայց նախկին մատենադարանապետ

Տ. Սահակ վարդապետ Ամատունին հանել և զրել է իւր խական տեղը , մեր աւետարանի վերջում : գ) Խոշոր և հին բոլորգրով 299 ա. մի ուրիշ յիշատակարան « Գէորգեա ներսիսանց և ամուսնո իւրո Մամա Խաթունի » անունով : Այս յիշատակարանը գրուած է « ձեռամբ Ստեփաննոսի Գեղանիս որդւոյս ի Թւաբերութեա . հայկազեան տաւմարիս : ՉԾԷ ամիս . ի հայրապետութե . մերո նահանգիս »

(\*) Անդ. եր. 118—119 եւ 28 :

(\*\*) Անդ. եր. 116 :

Շիրակ գաւառիս հեղի և մարդասիրի ար. Յովհաննիսի որդոյ Ապուղամբի. իշխեցող սեղոյս » : Ե) 299 բ. բոլորգրով, Գրիգոր որդի Անեցի Պարոնի յիշատակարանն է : Սա նորոգել է սուել աւետարանի կազմը . որովհետև Խառնասի « ոսկիով և արծաթով » զարդարած կազմը խախտուած էր և ընկած . Պարոնի եղբայրն է Ասիլ . « որ է առաջնորդ և հիմն քաղաքիս Անոյ . իրաւարար և արդարադատ ամենայն քաղաքին » : Յիշատակարանը գրուած է Սարգիս գրչի ձեռքով Բագնայրի առաջնորդ կամ վանահայր հայր Պաւղոսի ժամանակ : Էջմիածին բերուելու պատմութիւնն անյայտ է :

Պատկերն առնուած է 30 ա. կեղրոնում մի բոլորակ է սև ականթաձև շրջանակով, իսկ ներսը ոսկեգօծ գծերի հիւսուածք կապոյտ մակերևոյթի վերայ : Ականթի շրջանակի մակերևոյթը սև է, իսկ եզերող գծերը դեղնաւուն : Այս բոլորակի երկու կողքից կարմիր շրջանների մէջ մի մի զոյգ՝ կապոյտ և մէջը սպիտակ գծերի հիւսուածք է ոսկի մակերևոյթի վերայ : Բոլորակների անկիւններում մէկ ու մէջ շարուած են  $\frac{1}{4}$  երկու շրջաններից իրար մէջ անցրած կրկնաձևեր և եռատերևներ : Շրջանների գծերը կապոյտ են մէջն սպիտակով, եռատերևների թերթերի շօշափման սեղում կարմիր գնդակներ կան, իսկ ներքին թերթերի կապոյտի վերայ մէջք մէջքի փակադձաձև զարդեր : Շրջանակը կազմուած է քառակուսիների մէջ գրուած չորս չորս ձուածններից, որոնք անկիւնից անկիւն մի տեսակ խաչաձև են կազմում կապոյտ, կանաչ և կարմիր գոյներով փոփոխակի : Զարդի վերին անկիւններում եռատերևներ են թերթերի հանդիպման տեղում երկու կարմիր գնդակներով : Ծակասի զարդը արմաւենիկ է և նրա ցողուններից հիւսուածք :

Ս տառը կազմուած է գծերի հիւսուածքից, վարդեակներից (rosettes) և ներքևում մի մի եռատերևից : Ս-ի կողերի վերայ վերևում և ներքևում անցրած է մի մի օղակ, իսկ կամարի ծայրերին փակագծաձև զարդ : Մէջք մէջքի փակագծապարզ կրկնուած է և լուսանցազարդի մէջ, կեղրոնական մասում : Եզերազարդի կամ լուսանցազարդի մոտիւներն են եռատերևներ, արմաւենիկներ և խաչ, թևերը հիւսուածքներով, իսկ գլխին լուսնեակ :

Չեռագիրը աւետարանների սկզբում հեղինակների պատկերները չէ ունեցել . հաւանօրէն նրանք եղել են աւետարանների սկզբում խորանազարդերի հետ : Այս աւետարանն մասամբ նմանութիւններ

ունի Քարգմանչաց Աւետարանին հետ, բայց արւեստի տեխնիկայի կողմից շատ աւելի բարձր է : Բուն Հայաստանի կամ զուտ արեւելեան արուեստի ուսումնասիրութեան համար, սա ևս մի կարևոր յիշատակարան է :

Գ.

ԱՐՔԱՅԱԿԱՆ ՃԱՇՈՑ

(N° 892)

Ճաշոցին մեծութիւնն է 33×25 սմ. երկսիւն . իւրաքանչիւրը 25  $\frac{1}{2}$  × 8 սմ. գրուած ընտիր մազազաթի վրայ բոլորգրով, տեղն ու գրիչը անյայտ : Սակայն կարծում ենք, որ ձեռագիրը գրուած և նկարուած է Ախուրի վանքում Յովհաննէս արքայեղբոր զպրոցում : Գրի և պատկերների նմանութիւնը Յովհաննէս արքայեղբոր աւետարանին հետ մեր մէջ զարթեցնում է այս մտքը, որը սակայն կարօտ է դեռ ևս ստուգութեան և հաստատութեան : Գրուած է ՉԼԵ (1286) թուին « հրամանաւ աճասէր և ամենմաստ բարեպաշտ և հանճարեղ պարոնին Հեթմոյ որդւոյ քսապսակ սբ. արքային Լեւոնի » : Մի այլ թուական կայ և 6 բ, Սահակ Պարթևի պատկերով տակ, « թվին Հայոց ՉԼԵ » տարբեր ընագրի և պատկերի տակ եղած բացատրութեան գրից . գուցէ այդ թուականի գրիչը փոխանակ յիշատակարանի ՉԼԵ, կարգացել է ՉԼԵ, շփոթելով Ե և Է տառերը, որ այս ձեռագրի մէջ բաւական նման են : Ճաշոցի վերջում կայ ընդարձակ յիշատակարան, որ վերը բերուած տեղեկութիւններից զատ՝ տալիս է Ռուբինեանց ծագման և զարգացման պատմութիւնը մինչև Լեւոն Գ. : Այս թանկագին յիշատակարանը տարաբաղաբար կիսատ է, վերջին թերթն ինկած լինելուն պատճառով . յիշատակարանը տպուած է « Արարատի » մէջ 1870, եր. 355 և Ա. Տէր Միքայէլեանի Սամուէլ Անեցու ժամանակագրութեան հետ՝ առանց նկատելու այս թերութիւնը :

Արքայական այս Ճաշոցը կիլիկեան շրջանի հայ մանրանկարչական արուեստի ամենափառաւոր յիշատակարաններից մէկն է, թէ արուեստի կատարելութեամբ ու ճոխութեամբ և թէ բազմազան նիւթերով . պատկերազրութիւնը, զարդանկարչութիւնը, ծաղկազրբերը, թռչնազրբերն ու կենդանազրբերը գերազանցուած են մէկը միւսից իրենց նրբութեամբ, գեղեցկութեամբ և գոյների պայծառութեամբ : Մայր Աթոռի մասենազարանի գեղարուեստական գլուխ



Ար. ձառոց. — Ս. Սահակ Պարթև (մանրանկար)

գործոցները մէկն է այս ձեռագիրը և Լեւոն Բ.ի թագաւորութեան մանրանկարչական գույէ ամենակատարեալ մնացորդը: Երիտասարդ գահաժառանգը՝ Հեթում Բ., ոչինչ չէ խնայել գեղարուեստական մի սքանչելիք կերտելու համար: Ինչքան ցաւ կը լինի. եթէ չըջաջողուի մեզ դանել այս տաղանդաւոր համարձակ, իւր շարժումների մէջ ազատ, ուրախ և իւր ստեղծագործութիւնների մէջ կենսալիր նկարչի անունը: Անշուշտ շատ պատկերների և տեսարանների համար ունեցել է նա օրինակ և որոշ անհրական ձեւեր, բայց շատ տեղ էլ ինքնուրոյն է, անկախ ստեղծագործող: Մանր տեսարանների մէջ, դէմքերը, կեցուածքը (pose), հոգեբանական վիճակը, շարժումները այնքան բնական են, արտայայտիչ և

կենդանի, որ արժանի են դասական շրջանի լուսագոյն ներկայացուցիչների վրձինին: Այդ ինքնուրոյնութիւնն աւելի պարզ է նկատուում գարդազրերի մէջ. անատոմիական ճշգրտութեան, աշխոյժ և կենդանի ձեւակերպութիւնների հետ, նկատելի է և որոշ չափով հումոր: Այստեղ սպուած պատկերներն աւուուած են 6բ. 7 ա. և 221 ա. երեսներէց:

Սահակ Պարթևի պատկերն է 6բ 25 սմ. երկարութեամբ և 17 սմ. լայնութեամբ, հին յունական ձեւով զգեստաւորուած և բաց գլխով: Հէնց այս պատկերը իւր շրջանակով մանրանկարչական մի գեղեցիկ գործ է, տարաբախտաբար այստեղ ոչ այնչափ յաջող նկարուած: Իսկականի մէջ ևս եղծուած մասեր կան, ինչպէս քթի ձախ կողմը՝


դէմքի վրայ, կամարի աջ անկիւնը և շրջանակի ներքին ժապաւէնը: Ս. Սահակ երկնագոյն կապոյտ շապիկ ունի հագած, երեւում է միայն ծնկներից ցած, ստուերները սպիտակաւուն, պատկերի աջ կողմից նուրբ, ոսկեգծերով շարդարած: Ընդհանրապէս այս նկարչին յատուկ է կապոյտ զգեստին ոսկի գծերով ազնիւ և ակնահաճոյ ստուերներ և ծալքեր տալ: Եապկի վերայից հագել է կարմիր, ոսկէ եզրներով էպիգրամատիոն (\*), բազպանները նոյնպէս կարմիր և ոսկով եզերուած: Փորուրբը կազմուած զոյգ, իրար կից կարմիր ժապաւէններից ոսկի եզրներով և ծոպերով: Եուրջառը կամ նափորուրը մանիշակագոյն է, ծալքերը ազնիւ ոսկեգծով ձեւացրած, յունական ձևով կարճ՝ մինչև ձկները Ուսերին ձգած և ձախ թևի տակից հանած եմփորոնը զորշ է և սև խաչերով ուսերի վերայ, մի խաչ էլ երևում է ձախ թևի տակից հանած մասի վերայ: Զախ ձեռքով բռնել է ոսկեկող աւետարան՝ անեղնագործ և կարմիր ծոպեր ունեցող թաշկինակով Աջով խաչակնքում է յունական կամ հայկական ձևով: Մագերն ու միրուքը սև են. միրուքը երկար և բիւզանդականի նման եռանկիւնաձև սուր: Դէմքը լրջութիւն է արտայայտում և կամքի հաստատութիւն: Ոտքերին սև և նուրբ կաշուց կոշիկներ ունի: Կանգնած է մանրանկարչական դաշտանկարի վերայ: Պատկերը նկարուած է շրջանակի ներքին կողերին յեցուած, երկու կիսասիւնների վերայ հանգչող արաբական, ազնիւ և համաչափ կամարի տակ, խարիսխներն ու խոյակները կլոր են, ներքին մասը զամբիւղաձև, վերինը շրջաձև, բայց առանց մանրամասնութիւնների և քանդակների, երկու բարձիկների մէջ դրուած: Խոյակների վերի բարձր կամ տախտակը ունի ատամնաձև զարդարանք ներքեւից, իսկ հարթութեան վերայ սպիտակաւուն բոլորակներ կամ գնդակներ: Սիւնների երկարութեամբ խարիսխներից մինչև խոյակների զագաթը ծածկած է մանրանկարչական զարդարանքներով, ոճաւորած արմաւենիկը խոյակների շուրջ գեղեցիկ շրջաձև է կազմում, միջին սրբումը նշատեսակ վերջաւորութեամբ կամարը ձեւացնող երկր՝ մոյգ-կանաչ մակերեւութի վրայ՝ գիրլանդաձև, երեք կէտերով իրար կապուած նուրբ գծադարձեր են, եզերուած ոսկի, կարմիր,

\*) Մինչև ձկները հասնող հագուստ. գուցէ եւ կոմեռլինի, մի մասն է միայն երեւում:

դեղին, կարմիր համընթաց գծերով: Կամարների անկիւնները լցուած են բուսական, երփներանգ զարդերով:

Այս բոլորն առնուած է մի գեղեցիկ և ինքնատեսակ շրջանակի մէջ, որի ներքին երկրը կապոյտ մակերեւութի վրայ իրար հետ կապուած Տ-աձեւ գծադարձեր են, իսկ արտաքինը կարմիր մակերեւութի վրայ կամարների շղթայ: Այս երկու երկրների մէջ շարուած են ութանկիւնանի՝ ութերորդական շրջաններից կազմուած բոլորակներ, շօշափման կէտերում իրար հագցրած: Ամէն մի ութերորդական կամարի տակ՝ բոլորակի ներսից՝ ձեւացրած է ելլնդաւոր ոսկեգոծ պարսկական մի նշատեսակ (բաղամբու) արմատներն իրար կպած: Նշատեսակների իրար կպած անկիւններից ուղղահայեաց և հորիզոնական ոսկեգծերը բոլորակի կեղրոնում կազմում են ելնդաւոր ոսկեպատ մի խաչ, թևերն աւելի բարձր համեմատաբար: Խաչի ճառագայթների փոխարէն՝ չորս անկիւններում կազմուած են մի մի եռատերև, միջին տերևները խաչի թևերի անկիւններում, իսկ երկթերթը արմատով դէպ ի բոլորակի եզերագիծը, նշատեսակների սուր ծայրերի մէջ: Եռատերևները երփներանգ են՝ կանաչ, կապոյտ, կարմիր, մանիշակագոյն իրենց անցման երանգներով (nuance): Երկրաչափական ձևերից կազմուած այս զարդը հին է և արևելեան, հաւանօրէն գորգագործութիւնից առնուած մանրանկարչական արուեստի մէջ. նշատեսակներն մինչև այժմ գորգագործութեան սիրելի մոտիւններից մէկն է: Սորան շատ մօտ մի մոտիւ գործադրուած է ասուրա-բաբելոնական արուեստի մէջ:

Շրջանակի արտաքին զարդերը ոճաւորած արմաւենիկներ են կապոյտ, կանաչ, մանիշակագոյն երանգներով և միշտ եզերուած ոսկի գծով: Շրջանակի վերին կողի կեղրոնում կարճ պատուանդանի վերայ երկու արմաւենիկ է ձեւացրած և սրանց մէջ ելնդաւոր մի եռատերև, իսկ եռատերևի գլխին բուսազարդ: Եռատերևներ, լուսոյ պսակներ, նշատեսակներ նկարիչը սիրում է ելնդաւոր ձեւացնել և այդ շատ յաճախ. նախ մի մաճուցիկ խառնուածքով ձևն է կազմած և ապա ոսկով պատում: Ռուբինեան շրջանի լաւագոյն ձեւագրերի մէջ կրկնուած է այդ երևոյթը, բայց ոչ այնքան սիրուած՝ ինչպէս այստեղ: Մանրանկարչական այդ եղանակն աւելի բարդ էր և իւր առանձին հրապոյցն ու գեղեցիկութիւնն ունէր: Կեղրոնական այս ձակատաղարդի երկու



Արք. ձառոց. — Սկզբնագարդ

կողմերից ոճաւորած բոյսերից մի սքանչելի շաւր է կազմուած և վերաները մի մի փոքրիկ կտոցաճարող թուշուն նկարած : Այս բուսական զարդի մէջ ևս կրկնուած են արմաւենիկի և եռատերևի մոտիւնները : Անկիւններում կրկնուած է կեղրոնական ճակատազարդը , այսինքն երկու արմաւենիկների մէջ դրուած էնդաւոր եռատերևը :

Մեր այս մի քանի խօսքով տուած չոր նկարագրութիւնը երբէք չէ կարող լրիւ գաղափար տալ երկներանգ պէսպիսութեան , գեղեցիկ դասաւորութեան , հիւթալի կենդանութեան և գոյների պայծառութեան մասին , ինչ որ տալիս է բնագիրը : Ընդհանրապէս աչքի վայելած գեղեցկութիւնը դժուար

է թանձրացնել գրչով , որչափ ևս առաւել արւելեան գորգերի բազմատեսակ ու մանր երանգաւորութիւնը : Դուք տեսէք թէ հէնց այս միագոյն պատկերի մէջ , շրջանակի արտաքին ծաղկազարդերն ու բուսազարդերը որչափ շնորհալիութիւն ունին , ինչպիսի ազատութեամբ է շարժուել նկարչի վրձինը : Մօտաւոր գաղափար կարող է տալ մի միայն նոյնատիպ , բազմագոյն տպագրութիւնը : Այս ձեռագրից և յատկապէս այս պատկերից են առնուած Ս. Հայրապետի անդրանիկ կոնդակի զարդերից շատերը (\*):

(\*) Տես մեր յօդուածը՝ « Ս. Հայրապետի անդրանիկ կոնդակի զարդանկարչութիւնը » , Արարատ , 1910 , փետ .

7 ա. Ճաշոցի սկզբնաւորութեան զարդն է. ճակատին մի քառանկիւնի տախտակ, երկարութիւնը 17 սմ. և 2 մ. մ., լայնութիւնը 10 սմ. աջից լուսանցազարդ ամբողջ երեսի երկարութեամբ, 29 սմ. երկարութեամբ իսկ ձախից Բ տառը ոսկի գծերի հիւսուածքով: Ճակատի տախտակը զոյգ զոյգ քառակուսիներ են, որոնց մէջ՝ անկիւններից անկիւն տարուած կիսաշրջաններով, բացուածքը դէպ ի դուրս, կազմուած են իրար հազցրած ձուածններ, իսկ ձուածնների մէջ եռատերևներ, ցօղուններից կեղրոնում խաչասող կազմած: Ձուածնների կիսաշրջանները ընդհատուած են կեղրոնի գնդակի մօտ և դարձեալ շարունակուած. նմանելով երկու, իրար հազցրած, խաչանման ութաձևերի: Եռատերև ցօղունի խաչասողը կազմուած է նոյն ձևով, միայն եռատերևների կազմ անկիւններն աւելի սուր: Քառակուսիներն իրարուց բաժանող գծերի վերայ. քառակուսիների անկիւններում կազմուած են ելնդաւոր խաչեր ոսկով պատած, իսկ խաչերի մէջ մի մի ելնդաւոր, դարձեալ ոսկով պատած գնդակ, որ գծերով միանում է խաչերի թևերի հետ: Քառակուսիների ֆոնը ոսկի է. ձուածնները կազմուած են կապոյտ գունով, եզերուած երկու կողմից նուրբ, սպիտակ գծով, ձուածնների հանդիպման արտաքին անկիւններում կամ արմաւենիկների փոսիկների մէջ երեք սպիտակ կէտեր եռանկիւնաձև դասաւորուած՝ ինչպէս բաժակաձև ծաղիկի փոսի մէջ սերմի սպիտակ գլուխները: Եռատերևների ներքին թերթերը կարմիր են կամ մանիշակագոյն, վերինը կապոյտ կամ կանաչ, իւրաքանչիւրը արմատին մօտ ունենալով սպիտակ բծեր և նրանց շուրջը աւելի բաց կարմիր, մանիշակագոյն կապոյտ կամ կանաչ երանգաւորութիւն՝ նայելով եռատերևի գոյնին: Եռատերևների հանդիպման կէտերում մի մի գնդակ այդ չորս գոյներից մէկն ու մէկով: Այս բոլորն առնուած է տախտակաձև մի շրջանակի մէջ, որ ընդհանուր շրջանակի ներքին երիզն է կազմում: Տախտակի գոյնը մոյգ, սևին մօտեցող, կապոյտն է, վերան նուրբ դեղնաւուն գծով Տ-երի մի շղթայ, միացման կէտում նոյն երեք, եռանկիւն կազմող փոքրիկ կէտերով: Երջանակի արտաքին երիզը դարձեալ մի աւելի լայն տախտակ է ոսկէ զիկզակ եռանկիւններ կազմող գծերով, իսկ դրանց մէջը կապոյտ, կարմիր, կանաչ, մանիշակագոյն ծաղիկներ, նեղ անկիւնների կամ արմատների մօտ՝ միշտ հիմնական գոյնի աւելի մոյգ և ապա հետոհետէ աւելի բաց երանգաւորութեամբ.

ծաղիկների բացուածքի՝ եզրները գծուած են սպիտակ կամ դեղնաւուն գծերով: Երջանակը՝ ներքին մասում կազմում է մի այլ փոքր՝ ներքին կողմը բաց, քառանկիւնաձև խորան, տակը նկարուած թագազարդ. անմօրուս մարդու անդրի: Նա հագել է կապոյտ պարեգօտ, վերան ձգել կապոյտ ծիրանի, կոճկուած կրծքի վերայ (fibula), աջով օրհնում է, իսկ ձախով բռնել է մագաղաթի թերթ: Աջ թևի բազկակալը կանաչ է և եզերուած ոսկով: Թագը ոսկի է և ելնդաւոր. ճակատը եռանկիւնաձև բարձր. քան կողքերը: Մագերը շագանակագոյն են և կարծուած: Հաւածօրէն Սողոմոնն է, որովհետև Ճաշոցի սկիզբ է Առակ Ժ. 31—ԺԱ. 11: Անդրիի գլխին եռամասնեայ և սուր վերջաւորութեամբ կամար է կազմուած կանաչ արմաւենիկներից, իսկ անկիւնները ծածկուած են իրար մէջ անցրած երկու երկու սրտաձևից, վերինը կապոյտ եզերուած սպիտակ գծով, իսկ ներքինը ոսկի ելնդաւոր կողերով: Երջանակի արտաքին կողերը դարձարուած են արմաւենիկներով, բուսական դարդերով և ծաղիկներով: Ճակատի կեղրոնում դրուած է ոսկէ մի անօթ Տ-աձև ունկներով. մէջը ծաղիկ, կողքերին երկու տերև: Որպէս խարխիս այդ անօթի աջ և ձախ կողմից կապոյտ գունով մի մի արմաւենիկ է եզերուած նախ սպիտակով և ապա ոսկով, վերաները մի մի թռչուն դէմ առ դէմ, գլուխները դարձրած դէպ ի անօթի մէջ դրուած ծաղիկը: Այս պատկերը խորհրդանշէ է (symbolique) և կենդանութեան աղբիւր է ձևացնում: Ապա երկու կողմից արմաւենիկից, մի բոյսից և եռատերևից մի Հուլիանի գարդ է կազմուած. անկիւններում մի մի ձուատերև, ներքին թերթերը կապոյտ, վերինը մանիշակագոյն ոսկով շրջապատուած: Մեծ շրջանակի ներքին անկիւններում, իսկ Սողոմոնի շրջանակի չորս անկիւններում, երկու ձուածն հազցրած է իրար մէջ և խաչ կազմած:

Լուսանցազարդը կազմուած է արմաւենիկներից, բոյսերից և ծաղիկներից, որոնց ցօղունները ձևացնում են սրտաձևեր. ձուածններ, Հուլիանի մէջը պարսկական նշատեսակներով, երբեմն եռատերևներ, երփներանգ և ազնիւ գծերով: Բաց տեղերը ծածկուած են ոսկով: Վերից վար այս եզերագարդի մէջ այլ և այլ դիրքերով նստած, կանգնած կամ չոքած վեց պատկերներ կան. կարծում ենք Լևոն Գ.ն է իւր զաւակներով, որովհետև ոչ մի կապ չունին այս պատկերները բովանդակութեան

հետ : Լուսանցազարդի գագաթին արքայական զգեստով բազմած է գորշ մագերով մի թագաւոր : Աջ ձեռքը դրել է կողքին , իսկ ձախով՝ խաչազարդ, ոսկի երկրագունդ է բռնել . հագել է կանաչ ներքնազգեստ և թիկունքին ձգել կարմիր ծիրանի , որի փեշերը աջ թևի տակից բերած և ծածկած է կրծքի ներքին մասը աջ կողմից մինչև ոտը . ծիրանու մուս փեշը ձախ ծնկան վերայից ցած է ընկած երկու փեշերի բացուածքից երևում է ձախ ծունկը և



Արք. ձաւոգ— Ս. Աստուածամին

ներքնազգեստի մի մասը : Երկու թեւերն էլ ազատ են , ծիրանիով ծածկուած չեն : Պարանոցի շուրջը սպիտակ կտոր է (matière) : Միրուքը քիչ երկայն է և արդէն սպիտակած , մագերը նոյնպէս և կարծ : Գլխին ունի եղնաւոր ոսկի թագ , ձակատն աւելի բարձր և եռանկիւնաձև : Ոտքերին կարմիր կոշիկներ ունի :

Դրանից ներքև բազմած է մի երիտասարդ արքայակերպ : Նա հագել է կապոյտ ազնիւ ներքնազգեստ , աջը դրել է կողքին , ինչպէս վերինը , իսկ ձախով բռնել է դարձեալ խաչազարդ , բայց

կարմիր երկրագունդ : Թեւերն ու կուրծքը չեն փաթաթուած ծիրանիով , այլ նախընթացի ձևով : Բազմած է աթոռի և երկար բարձի (մութաքի) վրայ , բայց հաղիւ նշմարելի : Միրուքը կարճ և կարծես նոր բուսած , իսկ մագերը ականջների մօտից փոքր ինչ երկար :

Երրորդը մի անմօրուս պատանի է , ծունկ չուքած երեսը դէպ ի աջ և թոււմ է , թէ երկու ձեռքով բռնել է վերոյիշեալ ձևի մի թագ : Ներքնազգեստը մոյզ կանաչաւուն է , իսկ վերնազգեստը մոյզ մանիշակագոյն , որ պատել է ամբողջ մարմինը , բաց ի աջ թևից : Գլխին ոչինչ չունի :

Չորրորդը կանգնած պատանի է , բաց գլխով , հագել է կապոյտ ներքնազգեստ , որ կողքերից և առաջից ձեղք ունի և փեշերը քիչ բացուել են : Ուտերից մինչև ձեռքերը նեղ և սպիտակ գունի թևնոց ունի հագած (շապլիկն է) , աջովը բռնել է պարանոցի մօտ երկու կողմից ծիրանու վերայ ամրացրած ժապաւէնը , իսկ ձախով սկիհանման մի բաց , ոսկի անօթ : Վերից վար թիկունքին ձգուած է կարմիր ծիրանի , իսկ ոտքերին դարձեալ կարմիր կոշիկներ ունի :

Հինգերորդը չոքած է , երեսը դէպ ի ձախ : Հագել է կարմիր ներքնազգեստ և վերան կանաչաւուն վերնազգեստ : Երկու ձեռքով բռնել է ափսի ձեւի մի ոսկի սափորիկ :

Վեցերորդը նստած է , ինչպէս վերին երկու դէմքերը , աջը կողքին , իսկ ձախով մի ինչ որ բան բռնած , որ եղծուած լինելու պատճառով չի երևում , հագել է կանաչ ներքնազգեստ և վերան ձգել կարմիր ծիրանի :

229 ա. Աստուածամինն է , աղօթաւորի դիրքով , Յիսուս մանուկ գրկին , պատկերի ֆոնը ծաղկազարդ ոսկու վերայ . ուշադրութեան արժանի են սլաքանման կանաչ զարդերը՝ որոնք կրկնուած են և նշեցու Աստուածաշնչի մէջ : Պատկերի երկարութիւնը ինչ չափով այտեղ է , 15 սմ. է . մի մասն է միայն նկարուած : Աստուածամինը հագել է կապոյտ ոսկեգծերով զարդարուած ներքնազգեստ , ազնիւ ծալքերը աւելի մոյզ կապոյտով արտայայտուած : Թեւերը բազուկների մօտ սեղմուած է և ոսկի ժապաւէնով է վերջանում , քարերով զարդարուած կամ ստեղնագործուած : Գլխանոցի հետ վերան ձգել է մոյզ մանիշակագոյն , գեղեցիկ ծալքերով և ոսկի գծերով վերնազգեստ : Ձակատին ունի մի աստղ : Դէմքը կլոր և այտերը բնական կարմրութեամբ : Բերանը, քիթը ,

աչքերն ու ունքերը համաչափ . դէմքի ստուերներն արտայայտուած են կանաչաւուն գոյնով, ինչպէս բիւզանդական մանրանկարչութեան մէջ սովորական էր : Ուրբերին ունի կարմիր կօշիկներ :

Յիսուս մանուկ նկարուած է ոսկի ֆոնով բարձրակի մէջ . բաց, հոռմայեցու ճաղատ ծակատով : Նիմբուսի վերայ կարմիր խաչ : Յիսուս հագել է սպիտակ ազնիւ կտորից կապայ (tunica) և վերան ձգել է ձախ ուսից դարձեալ սպիտակ կտորից վերնազգեստ (toga) . երկուսն էլ ոսկի, ազնիւ գծերով զարդարած : Յիսուս աջով խաչակնքում է . Աստուածածնի կեցուածքը, մանկան դէմքի արտայայտութիւնը բարձր գեղարուեստական է : Սոյն պատկերի տակը նստած է Մովսէս, սանդալը հագնելու դիրքով և պատանու դէմքով : Հագած է կապոյտ, լայն թեւերով կապայ և կարմիր վերնազգեստ : Պատկերը եղծուած լինելու պատճառով, այստեղ չէ նկարուած :

Դ.

## ՀԵԹՈՒՄ Բ.Ի ԱՍՏՈՒԱՆՈՒՆԵՆԸ

(N° 157)

Աստուածաշնչի մեծութիւնն է  $22\frac{1}{2} \times 16$  սմ., երկսիւն, գրուած ընտիր և նուրբ մագաղաթի վրայ, մաքուր բոլորագրով, սովորական գլխատաւերն ու Աստուած բառը ոսկեգիր, Ստեփաննոս գրչի ձեռքով 47բ, 81ա, 30Յ ա և ն : Ստացողն է « Բարեպաշտ արքայն Հայոց Հեթում », գրուած է ՁԻԴ—1298 թուին 47բ, 575բ, 576ա և ն : Աստուածաշունչը զարդարուած է մանրազարդերով և նկարներով, առաջինները մեծ մասամբ վերջացրած, իսկ երկրորդների նախագիծը (կոնտուրը) քաշած՝ մարգարէների անդրինները միայն գունաւորած վերջացրած են, որով և գաղափար կարելի է կազմել այս ձեռագրի պատկերագրութեան մասին : Աւետարանիչներից Մատթէոսի, Մարկոսի և Յովհաննու նախագիծն է պատրաստ, Յովհաննէս նոյն իսկ փոքր ինչ գունաւորած . Մարկոսին թելադրում է Պետրոս առաքեալը աւանդութեան համաձայն, իսկ Պրոքորոնին՝ Յովհաննէս աւետարանիչ : Մեր ձեռագրերի մէջ վերջինը շատ սովորական է, իսկ Պետրոսի թելադրութիւնը հազուադիւս, հաւանորէն ծագումով արեւմտեան : Յամենայն դէպս Բայմնի շրջանում՝ ոչ ուշ քան Թ—Ժ դարում գրուած, իսկ այժմ Պրագի դոմի սեպհականութիւն մի աւետարանի մէջ կայ

այդ մի և նոյն տեսարանը(\*) : Այս ձեռագրի մանրանկարչութիւնը նուրբ է և քնքոյշ, պատկերագրութիւնը գեղարուեստական, բայց Արքայական Ճաշոցի արուեստի ճոխութեան հասնել չէ կարող : Նկարչի անձնաւորութիւնն անյայտ է, եթէ նոյն չէ գրչի հետ :

Ստեփաննոս գրչի անձնաւորութեան մասին ևս մանրամասնութիւններ չենք իմանում . Մեսրոպ վարդապետ (այժմ եպիսկոպոս) Տ. Մովսիսեանի կարծիքով սա նոյն չէ Ստեփաննոս Գոյներ Երիցանցի հետ, որ 1ևոն Գ.ի թագաւորութեան վերջին տա-



Հեթում Բ.ի Աստուածուունչ — Ս. Աստուածածին

րիները արքայական տանը մօտ անձնաւորութիւն էր և յաճախ պատուէրներ ստացած արքայական ընտանիքի անդամներից այս կամ այն ձեռագիրը պատրաստելու : Փարիզի արքայական մատենադարանի

(\*) Beissel. Gesch. der Evangelienbücher, 1906 Freiburg i/B էր. 202.

ըստ Ձոհրապի N° 12 ձեռագիրը գրուած է Կեռան թագուհու հրամանաւ « Ստեփանոսի և մականունն Իրիցորդի » գրչի ձեռքով : Գանձակի Ս. Յովհաննէս եկեղեցու մի աւետարան ստացել է « բարեպաշտ թագուհին Կեռան հանդերձ սուրբ թագաւորան Լեւոնիւ » և գրուած է « ձեռամբ ամենամեղ քահ[անայ] Ստեփաննոսի ի թուականիս Հայոց ՁԼԲ... » (\*) : Արդեօք նոյն անձնաւորութիւնն է սա Գոյներ Երիցանցի կամ արքայական Աստուածաշնչի գրչի հետ. ըստ մեզ կարօտ է ստուգութեան :

Արքայական Աստուածաշունչը յիշատակարաններ շատ ունի. մենք միայն բերում ենք մէկը ընթերցողներին գաղափար տալու համար, Ելլց գրքի վերջում, 47 բ. « Ջրաբեպաշտ արքայն Հայոց զՀեթում/գեկեղեցւոյ Այ. բարձրացուցանաւ զն և ըզ/վարժեալն ա [ամենայն] իմաստութեց, յիշման արժանի արարէք զսա ո՛վ որ ընթեռնոյք զսա կամ/աւրինակէք, զի ստացաւ զսայ յիշատակ իւր և ծնողաց իւրոց յաստիս և յապաւնումն :

« Նաև զիս զկարկամաւս մեղաւք զՍտեփան/ոս գգրող սորա և զծնողսն իմ և զարմն մի՛ մոռանայք այլ յիշեցէք, զի յայժ աշխատե/յայ ի գրելն սորա և Աճ. զԿիշողք յիշէ, ամէն » :

Աստուածաշնչի վերջում գրուած է Հեթումի հեղինակած ոտանաւոր ընդարձակ յիշատակարանը « Որ ծառայեալս եմ բիւր ակտից » սկսուածքով : Յիշատակարանին մէջ նա համառօտում է Ռուբինեանցի ծագումն ու պատմութիւնը և ապա իւր ժամանակի զէպքերը, յատկապէս ծուղատկի վէճերի առթիւ զունարուած ժողովի պատմութիւնը :

Վերջին յիշատակարանը պատմում է, թէ ինչպէս Արիտակէս վարդապետ Խարբերդցին 6 տարի այս Աստուածաշունչը գտնելու համար թափառելուց յետոյ՝ գտնում է վերջապէս Տիգրանակերտում և ապա մահտեսի Մեղրոնի ծախքով կազմել տալիս ՌՀԳ—1624 թ. « Ի Ղալաթիա, ի դուռն սբ. խաչին » Մեղրիսեղեկ դպրի ձեռքով :

Պատկերն առնուած է 289 ա, Աստուածածինը



Ես. Նչեցու Աստ. — Սկզբնագարդ Մենդոց գրքի

Յիսուս մանուկը գրկին, իսկ վերևից հրեշտակը խօսելու շարժումով : Ճարտարապետական զարդարանքները պարզ կինեմոնագոյն գիծերով են ձևացրած, գոթականը յիշեցնող սրածայր կամարով, իսկ պատկերները երկզոյն : Աստուածածնի կեցուածքը, հագուստի նուրբ և ազնիւ ծալքերը գեղարուեստական են բարձր իմաստով : Ափսոս, որ պատկերը վերջացրած չէ : Աստուածածնի ներքնագգեստը կինեմոնագոյն—կարմրաւուն գծերով և բծերով սպիտակի վերայ ստուերներ է տուած և ծալքեր, իսկ թիկնոցը գլխանոցի հետ կանաչի խիող գունով սպիտակի վերայ եղերած և ծալքեր տուած : Սակաւ գծերով և միայն երկու գունով այնքան շնորհալի մի պատկեր ստեղծել լաւագոյն ապացոյցն է նկարչի բարձր տաղանդի : Մարիամի դէմքը քիչ երկարաւուն է, ժամանակակից բիւզանդական արուեստին յատուկ, ճակատին, աչտերին և ծնօտին եղած մի մի բիծը ստուեր և կենդանութիւն է տալիս դէմքին :

Յիսուս մանուկ երկու ձեռքով փաթաթուել է

\*) Բաղուածի Բերլինի արձայական մատենադարանի ձեռագրից եւ Արցախ՝ Մակար Եպիօ. Բարխուդարեանցի, Բագու, 1895 եր. 39 :

մօր պարանոցին, մազերը զանգուր են, հագած է լայն թեւերով պարեգօտ և կանաչով ստուերագծած և ծալքեր տուած վերնազգեստ: Յիսուսի լուսոյ պսակը խաչազարդ է, իսկ Մարիամինը ոչ: Հրեշտակի ներքնազգեստը նոյն գոյնն ունի ինչ որ Մարիամի թիկնոցը, իսկ վերնազգեստը՝ ինչ որ Մարիամի ներքնազգեստը:

Պատկերի մեծութիւնն է  $14\frac{1}{2} \times 5\frac{1}{2}$  սմ.:

Խ

### ԵՍՍՍԹԻ ՆՉԵՑՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇԱՆՈՒՆՉԸ

(N° 182)

Այս մատեանն էլ Մ. Աթոռի մատենադարանի նշանաւոր ձեռագրերից մէկն է.  $26 \times 18\frac{1}{2}$  սմ. մեծութեամբ, երկսիւն՝ իւրաքանչիւրը  $21 \times 6\frac{1}{2}$  սմ. գրուած է ազնիւ մագաղաթի վրայ, բոլորգիր ընտիր գրչութեամբ և զարդարուած բազմատեսակ մանրանկարներով ու զարդերով: Գրիչները երկուս են. « Կիրիկէ » (= Կիրակէ, Կիրակոս) 518 ք և 540 ք, և « Յոհ. (Յովհաննէս) սպասաւոր բանի Եզնկայեցի որ և Մործորեցի » 588 ք: Գրուած է 1318 թուին « և ըստ խոսրովային տօմարին. ՉԿէ »: Տեղն անյայտ է, բայց գրուած պիտի լինի Գլաձորում, ստացողի, գրիչների և նկարչի խնամաւորութիւններն ի նկատի ունենալով: Նկարիչն է Թորոս, 497 ա, 588 ք, իսկ ստացողը Եսայի « բաբունապետ », « վարժապետ », « վարդապետ », 497 ա, 518 ք, 588 ք:

Այս Եսային ոչ այլ ոք է, բայց եթէ Գայեձորի վարդապետարանի յայտնի ուսուցիչը, որ յաջորդեց Ներսէս Մշեցուն և նշանաւոր հանդիսացաւ իւր վարժապետական, մասամբ ևս գրական գործունէութեամբ: Նորա աշակերտները շատ բազմաթիւ են, իսկ մի քանիսը իրենց ժամանակի մէջ առաջնակարգ, ինչպէս Յովհաննէս Երզնկացին, Մխիթար Սասնեցին, Յովհաննէս Արծիշեցին, Յովհան Որոտնեցին, Խաչատուր Կեչառեցին ևն (\*): Յովհաննէս Երզնկացին նչեցու աշակերտը չէ սովորական մտքով. նա արդէն « սպասաւոր բանի » է, բայց ունկնդիր

եղաւ նչեցուն աւելի ևս կատարելագործուելու համար: « Կիրիկէ » հաւանօրէն Կիրակոս Երզնկացին է, որ յիշուում է նչեցու աշակերտների թուում, իսկ Թորոս նկարիչը նոյն պիտի լինի Թորոս Տարօնեցու հետ, որ 1314 թուին Գայեձորում ծաղկել է Մխիթարի ձեռքով գրած մի աւետարան (\*): Գայեձորի կամ Աղբերց վանքը իւր ժամանակի գիտութեան, գրչութեան և մանրանկարչութեան կեդրոնն էր. այդ դպրոցի աշակերտն էր Մխիթար Սասնեցին կամ Կերմանեցին. վարժ « յարուեստ գրչութեան և ի ծաղկազարդ նկարակերտութեան գրոց » (\*\*): Նչեցու Աստուածաշունչը այդ դպրոցի գլուխ գործոցը պիտի համարել. « բաբունապետի » լաւագոյն աշակերտները՝ Կիրակոս և Յովհաննէս Երզնկացիք և Թորոս նկարիչը միացած ուժերով գլուխ են հանել այս գեղեցիկ գործը իրենց վարժապետի համար: Աստուածաշնչիս մէջ 439 ք. կայ նչեցու պատկերը « Եսայի Վարդ » մակագրութեամբ, իսկ 440 ա. երիտասարդ գրչինը, որ մագաղաթի փաթեթը ներքեւից ինքն է բռնել և գրում է, իսկ վերեւից կոցով բռնել է պոչը փուած մի սիրամարգ:

Ո՞վ է այս երիտասարդ գրիչը. Յովհաննէս, թէ Կիրակոս Երզնկացին, դժուար է ասել:

Հայրապետական անդրանիկ կոնդակի մէջ սիրամարգն ու Հայրապետի անուան Մ. տառը, բաց ի այս տառի բնորոշող մասը՝ բազուկը ձեռքին խաչ՝ առնուած է այս ձեռագրից 438 ա և 436 ա. (Մարկոսի սկզբնաւորութեան Մ. տառը): Այս ձեռագրից են առնուած նոյն կոնդակի խորանների խոյակները՝ աւետարանիչների չորս նշանակներով 438 ա, 439 ք, 440 ա, և 442 ա: Այստեղ տպուած պատկերներն առնուած են 4 ա, 259 ա, 260 և 463 ա երեսներից:

4 ա. Ծննդոց գրքի սկզբնաւորութիւնն է. — Սկզբնազարդի ձախատը մի քառանկիւն է, ներքին մասի կեդրոնում կամարով: Մի ուրիշ աւելի փոքր քառանկիւնի շինուած է վերոյիշեալ կամարի զլսին, որի ներքին մասն ամբողջ կամարն է կազմում: Կամարը՝ ինչպէս և մեծ և փոքր քառանկիւնիների շրջանակները կազմուած են երկնեանդ թեփերից (ձկան). մեծինը քիչ երկարաւուն, ձուածն, իսկ

(\*) Ալիբան. « Միսական » 131—136 եւ Գարեգին վ. Յովսէփեանի Մխիթար Սասնեցի 1899, Վաղարշապատ, եր. 9—12, 29—30:

(\*) Ալիբան. « Միսական » 135—136:

(\*\*) Մեր փոքրիկ աշխատութիւնը, Մխիթար Սասնեցի 15—16, 30:

փոքրիկը կլոր: Այս մտաւր յատուկ է արեւելքին (\*) և հայ արուեստի բնորոշ գծերից մէկը: Փոքր շրջանակի մէջ, համարեա զարդի կեդրոնում, դէմ առ դէմ կանգնած են երկու պարիկ, թռչունների մարմնով և աղջկանց գլխով վարսակալով: Պարիկների նման պատկերներ գործածական էին Ասորեստանեայց և եգիպտական արուեստների մէջ, ապա նաև Պարսից մէջ և հաւանօրէն նրանցից էլ անցել են հայ արուեստին: Անիի արքայական պալատի պեղումների ժամանակ պրոֆ. Մառը մի դաւաթ է գտել պարիկաձև պատկերներով, մահճակալի արուեստի զրոյմով: Նոքա նիւթ են դարձել նաև քանդակագործութեան մէջ (\*\*): Մեծ և փոքր շրջանակների մէջ եղած տարբերութիւնը ծածկուած է խաչաձև զարդերով և հնգատերևներով: Խաչաձև զարդերը ցողուններով իրար խաչած արմաւենիկներ են, որոնց երկու կողերը կիսաշրջաններով խաչի անկիւններում ձուածններ են կազմում. այդ ձուածնների մէջ նկարուած են մի մի եռատերև, ցողունների կեդրոնում սեղմած քառակուսիներով: Արմաւենիկները կապոյտ են, եզերուած սպիտակ գծերով, թերթի կեդրոնում բաժակաձև փոսիկի մէջ կէտերով



Յս. Նշ. Աս. — Յիսուսի ազգագրութեան ծառը



Յս. Նշ. Աս. — Սկզբնազարդ Սաղմոսի

ճաղկի սերմ ձևացնելով: Եռատերևների ներքին թերթերը բաց կանաչից դեպ ի մոյզ են անցնում, իսկ միջինը բաց կարմրից դեպ ի մոյզը: Այս խաչաձև զարդերն իրարից բաժանուած են զոյգ հնգատերևներով, կանաչ, կարմիր և կապոյտ գոյների բացից դեպ ի մոյզ երանգաւորութեամբ: Վերին անկիւններում և ճակատի կեդրոնում իրար վրայ դրած կրկնակի եռատերևներ են. ճակատի կրկնակի եռատերևների երկու կողմից իրար դէմ կանգնած են երկու թռչուններ, կտուցները կարմիր, պարանոցը և փորի տակի փետուրները կապոյտ և սպիտակ գոյներով ձևացրած, իսկ թևերը մոյզ-կանաչ և դեղնաւուն գոյներով: Մի մի ճաղկազարդ երկու կողմից բարձրանում և թեքուած են հակադիր ուղղութեամբ. սրանց ցողունի վրայ նկարուած է մի կոկոն, մի տերև և մի հնգատերև. միջին, երկար տերևի անկիւններում մի մի գնդակով:

(\*) Strzygowski. Kleinarm. Miniaturenmalerei եր. 30.  
 (\*\*\*) Տես մեր յօդուածը «Նախնեաց յիշատակներ»: Արարատ, մարտ 1910, եր. 359-260:

Սկզբնազարդի ձախ կողմը Ի տառն է իւր ձո-  
ղով և բնորոշող մասնիկով : Չողը աջ և ձախ կող-  
մից եղերուած է նուրբ կապերտազարդով, դարձեալ  
պարսից և հայ մանրանկարչութեան բնորոշ կէտերից  
մէջը, իսկ միջին տարածութեան վրայ՝ ձուածնների  
մէջ, վերից վար արարչագործութեան 7 օրուայ տե-  
սարանները : Աստուծոյ փոխարէն նկարուած է  
Յիսուս անմօրուս և խաչաձև լուսոյ պսակով, աջը  
օրհնութեան նշանով : Եօթներորդը հանգստեան օրն  
է. Յիսուս նստած է աստղազարդ երկնքի վերայ,  
աջով օրհնում է, իսկ ձախով կարմրակող և ակ-  
նազարդ աւետարան է բռնել : « Ի » տառի բնորոշող  
կամարի վրայ նկարուած է Մովսէս և գրում է  
« Ի սկզբ » Ծննդոց գիրքը : վերից աջը Աստուծոյ  
ներկայութիւնն ու ներշնչումն է ձևացնում : Մովսէս  
անմօրուս է, ինչպէս սովորաբար :

Զարդագրերը թռչնազրեր են և ծաղկազրեր .  
ուշադրութեան արժանի են արմաւենիկները, մէջք  
մէջքի կպցրած փակագծերը և ութաձևեզր զարդը  
երրորդ տողի Զ գրի պոչի վրայ : Ըստ Ստչիգովսկու  
այդ մոտիւնները արեւելեան են (\*) և յատուկ նաև  
հայ մանրանկարչական արուեստին :

Աջ կողմի լուսանցքի երկարութեամբ ընկած  
զարդը շատ սովորական է հայ ձեռագրերի մէջ այլ  
և այլ եղանակաւորութեամբ : Սրա մոտիւնները զա-  
նազան ձևի և գոյնի եռատերևներ, արմաւենիկներ  
և հիւսուածքներ են . զարդի կեղրոնում հակադիր  
ուղղութեամբ նկարուած են երկու թռչուններ, որոնց  
միջի տարածութիւնը ձուածն է կազմում : Զարդի  
կատարին կանգնած է ոսկի մի խաչ, ճառագայթ-  
ները կարմիր գծերով ձևացրած : Ուշադրութեան  
արժանի են թռչունների գլխի դէպ ի ցած դարձած  
արմաւենիկներն իրենց հանգուցաւոր ցողուններով .  
այս ձևը պատահում է նաև խաչքարերի վրայ :

259 ա. Յիսուսի ճիւղազրութեան ծառն է,  
22.8×14 1/2 սմ. մեծութեամբ : Զախ անկիւնում  
արևելեան ձևով թիկն է տուել Աբրահամ, ցեղին  
նախահայրն ու արմատը . նրա սրտից դուրս է եկել  
մի ծառ, բունի կեղրոնում Դաւիթի գլուխը, իսկ  
նրանից բարձր աջ և ձախ երկ-երկու ճիւղերի վրայ  
բազմած են 24 մարգարէները, 18ը ներքին, իսկ  
6ը վերին ճիւղերի վերայ՝ բոլորն էլ անմօրուս Գ-  
նիկոյ, Գոգոյ հազած : Մարգարէներից 6ը վերին  
շարքում և 6ը ներքին՝ մագաղաթի երկար թերթեր

(\*) Վերայիշեալ երկը, եր. 33 :

ունին ձեռքերնին : Ծառի կատարին, կեղրոնական  
մասում, ձուածն շրջանակի մէջ բազմած է Յիսուս,  
որ աջով խաչակնքում է. իսկ ձախով ծիրանու  
փէշով բռնել է ակնազարդ աւետարան : Յիսուսի  
լուսոյ պսակը խաչաձև է, պսակի եզրները ակա-  
նազարդ :

Աջ անկիւնում՝ ներքև՝ Սամուէլն օծում է  
Դաւիթին : Պատկերի աջ և ձախ շրջանակը կաղ-  
մուած է երկնքանոց թեփերի շարքից, իսկ վերինը  
և ներքինը ականթների շարքից :

260 ա. Սաղմոսի սկզբնազարդն է և Ե գլխա-  
գիրը : Սկզբնազարդը քառանկիւնի տախտակ է,  
երկու խաչաձև զարդով ծածկուած : Խաչաձևի թևերը  
կազմուած են չորս ձուածններից, իւրաքանչիւրի  
մէջ մի մի եռատերև, իսկ թևերի շուրջը արմաւե-  
նիկներ. սրանց և եռատերևների ցողունները խաչա-  
ձևի կեղրոնում հիւսուած են իրար : Ամբողջ խաչա-  
ձևի մակերևոյթը (Փոն) ոսկի է : Ուշադրութեամբ  
քննելով տեսնում ենք, որ այս զարդը ոչ այլ ինչ  
է, բայց եթէ Աբբայական ճաշոյցի N° 892, 7ա  
զարդի մի փոփոխակը : Այստեղ ևս եռատերևների  
արմատներից դուրս եկած ցողունները խաչաստղ են  
կազմում, գործածական նաև հայ ճարտարապետա-  
կան զարդարանքների մէջ, իսկ արմաւենիկների  
ցողունները կիսաշրջաններ . բայց այստեղ արմաւե-  
նիկի զոյգ թևերի համաձայն զոյգ ցողուններ են  
արձակուած, որոնք հանդիպակաց արմաւենիկի ցո-  
ղունների հետ իրար կտրող ձուածններ են կազմում  
և աւելի բարդ հիւսուածք : Ուշադրութեան արժանի  
են ձակատի զոյգ առիւծները դէմ առ դէմ, առա-  
ջին թաթերը դրած սկաւառակի ուռուցիւն և պըպը-  
զած յետին ոտների վրայ : Առիւծների պոչերը անցել  
են երկու ոտի միջով և ազդրի մօտով վեր բարձրա-  
ցել կամարաձև : Առիւծների այս կեցուածքն ու  
դիրքը Սելջուքեան արուեստի դրոշմ է կրում և  
հազուադիւս չեն ելնդաւոր քանդակագործութեան  
մէջ (Անիում և Դառնիում) : Անօթի մէջ մի բոյն է  
նկարուած, որից երկար ցողուններով երկու ծաղիկ-  
ներ են դուրս եկած և իրար հակադիր թեքուած :  
Վերին անկիւններում թռչունները կտոցով բռնել են  
առիւծների պոչերը :

Սկզբնազարդին կից ձախ կողմից նկարուած է  
Սաղմոսի սկզբնաւորութեան Ե գիրը՝ զուտ արևելեան  
դրոշմով : Դաւիթ քնարի փոխարէն նուագում է  
սագի կամ թառի վրայ : Հագել է կապոյտ պարե-  
գօտ, բայց սեղմուած թևերով և ուսերին ձգել է



Յս. Նյ. Աստ. — Սկզբնազարդ Մարկոսի

մոյզ կանաչ, ոսկեգծերով զարդարած վերնազգեստ: Միտուքը կլոր է և մազերը միջակ երկարութեամբ, այտերը կարմիր, ինչպէս սովորական է այս ձեռագրի մէջ: Գլխին ունի թագ, ճակատի կեղտնական մասն աւելի բարձր: Թագի գլխին մէջք մէջքի են տուել երկու թռչուն, իսկ նրանցից վերև արմաւենիկի տերև: Մէջք մէջքի տուած թռչունների մտտիւր կրկնուած է այս և աւելի հին ձեռագրերի մէջ (\*): Անդրից ներքև մի թռչուն է նկարած, որի գլխի և պարանոցի վերայ ընկած է անդրու ծանրութիւնը, նա կտուցը մեկնել է դիմացի առիւծի բաց բերանի մէջ: Առիւծի պարանոցը հետզհետե բարականում է, կորանում և ապա միանում թռչունի նոյն ձևով կորացող պոչի հետ և Ե.ի ներքին մասի կամարը կազմում: Այս սկզբնազարդը իւր ամբողջութեամբ և թէ յատկապէս Ե տառով շատ գեղեցիկ է:

(\*). Տես մեր յոդուածը. « Նախնեաց յիւսասկներ », Արարւս . մարտ 1910 երես 257 :

463 ա. — Մարկոսի սկզբնազարդն է սկսուածքի զարդագրերով: Այստեղ ևս քառանկիւնի խորան, ներքին մասը բաց: Աջ և ձախ կողմից շրջանալը կապոյտ երիզի վերայ սպիտակաւուն գծերով մէանդրաձև մի զարդ է, բայց ճուռ ու մուռ, վերեւից ականթների շարք, իսկ ներքեւից խորանի շրջանակն էլ հետը՝ ծիածան է: Շրջանակների մէջ եղած տարածութիւնը ոսկի ֆոնի վրայ ծածկուած արմաւենիկներով, եռատերևներով, ծաղիկներով և նրանց ցողունների հիւտուածքով. արմաւենիկները երբեմն կազմում են սրտաձևեր: Խորանի աջ ու ձախ կողմերից, սեղմած քառանկիւնի շրջանակների մէջ նկարուած են առիւծի մի մի գլուխ, իսկ սկզբնազարդի վերին մասում, խորանի անկիւններից բարձր՝ մարդկային մի մի գլուխ, անշուշտ Մատթէոսի և Մարկոսի նշանակներից վերցրած: Սկզբնազարդի ճակատին դէմ առ դէմ, խաչի սրտուանդանից շղթայուած առիւծներն իրենց դիրքով և թևերով ասորա-բաբելական առիւծներն են յիշեցնում, գեղարուեստական կատարելութեան կողմից ամենայաջող մանրանկարներից մէկը և արևելեան ծագման ակնյայտնի նշանը այս Աստուածաշնչի մէջ: Սկզբնազարդի անկիւններում՝ պոչերի վրայ թառած մի մի թռչուն, կացով բռնել են ծաղկի ցողունից

Աջակողմեան լուսանցազարդը կազմուած է արմաւենիկներից և սրանց ցողունների հիւտուածքից, եռատերևներից, սլաքանման զարդերից, հանգոյցներից և վերջանում է խաչազարդ կատարով և եռանկիւնաձև խորհրդանշով: Այս բոլորը եզերուած են ոսկով կամ նկարուած ոսկի մակերևութի վերայ:

Գեղեցիկ են նոյնպէս սկզբնազարդը. առաջին տողը մարդագրեր են բացառութեամբ Ս գրի, որ աւետարանիչների նշանակներից է կազմուած, դասաւորուած Յովհաննու Յայտնութեան համաձայն: Երկրորդ տողը թռչնագրեր են, իսկ երրորդը ծաղկագրեր:

Թորոսի նկարչութիւնը տեսնելիցայի կողմից հասնել չէ կարող Արքայական ճաշոցի կամ կիլիկեան նման բարձր մանրանկարչութեան, բայց սա ևս ձոխ է և երբեմն շքեղ, ոչ գուրկ գեղեցկութիւնից: Մակայն անկման նշաններն արդէն նկատելի են շատ պարզ կերպով, նման այն գեղեցկութեան, որ անցել է իւր զուարթ և կենսալից շրջանը:

**Գ Ա Ր Ե Գ Ի Ն Վ Ա Ր Դ . Յ Ո Վ Ս Է Փ Ե Ա Ն**

Էջմիածին

ՈՒՐՈՒԱԳԻՄԵՐ

Գարունը տարապայման ուշացաւ այս տա-  
րի : Ապրիլ 10, Զատիկ՝ ու տակաւին ձմեռ-  
նային ցուրտ հով մը, հեգնորէն, անհրապոյր  
երգեր կը կաղկանձէ մեր տան պատերուն ու  
պատուհաններուն վրայ, որ կը դողդղան : Հովը  
կը փչէ ուժգին, հովը կը փչէ միահեծան աշ-  
խարհակալութեամբ, ու պիտի ըսուէր թէ՛  
յաւիտենական ձմեռուն մը դժնէ պատգամա-  
ւորն ըլլար ինք :

Ապակիէն դուրս կը նայիմ :

Գիւղին եզերքը՝ հողմաղացները կը դառ-  
նան յիմարական արագութեամբ :

Աւելի հեռուն, թեթեւ բլրակներու կողե-  
րուն վրայ, տողջարուղ թթաստանները կ'ե-  
րազեն, տակաւին չոր ու ցամաք, անհունորէն  
տխուր :

Մակոտ, հիւանդագին մերկութիւն մը կը  
տարածուի դեռ, դաշտերուն մէջ ու դարաս-  
տաններուն վրայ : Ծամաք անդաստանները հա-  
զիւ ուրեմն կը խայտաւորուին ցորենի կանանչ  
արտերուն դեռաբոյս ու հիւանդոտ գմբուխ-  
տովը : Ինչ որ ալ ըլլայ, այդ միջանկեալ կեն-  
դանի կանաչութիւնները սփոփանք կուտան  
իմ նայուածքիս :

\* \* \*

Ամբողջ Մալկարան՝ ծառախիտ անտառի  
մը երեւոյթն ունի : Տանիքներու կղմինտրնե-  
րուն մամոտ կարմրութիւնները կը ստուերա-  
գծուին՝ նորածիլ սաղարթներուն տարտամ  
կանանչութիւններուն մէջէն : Նշենիները,  
ծիրանիները եւ սալորենիները արդէն իսկ  
ծաղկած են . առագաստի սեմին վրայ ճերմակ  
հազուած հարսերու նման, բայց դեռ ամէն  
բան կը մսի, կը վարանի, կը դողդղայ :

Պիտի ըսուէր թէ՛ չկայ խրախուսիչ նշան  
մը, որ Զատիկին կարմիր, առոյգ ու կենսա-  
ւէտ գաղափարին ուրախութիւնը խորհրդա-  
նշէր :

Հովը կը շարունակէ երգել իր բարբարոս  
երգը, եւ ծաղրանքի ու թունաւոր նենգու-  
թեան շեշտ մը կայ իր եղանակներուն մէջ :

\* \* \*

Աւելի հեռուն՝ հորիզոնները կ'ընդլայնուին  
հետզհետէ ընկրկելով, հետզհետէ ուրուային  
անորոշութիւններու մէջ աւրուելով :

Երկինքը խիստ է եւ խոփոտ :

Տարտամ, անձեւ, աղտոտ ամպեր, ան-  
ստուգութեան տրտմութեամբը, կը կախուին  
հոն, եւ արեւի ճառագայթ մը գէթ չի հա-  
մարձակիր ծիծաղիլ՝ խիտ ամպերու պատահա-  
կան անօսրացումներուն ետեւէն :

Դիմացի լեռներուն կողերուն վրայ դե-  
գերող ճերմակ մառախուղի ծուէններ, դաշ-  
տերու միայնութեան մէջ յաճախ գալարուն  
մշուշներ, հեռաստանին պատկերներուն, ցան-  
ցառ գիւղանկարներուն եւ ամայի վայրանկար-  
ներուն երանգներն ու գիծերը կ'աւրջակեն,  
եւ ամէն բան կը վարանի, ամեն բան կը  
տրտմի, անորոշ իրերու այս երազային ու  
խռովարեք տեսիլքին մէջ :

\* \* \*

Կը նայիմ շուրջիս մօտիկութիւններուն,  
կը նայիմ պատշգամէն վար, մեր պզտիկ պար-  
տէզին մէջ :

Իրենց կանանչ ցօղուններուն վրայ, արեւ-  
նաթաթախ գլուխներ կը ճօճեն կակաչները :  
Սարսուռն, շեշտ, խիստ կարմիր մը, որ  
գլխատումներու խորհիլ կուտայ :

Պարտէզին մէջ, տոսախի կլոր փունջ մը,  
իր յաւիտենական մութ կանանչութեան սուգը  
կը ցուցադրէ :

Երկու հաւեր, տենդոտ ջղայնոտութեամբ,  
հողը կը փորեն իրենց ոտքերով, եւ իրենց  
աչքերուն անհաւատալի սրատեսութեամբ՝  
մանր ճճիներ կ'որսան :

Պատշգամն ի վեր բարձրացող սարփինան՝  
տակաւին կենդանութեան նշան ցոյց չի տար  
իր խեղ ու չոր բազուկները՝ խիստ ջղաձգու-  
մներու գայարումներու մէջ գօսացած են :

Տանիքին վրայ բու մը թառեր է . անսահ-  
ման գլուխ մը՝ փոքր մարմնի մը վրայ : Իր խո-  
շոր չափազանց արտայայտիչ ու զարմանահար  
աչքերը կ'ուղղէ ինծի : Անոնց մէջ՝ հետզհետէ  
կասկած, անվստահութիւն, արհաւիրք կայ :  
Եւ ի՞նչ շեշտ ու անթարթ յամառութեամբ  
մը կը գամէ զանոնք իմիններուս մէջ, գրեթէ  
սպառնալից : Իբր թէ՛ պիտի մագնիսացնէր

զիս : Ու երկա՛ր , կը նայինք իրարու , անշարժ , անձայն : Այդ վայրկեանին ի՞նչ կը խորհինք իւրաքանչիւրս իրարու վրայ : Հետաքրքիր էի գիտնալ բուռի մը հոգեբանութիւնը , բուռի մը աշխարհահայեացքը : Բա՛ն մը չեմ գիտեր . աւա՛ղ . եւ ինչ որ գիտնալ կը կարծեմ , տարամերժօրէն մարդկային ըլլալէ չի դադրիր : Բուռի մը աշխարհահայեացքը : Չեմ գիտեր : Կարելի՞ էր որ ինքնիրմէս դուրս ելնէի որ եւ է պայմանով : Ու կը խորհիմ այս թշուառութեան վրայ , եւ կը շարունակենք դեռ իրարու հայիլ , երբ , մէկէն ի մէկ , անակնկալ վայրկեանի մը , կը թռչի , կը փախչի ան . . . : Ինէ՛ կը փախչի :

Տուրտ աղտոտ երկնքին վրայէն՝ ազուաներ կը սահին : Արագ , գահավէժ , տենդագին՝ կ'արշաւեն անոնք ու կը փախստկին , հովերուն սանձակոճ հետապնդումէն իբր թէ հալածական , օդին մէջ նետուած սեւ քուրջի կտորներու նման :

\* \* \*

Ահա՛ ծերունի տէր-պապան մեզի կ'այցելէ : Զատկական տնօրէնէք : « Այսօր յարեաւ » , Աւետարան , խաչահամբոյր , մաղթանք : Ամէնը՝ յոգնած մեքենայի մը նման , կ'ընէ կ'ըլլայ : Իր պարտքը կատարած է : Կը հրաւիրենք զինքը նստիլ քանի մը վայրկեան : Կը հաճի , հաճոյակատար բարի ծերունին : Այս այն տէր-պապան է որ , իր կրօնականի պաշտամունքէն դուրս ոչ մէկ բանի կը խառնուի : Հակառակ իր մեծ ծերութեան , — մօտաւորապէս 90 տարեկան է — կէս գիշերին օտքի վրայ է , մահամերձ մը մխիթարելու , հիւանդի մը օգնութեան հասնելու համար :

Պատմիլ կուտանք իրեն՝ իր էջմիածին -Սուրբ Կարապետի ճամբորդութիւններէն զրուակներ , դէպ ի ետ կ'երթանք վաթսօ՛ւն տարի : Ինչե՛ր գիտէ : Ինն անգամ եփրատն անցեր է ձիով լողալէն : Արարատը եւ Տարօնը պտրտած է : Եւ մինչեւ այսօր՝ իր ուխտին մէջ անկեղծ , ու իր միամիտ , որեւէ աստուածաբանութենէ անարատ հաւատքին մէջ՝ անզրգուելի , կ'աշխատի ի՞նչ համակրելի ծեր մըն է ինքը : Կ'ըսէ որ խնդրած է Աստուծմէ զինքը անկողին չձգել հիւանդ հիւանդկախ , այլ իր հոգին առնել օտքի վրայ , իր պարտա-

կանութիւնը կատարելու պահուն , այն նուիրական սեմէն իսկ ներս , ուր յիսուն տարի է ի վեր կը քահանայագործէ : Կը հիանամ իր պայծառ միամտութեան վրայ : Մահերով ու աւերներով չըջապատուած , ու մոխիրներու վրայ դեռ կանգուն , կիսափուլ բուխերիկի մը տպաւորութիւնը կ'ընէ ինք , որ տակաւին կը մխա՛յ :

\* \* \*

Օրը կ'անցնի , տխուր , միօրինակ , ընդմիջուած՝ անհրապօյր ու անիմաստ զատկական շնորհաւորական այցելութիւններով :

Պատուհանէն դուրս կը նայիմ , ճանձրոյթս ամոքելու համար :

Փողոցին մէջ պզտիկ տղաք կը վազվրուտեն ուրախ զուարթ : Ամենքն ալ իրենց պահեստի զգեստները հագած են :

Խուճապ մը բզէզներ կարմիր-հաւկիթ կը կըռկըռան :

Կարմիր-հաւկիթ կըռկըռալ՝ կը նշանակէ հաւկիթները իրարու զարնել , իրենց սուր ծայրերով : Ո՛ր հաւկիթը որ չկտորի՝ անիկա յաղթող կը հանդիսանայ , ու կը գրաւէ միւսը : Նաեւ՝ կ'ունենայ ա՛յնքան տարիք՝ որքան հաւկիթ որ ջախջախէ : Յաղթական հաւկիթը կը հարստանայ նաեւ տարիքներով խորտակուած հաւկիթին , եթէ ասիկա արդէն տարէց է :

Կը գիտեմ տղոց դէմքերը : Անձկութիւն , յոյս , ուրախութիւն , տրտմութիւն , արցունքներ իսկ : Եօթն ութ տարեկան տղեկի մը աչուրները կ'արցունքոտին . հաւկիթը կտորած է : Ու ցաւի խորունկ արտայայտութիւնը , որ կը պատկերանայ իր մատաղ դէմքին վրայ , պիտի ըսուէր թէ սահման չունի ինորտակուած կարմիր-հաւկիթ մը՝ որուն հետ մանկական սիրտ մը կը փլի : Խե՛ղճ պզտիկ :

\* \* \*

Ա՛լ իրիկուն է : Գիշերը կը մօտենայ , փողոցները հեռզհեռէ կ'ամայանան , եւ գեղջուկ կեանքին զատկական իբր թէ ետուզեոր կ'ամփոփուի իրիկնամտի տրտմազին գորշութիւններուն մէջ :

Պիտի ըսէիք թէ՛ սուգի ու մահուան քաղաք մըն է , ուր օր մը առաջ ոճիրներ մխացին , — այնքա՛ն մեռելութիւն , այնքան՝

Թախիծ , այնքան թափանցող ու լռին տըրտմութիւն կայ ամենուրեք :

Դիմացը , Մէլէնի լեռնաշղթան , որ արեւոտ առտուներու պայծառութեան մէջ իր բրգաշարներուն յատուկ օղակաւորումներով կը ճառագայթէ, — այս անգամ կը հալի, հետզհետէ կ'անգայտանայ , կ'ամպանայ՝ անհունօրէն նրբին մանիչակագոյն մշուշի մը թեթեւ մարմաշին ետեւ : Պիտի ըսէիք թէ աստիճանական աննիւթացումի մը մէջ կը հատնի ան, կը ցնդի ան, խուսափելով հորիզոնին մթնշաղ հեռաւորութիւններուն վրայ :

Իրիկնամուտի ցուրտը կը տիրապետէ ամենուրեք : Իբր թէ ըլլայինք չարագուշակ ու աղետաւոր գարնան մը սեմին վրայ , որ կ'ընկերկի, կ'ընկերկի՝ Երկինքը կը մսի, գաշտերը կը մսին , գիւղն ամբողջ՝ կը դողդողայ խոնաւ ցուրտէն, որ կը թռի թէ հոգիներուն խորը կը թափանցէ, հոն սառեցնելու համար բոլոր կարելի յոյսերը :

Ու հովը կը սուլէ, հովը կը հաջէ, հովը կը ծիծաղի ջղայնօրէն , զարնուելով պատուհաններուն , գղրղելով փեղկերը , զողացնելով ապակիները... եւ մտածումս ի գո՛ւր կը փնտռէ իմաստը՝ օրուան մը զատկական այս կեանքին :

Մակարա ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

**Ք Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ Դ Ա Ր Ը**  
**ԵՒ**  
**Հ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը \***

Տիկիներ , պարոններ ,

**Ա**մէն անհատ կրկին հայրենիք ունի իր երկիրը , իր դարը : Մին նիւթական միջավայրն է ուր կը ծնանինք , միւսը բարոյական՝ ուր կը զարգանանք : Ազգութիւնը գումարն է ցեղական՝ իսկ դարը համամարդկային ժառանգութեանց : Ամէն ոք խրոխտ է ինչպէս իր ժողովուրդի՝ իր ժամանակի հարազատն ըլլալուն : Հայաստան և

\*) Համակրելի Միսիթարեանը իր այս բանական բանախօսութիւնը արեստանեց Փարիզի Հայ Ուսանող Միութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած հաւաքման մը մէջ՝ Մայիս 14ի իրիկուեր : Ծ. Խ.

Քսաներորդ դար . ահա ինչ որ բաղդը շնորհած է մեզ՝ միջոցի ու ժամանակի մէջ մեր տեղը որոշած պահուն :

Գժբազդաբար ամենուն ներուած չէ կրկին հայրենիքները ներդաշնակօրէն սիրել . թուականի նոյնութիւնը ազգերու մէջ՝ կեղծիք մ'է . ոմանք միջին դարու թատերաբեմին վրայ են , ուրիշներ կը սպասեն քրիստոսի թուականին , կան՝ որոնց մէջ նահապետները կրնան գոյութիւններ շարունակել վրանի մ'առջև , առուակի մօտ , վերջալոյսով վերագարձող հօտը դիտելով, առանց հարկ զգալու ո՛ր և է նորութեան : Բազդաւոր են ազգերը որ բոլորովին հին , բոլորովին նոր շրջանի մէջ կ'ապրին . Եւրոպացին՝ մեծ կեդրոններու մէջ, Արաբը՝ իր ովասիսին ուր ուղտի ստուերին անցքը միայն կը տեսնէ : Բայց կան ազգեր՝ որ երկու տեսակին ալ կը պատկանին . — Հայութիւնը մին է ասոնցմէ :

Մեր ազգի մէկ մասը եւրոպական կեանքով կ'ապրի , միւսը՝ ասիական . մեր երիտասարդութիւնը կը կրթուի Արեւմուտքի մէջ՝ գործելու համար Արեւելքի խորը : Հակասութիւն մը կայ մեր մտածման ու կեանքին , մեր գաղափարականի եւ իրականութեան , հայ մտաւորականութեան և հայ ժողովուրդին միջև :

Այս հակասութիւնը յառաջ կը բերէ մեր ազգային գոյութեան խորունկ անհաւասարակչութիւնը :

Միշտ ականատես օտարներու կարգացման՝ անկարող կը դառնանք գոյութեան տարբեր եղանակ ըմբռնելու . ներկան ճանչնալէ վերջ՝ չենք հանգուրժեր ետ նետուիլ անցեալին մէջ, մեր նախնեաց հետ ապրելու համար . կ'որոշենք մեր ժողովուրդը մէկ թուիչքով հասցնել բարձրութեան վերջին կէտին ուր է մարդկութիւնը : Բայց բնութեան ոխակալ օրէնք մը կը պահանջէ յառաջել աստիճանաբար : Ոստումը ճանապարհը կը համառօտէ , — եթէ պատճառ չըլլայ անգունդին մէջ գլորման : Թուիչքի յանդգնութիւնը գեղեցիկ է , բայց գահավիժումը վարը կը թափառի անոր հետ՝ իբր ստուեր : Վսեմ է Արկաններէն վեր սաւառնիլ՝ եթէ վախճանը ողբերգական չըլլայ :

Ինչպէս կարելի է հաւատարիմ ըլլալ թէ՛ մեր ազգին և թէ՛ Քսաներորդ դարուն : Ինչպէս կարելի է մեր ձգտումները համաձայնեցնել մեր

իրականութեան, յառաջագիմական գաղափարներուն բոլոր օգուտը հաղորդել հայ ժողովրդեան՝ առանց ենթարկելու զինք այն վնասներուն որ անխուսափելի են իր վիճակէն և իր ուժէն վեր ձգտող ամէն անհատի, ահա նիւթը որու մասին կ'ուզէի խօսակցիլ այս երեկոյ :

Յօդուածով մը ջանացած էի — առանց յուսարու — հայ մամուլի ուշադրութիւնը դարձրնել Հայրենիքի գաղափարին շուրջ. առիթը տրուած էր երկու կենսական երկերէ հայ խորհողի մը՝ զոր պատիւն ունինք մեր մէջ ունենալու (\*): Իր եզրակացութիւնները՝ մեր ամենէն ազդեցիկ կուսակցութեան մէջ տիրապետող՝ չափազանց կարեւոր են, չափազանց կենսական՝ որպէսզի Հայութիւնը իր սովորական չէզոքութեան մէջ մնայ. պէտք է ընդունիլ կամ հերքել: Փարիզի հայ ուսանողութիւնը, բանավէճի աւելի կենդանի ձև մը տալու համար՝ ազնուութիւնն ունեցաւ բանախօսութեան մը հրաւիրել: Կրկնութենէ խոյս տալու համար է միայն որ կ'ընդլայնեմ նիւթիս շրջագիծը, առիթ ունենալու համար ազգային արդի խնդիրներ շօշափելու: Գրութեան պահուն՝ ձայնը կը կորսուի ծովերու մրմունջին վրայէն անցնելով. շնորհակալութեամբ կ'ընդունիմ առիթը հայրենակիցներու հետ խօսելու ուղղակի, սրտէ սիրտ:

Ա.

Քսաներորդ դարու գաղափարները ձեռք ձեռքի տուած կը յառաջն են երեք խմբով. Ընկերական, Գիտական, Գրական: Արդարութիւնը, ճշմարիտ ու Գեղեցիկը բոլոր դարերու երազն էր. բայց իւրաքանչիւրը կը ջանայ գայն մէծագոյն չափով իրագործել. կ'աճին պահանջները՝ նիւթական կեանքի, մտքի և սրտի:

Ընկերական պայքարը շատերու համար՝ քրիստոնէութեան թշնամին է. բայց աս կը յիշէ — գէթ ինքը — թէ գերիներու ազատարան եղած է. հրաժարած չէ իր պատմական դերէն: Զրկուածներուն համար չաշխատիլը անբարոյական է ինչպէս ըսել: Ցաւը անմխիթար պէտք է մնայ, անիրաւութիւնը՝ անվրդով. այս խօսքը պիտի չգտնենք Աւետարաններու մէջ:

(\*) Կ'ակնարկուի Պ. Մ. Վարաճեանի:

Ցարակոյտէ վեր է թէ պէտք է օգնել մարդկութեան, և բնականաբար մեր օգնութեան կարօտ եղող մարդկութեան:

Պէտք է Հայութեան աշխատող դասակարգը երջանկացնել, բայց ի՞նչ միջոցով. ահա առեղծուածը:

Մեր մէջ գիւրիս եղանակ մը հնարուած է՝ հաւասարապէս յարմար ամէն կարգի առեղծուած լուծելու. դիտել թէ եւրոպական ազգեր ի՞նչ կ'ընեն: Բայց մեր կեանքը անոնց կեանքի հակասեան ըլլալով, անոնք ազատ ժողովուրդներ ըլլալով՝ ու մենք ճնշուած, յաճախ պէտք է ճիշդ անոնց գործածած միջոցին հակառակն ընտրել յառաջ բերելու համար միւսնոյն արդիւնքը: Նման ենք հին նաւորներուն՝ որ առագաստին կը յանձնէին իրենց մթնոլորտի հողմերուն. հարկ է մեր նաւուն մէջ ունենալ մղիչ ուժը: Նիւթական կեանքին մէջ կը յաջողի այն որ արտաքին պարագաներու չի յանձներ ինքզինք, այլ կ'իշխէ անոնց. նոյնն է մտաւոր շրջանի մէջ. փառքը չի՛ կայանար մեծ գաղափարներ սորվելու, այլ զանոնք կառավարելու մէջ. յիշողութենէ աւելի՝ խելքի մէջ պէտք է փնտռել մեր պարծանքը: Գաղափարական այն ասեղին սեւեռած՝ որուն ուրիշները, չենք խորհիր թէ տարբեր հող մը կայ մեր քայլերուն տակ ու թերևս անդունդ մը կը մտնենայ անոնց ներքեւէն անցնելու՝ առանց օտնաձայնի: Մտածման Վեր եղանակը հարկ է նախ սրբագրել, մտածելէ առաջ:

Հասարակութեան երկու որոշ միջոցներ կան. Միութիւն, Անջատում: Զինուոր մը բանակի կը խառնուի՝ իր ընտանիքի շահը փրկելու համար. ուրիշ մը խոյս կուտայ ինքզինք միայն խորհելով, երկիրը յանձնելով իր բաղդին. արհեստաւոր մը իր ընկերակիցներուն կը միանայ կեանքի մէջ զօրաւոր ըլլալու համար, ուրիշ մը անոնց դէմ կը խօսի՝ զանոնք նկատելով իր մեծագոյն թշնամին: Երկու քարագային ալ անձնական շահ մը կը փնտռուի, կամ ընդհանուրի շահին միացած կամ կղզիացած:

Ինքնին իրականութիւնն է որ կը վճռէ թէ կեանքի այս երկու ճամբաներէն որուն պիտի հետեւինք. Միութիւնը ցոյց կուտայ՝ երբ մերձաւոր շրջանակէն անդին ուրիշ թշնամիներ ալ կան, Անջատումը՝ երբ անհատական շահը միայն

մերձաւոր վտանգի հետ կը բաղխի: Հետեաբար երբ կ'ուզենք հայ աշխատող դասակարգի բարեւոքման միջոցը գտնել, պարզապէս հարցուցած կ'ըլլանք. մեր աշխատող դասակարգը Հայութեան շրջանակէն դուրս թշնամիներ ունի՞, թէ միայն իր մէջն է ան:

Ամէնքը համաձայն են ընդունելու՝ թէ մեր գոյութեան մէջ կան ճգնաժամի բոլորներ ուր Հայութեան կեանքը վտանգի մէջ է, թէ այդ արիւնալի առիթներուն պէտք է մոռնալ ամէն ինչ և թէ փրկութեան միակ ճամբայ մը կը մնայ, — Միութիւնը: Ամէն գը կ'ընդունի թէ Հայութեան համար՝ պատերազմական դրութեան մէջ՝ դասակարգի պայքար գոյութիւն չունի: Բայց կ'ուզէի հարցնել թէ ե՞րբ կը դադրի պատերազմի վիճակը, ե՞րբ է որ կը սպառնացուի մեր գոյութեան. այն պահուն ուր թիւրք խուժանը խողխողելու կ'ելլէ. բայց, պարոններ, նիւթական հարուածները չեն ամենէն աւելի ազգի մը մահաբեր. խաղաղութիւնը մեր ամենէն վտանգաւոր խաբեբան է. դաշոյնէն զատ՝ նեկտարի խառնուած թոյնն ալ կայ: Կայ մեր դէմ՝ ցեղական պայքարը, դիւանագիտութեան ձեռքէն մղուած. իր հարուածը չափուած է ուղղակի մեր սրտին: Ան կը ջանայ ազգային զգացմանց աղբիւրը ցամբեցնել: Ատանգը գրեթէ հրապուրիչ է հոն, որովհետեւ քաղաքակրթութեան մ'անուամբ կուգայ: Կայ մեր դէմ՝ ցեցեսական պայքարը որուն մղողները աշխատողն և հարուստը չեն զանազաններ հայ անուան ներքեւերկուքն ալ միասին պիտի տուժեն, և թշնամուոյն օգտակար ծառայութիւն մը պիտի մատուցանեն՝ իրարմէ բաժնուած ժամանակ: Հայ աշխատաւորին՝ իր բաղաւորագոյն հայրենակիցն է միայն նեցուկը, ապաւէնը. անկից բաժնուած ժամանակ պէտք չէ յուսալ որ հրէայ, յոյն կամ թիւրք հայրենասէր մը անոր դառն ճակատագրին վրայ արտասուէր: Կայ վերջապէս կրօնքի գանազանութիւնը՝ Արեւելքի մէջ ա՛յնքան խոր, պատճառ ա՛յնքան լուռ ատելութեանց և որուն համար ո՛չ միայն դասակարգի, այլ ազգերու անգամ տարբերութիւն չկայ: Աերջապէս ամէն ասպարէզի մէջ ուր թշնամութիւնը կրնայ գոյութիւն ունենալ՝ այլևայլ ձևերով կը սպառնայ Հայութեան. խաղաղութիւնը կ'ողջունենք, անմիջապէս երբ կուռի եղանակը կը փոխուի:

Մեր կեանքը պատերազմի գիշեր մ'է ուր բաղխումը արդէն դադրած է, բայց ուր աւելի գիւրիւն զո՛հ պիտի երթանք՝ երբ մոռնանք մութի ու լուութեան մէջ պատրաստուած դարանները:

Այսրկեան մը սակայն աչքերնիս փակենք տխուր իրականութեան, մարդկային նոր ընկերութիւնը երազելու համար. շնորհներ մեզ — քանի որ ուրիշները կը զլանան — ենթադրեալ խաղաղութիւն մը: Բայց եթէ վտանգի փոթորիկը հորիզոնի՞ն վրայ յանկարծ կանգնի: Ա՛վ կարող է երաշխաւորել թէ միութիւնը նոյնհետայն պիտի իրագործուի: Հայ մտաւորականութիւնը կարող է այդ բոլորէն մոռնալ ամէն ինչ. բայց ի՞նչ պատասխան պիտի գտնէ նուազ հրահանգուած տարրերէ: Ա՛վ կ'երաշխաւորէ թէ թոյլ պիտի չտան զիրենք նեղող դասակարգի մը — որովհետեւ այդ պարագաներուն հայ ժողովուրդի աշխատող մասն է որ աւելի զոհեր կուտայ — միայնութեան մէջ փճացումը: Բոպէ մը բաւական է պալատ մը կործանելու, բայց ոչ նաեւ բարձրացնելու. ատելութեան ծնունդը աւելի երազ է քան սիրոյ դարձը. անջատուած շուտ կ'իրագործուի, միութիւնը՝ հրեմն դարու մը գործն է:

Բայց կարելի է նոյն իսկ տարակոյսի ենթարկել թէ հայ ընկերական կեանք մը գոյութիւն ունի: Յաճախ կ'երեւակայեմ հայ գիտնական մը — և մեր մէջ չեն պակսիր այս դերին յարմար զարգացած անհատներ — որ մոռնար եւրոպական ընկերաբանութեան հրահանգները, բայց ի մեթոտէն՝ Արեւելեան ընկերաբանութիւն մը գրելու համար. Ասիոյ քարտէսին առջին դիտէր ժողովուրդներու յարաբերութիւնները. ի՞նչ ունին հասարակաց, ի՞նչ ունին առանձնական. կլիման, դարաւոր զրացիութիւնը ո՛ւր կը միացընեն զիրենք, կրօնքն ու ցեղը ո՛ւր կը բաժնեն. ո՞ր դեղը պէտք է հասարակաց ըլլայ՝ ո՞րն առանձնական: Այս գիտնականը պիտի կարենար ապացուցանել՝ թէ շատ երեւոյթներ որ հայ կեանքի մաս կը նկատուին, իրմէ մեծագոյն ամբողջի մը կը պատկանին, ցոլացումներն են շրջապատող ասիական կեանքի. թիւրք պաշտօնեայի մը հոգեբանութիւնն է որ յաճախ երեւան կուգայ տեղափոխուած: Պէտք է ուրեմն պատճառը վերցնել՝ արդիւնքը խափանելու համար:

ինչ օգուտ յստակել վտակ մը երբ թերութիւնը աղբիւրին մէջ է, մաքրել անիւ մը՝ որ աղմուտ ճանապարհէ պիտի անցնի. պէտք է խորհիլ ամենէն առաջ աղբիւրին ու ճանապարհին վրայ:

Հայոց համար ընկերական գործունեութեան առաջին սկզբունքը պէտք է ըլլայ՝ զայն երբէք չսահմանափակել հայկական շրջանակի մէջ: Անօգուտ է յուսալ թէ մահմետականներու մէջ ցրուած Հայութիւնը կարելի է բարոյապէս կղզիացնել և ընկերական դրսիստ մը կազմել անկէջ: Դիւրին է այդ, երևակայութեան մէջ բայց ոչ նաև իրականութեան՝ ուր ազգ մը կապ ունի միշտ ուրիշ ժողովուրդներու և պետութեանց հետ, մանաւանդ երբ տիրապետողն անոնք ըլլան: Արեւմտ հայ մտաւորականութիւնը իր ընկերական պայքարը պէտք է գետնից հայ շրջանակէն դուրս, ընդհանրացնէ բոլոր թուրքիոյ վրայ, ամբողջէն պէտք է սկսի՝ իջնալու համար մասնականին. իր քարոզներու լեզուն պէտք է ըլլայ ամենէն առաջ և երկար ժամանակ՝ Թուրքերէնը: Եթէ հայ ընկերաբաններ իրենց բոլոր ուժը կեդրոնացնեն Հայութեան մէջ՝ ան պիտի յառաջէ ուրիշ ազգերէ պատուած — որովհետև անոնց պետական կազմը, կրօնքը, ցեղական շահասիրութիւնը, և մանաւանդ խոհեմ իրապաշտութիւնը նոյնքան յարմար հող չընծայեր ընկերավար քարոզներու — և Հայութիւնը պիտի ընկնայ այն պատուաբեր բայց կործանարար միայնութեան մէջ որ իր բոլոր անցեալի սխալն է և իր ապագայի վտանգը: Յիրաւի, եթէ կայ տեղ մը՝ ուր կղզիացումը ամէն ճիգ կ'ոչնչացնէ, ընկերական պայքարի դաշտն է. անոր ուժը ամբողջի՝ աշխատակցութեան մէջն է. մասնական շարժումը կը նշանակէ հոն՝ պարտութիւն, վիճակի վատթարացում. ի՞նչ օգուտ — օրինակի համար — հայ աշխատողներու ցոյցերէն, երբ օտար ազգեր այնքան բազումներ կրնան դնել հայ դրամատէրի տրամադրութեան տակ: Ընկերական զարգացման մէջ Հայութիւնը պէտք է ընթանայ Թիւրքիոյ միւս ազգերուն հետ բացարձակապէս միաբայլ. հակառակ պարագային ան սահմանուած է զոհ երթալու ինչպէս ջոկատ մը, որ բանակէն կը զատուի, օգտակար ծառայութիւն մը մատուցանելով թշնամեաց՝ որոնց վնասելու անկարող ըլլալէ զատ՝ պիտի չկարողանայ իր գոյութիւնն

իսկ պաշտպանել: Միայնութիւնը. — ահա մեր դարաւոր թշնամին: Թիւրքիոյ բոլոր ազգերուն մէջ ճիւղաւորուած հայ ընկերական գործունեութիւն մը, պատմական մեծագոյն դեր մ'է, խոհեմագոյն գործելակերպ մը, և կը համապատասխանէ քաղաքական այն ուղղութեան որ լաւագոյն արդիւնքներ ստացաւ ընդհանուր Թիւրքիոյ բարեօրբան աշխատելով, քան ջանալով զատել Հայաստանը իր պատմական և աշխարհագրական շրջանակէն, զայն բացառութիւն մը ընելու համար: Յառաջե՛լ աւելի դանդաղ, բայց մեծագոյն զանգուած մը քարշ տալով: Յաղթութեան լաւագոյն միջոցը գահավէժ նետուիլը չէ, այլ գիտնալ սպասել՝ մինչև անոր ապահովումը:

Բայց այն ժամանակամիջոցին ուր Հայութիւնը պէտք է կանգ առնու մինչև օտար ազգեր հասնին իրեն և աջակցին հասարակաց գործունեութիւն մ'ունենալու համար — միակ տրամաբանական գործունեութիւնը որ կարելի է — ոչինչ կ'արգիլէ հայ կուսակցութիւնները աշխատիլ ի նպաստ Հայութեան գործաւոր դասակարգին. աշխատիլ՝ ոչ թէ անջատող պայքարի միջոցով — որովհետև եթէ պայքարը օգտակար է ազգ մը լծացեալ վիճակէ հանելու համար, պէտք է դիտել սակայն որ Հայութիւնը արդէն արտաքուստ հարկ եղածէն աւելի առիթներ կ'ընդունի մաքառելու, — ո՛չ թէ իրարու կասկածելի ընելով հայ հարուստ և աշխատող դասակարգերը — վասն զի տեսանք որ երկուքն ալ հասարակաց ու միշտ սպառնացող թշնամիներ ունին — այլ Միութեան ճամբով: Հայ աշխատաւորը՝ իր շահը բարգաւաճ պիտի տեսնէ ընդհանուր Հայութեան շահին մէջ. պիտի բարեօրէ իր դիրքը նոյն իսկ հայ հարուստին միջոցաւ:

Երևակայենք յիրաւի վայրկեան մը թէ մեր ընկերական-գործիչ կուսակցութիւնները յայտարարեն թէ առանձին հայկական-ընկերական դատ մը չեն ծանշնար, այլ թէ իրենց նպատակն է ամբողջ Թիւրքիոյ տնտեսական կազմակերպութեան բարեօրումը՝ որմէն կախում ունի նաև ազգայինը, թէ մինչև միջազգային ընկերական պայքարի մը հնարաւորումը Թիւրքիոյ մէջ՝ միայն բաւոյական միջոցներով պիտի ջանան հայ աշխատաւորը երջանկացնել, փու-

Թով պիտի տեսնուի թէ կարելի է իրական մեծագոյն արդիւնքներ յառաջ բերել խողաղ ճամբով, քան բուն միջոցներով՝ որ արդէն հետզհետէ իրենց հմայքը կը կորսնցնեն մարդկութեան մէջ, իբրև աւելի վնասակար և հակազդեցութեան նպաստող:

Ամէն օր կը հաւաստենք առատաձեռնութեան նոր օրինակներ հայ հարուստ դասակարգին մէջ՝ ի նպաստ ազգային կրթութեան կամ այլ բարձրագոյն հաստատութեանց. կան շահու, հայրենասիրութեան և բարոյական զարգացման շարժառիթներ որ անոր ուշադրութիւնը կարող են դարձնել նաև հայ աշխատող դասակարգին վրայ, եթէ սա չներկայացուի իբրև թշնամի մը՝ այլ իբր եղբայր: Շահու պատճառներ. հայ դրամատէր մը ինքնին պիտի խորհի հայ աշխատողներու վիճակի մասին, եթէ ապահով ըլլայ որ միւս կողմէն պիտի փոխարինուի ազգի ազգեցիկ կուսակցութեանց բարեկամութեամբ և աջակցութեամբ. հայրենասիրութեան պայծառներ. ազնիւ զգացումը, որ այնքան գեղեցիկ ներշնչումներ կը թելադրէ հայ բարերարներու, իր մեծամեծ ուշադրութիւնը պիտի դարձնէ այն գանգուածին ուսկից կը ծնանի մեր բոլոր մտաւորական և նիւթական ուժը. բարեգործութեամբ անմահանալու գեղեցիկ փառասիրութիւնը յարմարագոյն առարկայ պիտի չգտնէ քան ժողովուրդը ինքնին, ժողովուրդը որ համարութիւնն է բոլոր դասակարգի, բոլոր սրտերու, բոլոր սերունդներու. վերջապէս բարոյական պատճառներ՝ զոր նրբացած կրթութիւնը, զգայնութեան զարգացումը զպրոցներու և մամուլի շնորհիւ կարող է յառաջ բերել: Պէտք է ընկերվարութիւն քարոզել ո՛չ հայ աշխատաւորին, այլ հայ հարուստին. աշխատութեան զգացումը աւելի արդիւնքներ յառաջ պիտի բերէ վերջնոյս միջոցաւ՝ քան առաջնոյն անգոր և վնասակար ձգտումներով: Եթէ խողաղ միջոցներու աներեւոյթ բայց հրաշագործ ուժը անբաւական է այս «նիւթապաշտ աշխարհի մէջ հայ աշխատաւորին աւելի հանդուրժելի դիրք մը տալ. պէտք է ցաւիլ միայն որ ճակատագրէն դատապարտուած ենք զուրկ մնալու լաւագոյն միջոցներու. եթէ դեղ մը հարկ եղածին չափ զօրաւոր չգտնենք, այդ պատճառ մը չէ թոյնին դիմելու:

Մէկ քանի օր առաջ, Տիկնայք և Պարոններ, առիթ ունեցայ Մայիս 1ը տեսնելու Փարիզու մէջ. ամէն փողոցէ կայծակի արագութեամբ կը թռչէին կառախմբեր. անոնց կանգ առած պահուն, ամբոխ մը կը ժայթքէր դռներէն. բազմութիւնը հեղեղներու երեւոյթն ունէր. կը ծովանար քոնքորտի հրապարակին վրայ: Ամէնքը սոնական զգեստով պճնուած էին. նորածին կանաչութիւն մը՝ կուրծքերու բարախումբը ըզգալով, գարնան օդը կը չնչէր: Աերը ամպեր կը զիզուէին, տժգոյն լոյսի մը տակ. դէմքերու վրայ գայրոյթը յոյսի ցոլքին կը խառնուէր: Ամբոխը կը զիզուէր բողբոխի ժամադրավայրը. բայց զայն գրաւուած կը գտնէր վիշապազօրքէն Ջրահներն և գարգամանկները շողեր կ'արձակէին արևուն տակ՝ վարժ այնքան անիրաւութեանց, և ժպտող՝ գաղափարապաշտներու վրայ: Գարերու ծանրութիւնը կը ճնշէր հոգիներու վրայ: Անցեալը կանգնած էր հոն իր անթափանց գրահով, յաղթական. ապագան տօնող ամբոխը կը շրջէր կանաչութեանց մէջ, լուռ՝ բայց հետզհետէ աւելի գրգռուող առիւծի նման, բողբոխ իրաւունքէն անգամ զրկուած: Կը ձեմէին «այսօրուան» վայելողները՝ «վաղը» ուրախութեամբ ուրիշներու թողլով. յուսախաբութեան մթնոլորտը կը ճնշէր, յոյսի ցոլքը կը մարէր, կանաչութիւնները կը տժգունէին, և տեսարանը միակ արտայայտութիւն մը կը մնար. — տառապանքի եղբայրութիւնը: Ապագան՝ սուկիներու սպառնալիքին առջև՝ հետզհետէ կը հեռանար, կը կորսուէր, հորիզոնէն անհետացող ամպերու նման:

Խորհեցայ, պարոններ, որ հայ երիտասարդ մը, սկանատես այսպիսի տեսարաններու, անխուսափելի կերպով պիտի ենթարկուի ամբոխի մագնիսականութեան. այնքան պիտի տոգորուի իր մէջ արդարութեան զայրոյթը, տեղւոյն մտաւոր մթնոլորտը այնքան տեսական կերպով պիտի տիրէ իր հոգւոյն, որ նոյն յուզումներով պիտի մտնէ նաև իր հին երկրին մէջ. ինչպէս օտար լեզուով մտածելու վարժուած միտք մը կ'աղաւաղէ իր լեզուն, մտքի վարժութիւններն ալ յաճախ իրականութիւնը կ'այլափոխեն տարբեր ձեւերու և գոյներու՝ անգիտակցաբար. օտարացման ամենէն տխուր աստիճանն է չանդրադառնալ նոյն իսկ այդ օտար

բացումը: Բայց փոխադրեցէք մտքով մեր հայրենիքի մէջ Մայիսի 1ի տեսարանը. չեմ կարծեր որ նոյնքան խաղաղ վերջ ունենար ան և կարելի ըլլար վերադառնալ նոյն ճամբէ առանց զայն տեսնելու արամբ ներկուած կամ ծածկուած զիակներով: Խորհեցայ, Պարոններ, որ եթէ Եւրոպայի ամենէն զարգացած կեդրոնին մէջ գաղափարականը դեռ այնքան հեռու է, իրականութիւնը դեռ այնքան անողոր, ինչպիսի՛ յանգգնութիւն է փոքր ազգի մը համար մարդկութեան ամենէն մեծ աւելցումներ լուծելու ելլել, ինչպիսի խղճահարուցումն՝ ինքզինքը սկզբունքի անհաւատարմ նկատելը, երբ իր առժամանակեայ գործունէութիւնը զատէ հեռուոր գաղափարականէն, — ազգի մը համար զոր բռնաւոր անհատը կը ճնշէ, զոր բռնաւոր ցեղեր ջնջել կը փորձին:

Ազատութիւն կ'ազդակենք յաճախ առանց խորհելու, որ լաւագոյն ազատութիւնը մտքինն է. տխուր է գերի ըլլալ հոգեբանօրէն՝ նոյն իսկ անկախութիւնը փնտռած պահուն: Պէտք է խզել կորովի բազկով մեր ամէն կապերը գրքերու պատկառելի վարդապետութեանց հետ և փոխադրել ողջմտութեամբ ամենէն բնական բնագործ, անհատական եսասիրութիւնը, — ո՛չ շահմոլ և անիրաւ, այլ բարոյական եսասիրութիւնը, — ազգային գործունէութեան ասպարէզին վրայ: Ահա ամենէն պարզ ճամբան ազգային ճակատագրին վրայ խորհելու, առանց փառասիրութեան, առանց նախապաշարունակելու, առանց օտար տարրի ենթարկուելու:

Ռուսոյ իր «խոստովանանք»ներուն մէջ կը պատմէ թէ Խվերտոն գտնուած ժամանակ հանդիպեցաւ հայ ընտանիքի մը յաճախ այցելութեան եկող նոյնազգի վաճառականի մը. փիլիսոփայ բանաստեղծը այնքան հաւնեցաւ Հայոց տարագրին՝ որ անմիջապէս որոշեց — ինչպէս իր սովորութիւնն էր—նոյն զգեստով շրջիլ. յետ միանգամ կիրակի օր անով հանդիսապէս ժողովրդեան ներկայանալու՝ շարունակեց մինչև իր մահը նոյն դարու հայկական զգեստը կրել: Քիլիստփային մէջ հայ ազատականութեան պատկերը կը փափագիմ տեսնել. ազա՛տ իմաստասիրութիւն, եթէ կ'ուզէք, բայց գոնէ, բայց յամենայն դէպս՝ ազգային տարագով:

Բ.

Քսաներորդ դարու մեծ շարժումներէն մին

է գիտականը. ո՛չ որ կարող է անտեսել անոր օգուտները՝ Հայութեան. պէտք է զայն ընդունիլ իր բոլոր յորդութեամբ, բոլոր ճիւղաւորումներով: Կարելի չէ գանգատիլ — առանց սրտունջի մասնաւոր վարժութեան — թէ Հայութիւնը հետամուտ չէ գիտութեան. բայց եթէ իր ճիգը ազատ է պարսաւէ՛ ո՛չ նաև գործի եղանակը: Էլիգէ Ռըքլիւ Փրանսացի հանրածանօթ աշխարհագիրը՝ Հայոց համակրող՝ հետեւաբար գիտողութիւնը կ'ընէր. «Հայերը իրենք զիրենք չափազանց լուրջի կ'առնեն. թէպէտ սքանչելի բանաստեղծներ ունին՝ գեղեցիկ ոտանաւորները չեն դաշխի իրենց սրտին. գիտական գրականութեան միայն կարեւորութիւն կուտան»: Եւրոպական ազգերու մէջ հմտութիւնը նիւթական կեանքը կ'ապահովէ՝ ուսուցչապետական ասպարէզին մէջ. զարգացած անձերու բազմութիւնը իւրաքանչիւր անհատը կը ստիպէ իր հողի անձուկ սահմանին մէջ մնալու. հմտութեան յայտնած նորութիւնները աւելի շօշափելի ըլլալով մտաւորականին համար աւելի ապահով ճանապարհ կը բանայ յաճախ դէպ ի համբաւ: Այս պատճառաւ եւրոպական մտաւոր կեանքի մէջ՝ ու մասնաւորապէս գերմանականին՝ հմտութիւնը ուշադրութեան արժանի երեւոյթ մը կը գառնայ: Նոյն եռանդը յաճախ փոխադրուած կը գտնէք նաև հայկական շրջանակի մէջ առանց ո՛ր և է աստիճանաւորման, առանց ո՛ր և է փոփոխութեան, — ազգի մը մէջ՝ որ վերածնութեան խորհրդաւոր րոպէին մէջ կը գտնուի: Գեղեցիկ գրականութեան հանդէպ հմտութիւնը այնպիսի գիրք մը կը ստանայ յաճախ մեր մէջ որ Հայ ազգը երեւոյթը կ'առնէ ծերուկի մը որուն մէջ ի վաղուց ցամքած է ամէն աղբիւր զգայնութեան և աւելնի, որուն համար ամէն ինչ որ դրական չէ ու շօշափելի՝ տժգոյն ցնորք մ'է, որ այլևս անկարող է գրէթէ ըմբռնելու, այլ միայն օգտակարը. — երեւոյթը կ'առնէ գպրոցականի մը որ լուրջ միտք մը կը նկատէ ինքզինք՝ իմաստասիրական — օրինակ իմն — գիրք մը կարգալ կարենայուն համար. ինչ փոյթ թէ անկարող է ո՛ր և է նոր խորհրդածութեան, բաւական է որ հարկ եղածին չափ յիշողութիւն ունի ուրիշներու յայտնութեանց կատարելապէս տեղեակ ըլլալու համար:

Առանց ուրեմն ամենէն առաջ հմտութեան գերը չափազանցելու ի վնաս ճշմարիտ գրակա-

նութեան, ուսկից ուղղակի կախում ունի ազգի մը հոգեկան վերածնունդը, առանց վերջինս խեղդելու անտարբերութեան մէջ, իբրև Հընդ-կաստանի կամ Ամերիկայի հրաշագեղ բոյսերը՝ ցուրտ կլիմայի մէջ փոխադրուած, պէտք է հմտութիւնը մշակել ծրագրով, դասակարգելով անոր ծիւղերը՝ իրենց հայ ազգին նկատմամբ ունեցած կարևորութեան համեմատ, վերջապէս հրաւիրելով զայն հայրենասիրութեան զինուորուելու, ոչ թէ միայն անհատական օգուտի կամ հաճոյքի, ինչպէս կարելի է ընել մեծ ազգերու մէջ: Հմտութեան հանրային օգտակարութիւն տալու համար՝ պէտք է ան բաժնուի երկու որոշ ծիւղաւորումներու, մին եւրոպական լեզուով, միւսը՝ հայկական:

Ըստ բաւականի նկատի չառնուելի թէ եւրոպական համալսարան մը ինչ կերպով կրնայ օգտակար ըլլալ ազգային շահերու: Հոն է որ մասնագիտութիւնը ուսուցչապետէն կ'անցնի ունկընդիր երիտասարդութեան, վերջինէս՝ հասարակութեան. հմտական ծանօթութիւնը համալսարանէն կ'ելլէ մեծ մթնոլորտի մէջ, կը ժողովրդականանայ, կը կերպարանափոխուի համակրութեան և սիրոյ: Հայութիւնը ջանացած է միշտ իրեն նպաստաւոր դարձնել կամ գէթ ծանօթ, եւրոպական ժողովուրդներուն հասարակաց մտածումը. արդ այս երկուքին միջեւ անջրպետը այնքան մեծ չէ թէ գիտնանք իբրև միջնորդ գործածել ուսուցչապետն և ուսանող երիտասարդութիւնը: Բայց այս արդիւնքին հասնելու համար հարկ է որ հայ-մասնագիտական երկերը հրատարակուին եւրոպական լեզուով. ունինք այնպիսի գանձեր, չգորս գիտական աշխարհը պիտի ընդունի անյագօրէն. ինչո՞ւ հրատարակել հայ լեզուով այն իգրութիւնները՝ որոնց մեր ազգը դեռ պարտք չունի գնահատողն ըլլալու և որոնցմով հետաքրքրուողները կը գտնուին այլուր. հայ մտաւորականութիւնը այնքան անտեղեակ չէ եւրոպական լեզուներուն որպէս զի իրեն համար քիչորուստ մ'ըլլայ մասնագիտական գործերու հարկական լեզուով հրատարակումը:

Այս միջոցը թոյլ պիտի տայ հայ բանասէրին գործածելու գիտական խիստ մեթոտը՝ զոր հայ հասարակութեան համար ամօքելու ստիպուած էր: Այսպէս մասնագիտութեան ամենէն հա-

մեստ հողին վրայ աշխատողը կը դառնայ գրեթէ հայրենասէր գործիչ մը՝ տարածող իր ազգի համբաւին: Համալսարանը ամէն պետութեան համար միջոց մ'է իր ազդեցութիւնը դորացնելու. եթէ չունինք այսպիսի հաստատութիւններ՝ կարող ենք եւրոպականները ամենայն դիւրութեամբ նոյն նպատակին գործածել: Հայերէնի պէտք է վերապահուին այն գրութիւնները՝ որ ժողովրդեան մէջ պիտի սիրուեն մասնագիտութեան եզրակացութիւնները և պիտի խօսին անոր սրտին: Այսպէս հայ գիտական գրականութիւնը պիտի շնորհայանայ այլ ևս իբր հին սիւներու և քանդակներու կոյտ մը, այլ ամբողջական շէնք, սահմանուած մեր գանձերուն թանգարանն ըլլալու:

Գարուս ամենէն մեծ յատկանիշն է հազորդակցութեանց դիւրացումը. անջրպետը կը սպանուի. կը կռուի մարդս միջոցին հետ. հազորդակցութիւնը պատմութիւնը կը փոխէ. բայց իր տեսակներուն մէջ կարևորագոյնն է գաղափարի փոխանակութիւնը. ասոր առաջին միջոցն է լեզուն. կը հասնինք խնդրոյ մը որ ներկայապէս հայ մամուլը կը զբաղեցնէ և որուն վրայէն կարելի չէ անցնիլ լուելեայն:

Միայն Հայութիւնը չէ՝ որ կը գտնուի երկու գաւառաբարբառի միջև ընտրելու հարկին մէջ. շատ ազգեր անցած են այդ շրջանէն. ամենէն առաջ պէտք է պատմութեան հետ խորհրդակցիլ. կեանքը հոն է իր անշեղելի ընթացքով:

Գրական լեզուն բնական է միայն մէկ գաւառի համար (օրինակ իտալերէնը՝ Թոսքանայի) և արհեստական միւս գաւառներու համար (Անետիկ, Նափոլի, Հռոմ): Այդ գրական իտալերէնը ելած է Ֆանդէի արքայութենէն. հանձարի երկը գրական կեդրոն մ'եղաւ, ապագայ գործերու կաղապարը: Ֆրանսայի մէջ լեզուական միութիւնը յառաջ եկաւ քաղաքական կեդրոնացումէ. Իլ տը Ֆրանսի լեզուն յաղթանակեց վերջնականապէս երբ Ֆրանսուս Ա. զայն յայտարարեց պաշտօնական լեզու: Ֆիրէնցէի քաղաքակրթութիւնը, Փարիզու գերիշխանութիւնը տիրապետող տարրեր եղան:

Այսպէս գրական լեզուի միութիւնը յառաջ եկած է միշտ բունապետութենէ մը, մտաւոր կամ քաղաքական: Ուժերու կատարեալ հաւասարութեան մէջ ձուլում յառաջ չի գար. միու-

Թիւնը մէկ մասի տիրապետումն է. տիրելը առաւելութիւն մը կ'ենթադրէ. Պոլիս և Թիֆլիս նժարներու նոյն մակարդակին վրան են: Եթէ պատմական անցեալով ապագան գուշակենք՝ հայ երկու գաւառաբարբառներու միութիւնը յառաջ պիտի գայ 1) կամ երբ ամբողջ հայութիւնը գտնուի մէկ տիրապետութեան ներքև և Հայութիւնը մտաւոր մէկ մեծ կեդրոն ունենայ և կամ 2) երբ ունենանք կրթական հեղինակութիւն մը — ինչպէս նախարարութիւնը՝ եւրոպական տէրութեանց մէջ — որ մեր բոլոր դպրոցներուն միակ կրթական ծրագիր մը ընծայէ և միջոց ունենայ գայն գործադրելու:

Ծայրայեղ լաւատեսութիւն հարկաւոր է կրկին լուծումներէն մին կամ միւսը ներկայապէս կարելի նկատելու համար: Բայց եթէ երբէք այդ առիթներէն մին ներկայանայ՝ ո՞ր գաւառաբարբառը պիտի յաղթէ: Պէտք է դիտել որ պոլսահայերէնը քնքուշ է, կովկասահայերէնը կոտորի: Արդ, լեզուներու պայքարին մէջ, միշտ փափուկն է որ կը յաղթէ: Հռովմայեցիք տիրեցին Արևելքի և սկսան յուներէն խօսիլ, Փրանկները ողողեցին Գաղղիա և իրենց գերիներու լեզուն առին: Բնական փառասիրութեամբ՝ ամէն քաղաքականացեալ մարդ կը խորշի շինական շեշտէ և փափուկ լեզուն կը նախընտրէ, եթէ նոյն իսկ հրապուրուած չըլլայ ներգաշնակութեան համարէն: Բայց երաժշտական արժէքէն դուրս՝ պոլսահայերէնը ամէն տեսակէտով ստորին է կովկասահայերէնէ. նախ պոլսահայերէնը հարկ եղածին չափ աշխարհաբար չէ. լեզուաբանօրէն՝ հին և նոր բարբառի միջև եղած ամենէն կենսական տարբերութիւնն է նոր լեզուի վերլուծման ձգտումը. հինը մէկ բայով կը բացատրէ ինչ որ նորը օժանդակով ու դերբայով. (լատ. amor, իտ. sono amato, գր. je suis aimé, ևն.). վերլուծման այս ուժը պոլսահայերէնի մէջ շատ մասնական է. չեմ սիրեր, պիտի երթամ: Ընդհակառակն ուսսահայերէնը ո՛չ միայն ֆրանսերէնի պէս կրաւորականը վերլուծած է (տեսնուում եմ) այլ նաև ներգործականը (գնում եմ): Ուրեմն պոլսահայերէնի համար լեզուաբանական անխուսափելի յեղաշրջում մը կը սպասէ՝ որ հաւանօրէն պիտի ըսենք եմ սիրեր, եմ սիրուեր փոխանակ կը սիրեմի (ինչպէս կարելի է ժխտականէն գուշակել). արդ

կովկասահայերէնը անցած է այդ շրջանէն. տեսնուում եմ, գնում եմ, ահաւասիկ ճշմարիտ, միջպայային իմաստով աշխարհաբարբ: Ստոյգ է որ կովկասահայերէնի քանի մը ձևեր գրաբարէ աւելի հեռի կ'երևին, օրինակ ից բացառականը (քաղաքից). բայց այդ գրաբարի յոգնակի բացառական մ'է (ի բանից, ի մատենից) ընդհանրացած նաև եզակիի մէջ, ճիշդ ինչպէս Chasteau(x) միայն յոգնակի ձևը տիրած է նաև եզակիի՝ փոխանակ հին Chastelի, ևն. կովկասահայերէնի մէջ ողջ ձայնաւորներ կը հնչեն. տեսնում եմ, գնում եմ, հոռմէական ձևեր են գրեթէ և հայերէնի մէջ վերջընթեր շեշտի գեղեցկութիւնը կ'աւելցնեն. եթէ լեզուն մաս մ'ունի ազգային նկարագրի մէջ (ինչպէս կարելի է մտածել՝ իտալերէնը, գերմաներէնը, ֆրանսերէնը զիրենք խօսող ազգերու հետ համեմատելով) կովկասահայերէնը բարոյական բարձր արտայայտութիւն մ'ունի, օրինաւոր և ժառանգական գերիշխանութենէն զատ՝ զոր ունեցած է միշտ Արարատ մեր պատմութեան մէջ:

Քաղաքական և կրթական երկու միջոցներու պակասին շնորհիւ՝ գաւառաբարբառներու ձուլումը ներկայիս անկարելի է: Գժուար է որ պոլսահայ գրող մը, օրինակի համար, սկսի կովկասահայ լեզուով մտածել՝ առանց ինքն ալ երրորդ գաւառաբարբառ մը ստեղծելու, ինչ որ ներկայ գրութենէն չարագոյն վիճակ մ'է: Թողլով ուրեմն խնդիրը հնարող գրագէտ խուճիթին հաճելի ժամանց մը տալ հայ մամուլի ընթերցողներուն՝ պէտք է խորհիլ թէ ինչպէս կարելի է գաղափարներու հաղորդակցութիւնը աւելի սերտ ընել Հայութեան երկու զանգուածներուն միջև: Գպրոցներու ու ժողովրդեան մէջ պէտք է տարածել կրկին բարբառներու փոխադարձ կանոնաւոր ուսումը, այնպէս որ ամենէն կատարեալ հասկացողութիւնը հաստատուի կովկասու և Թիւրքահայաստանի միջև. ամէն գիրք երկուքին համար հրատարակուած ըլլայ: Եթէ այս առաջին աստիճանը դեռ չենք կրցած իրագործել՝ ի զուր է յուսալ բարձրագոյնին, — նոյն լեզուով գրելու: Անտարակոյս գաւառաբարբառներու տարբերութիւնը կը մնայ միշտ իբրև մեծ գիծ մը, բայց կը յիշեցնէ Զուրիցերիոյ այն անդունդները՝ որոնց վրայ առկախ կամուրջ մը նետուած է. մարդս կը զբօսնու

դատարկութեան վրայ, կը շրջագայի անգունդին վերև, կ'ընտանենայ, կը խօսակցի անոր հետ՝ իբր ամնքուած գազանի մը ժպտէր:

Գ.

Գեղարուեստական գրականութեան մէջ ալ դարն է որ կը տիրապետէ մեր մէջ, առանց հակակշիռ գտնելու անհատական ձեռնարկի, ազգային ձգտումը: Հայութիւնը կը հետևի ժամանակակից նորութեանց. վերջինը կատարելագոյնն է: Գրականութիւնը կը շփոթուի նորոյթի հետ: Թիւրքահայերը օգնութեան կը հասնին ֆրանսայի անկապաշտ գպրոցին. Ռուսահայերը՝ աւելի ազգային՝ կ'ենթարկուին սակայն Ռուսաց իրապաշտ գեղարուեստին. Անգլի «Ռուսահայոց գրականութիւնը» բազմաթիւ վաւերագրեր ունի այս երևոյթին և մեծագոյնն է այս երկն ինքնին:

Ի՞նչ կարող է փրկել Հայութիւնը այդ հակասական ուղղութիւններէն, տալ իրեն վերջապէս ճշմարիտ գրականութիւն մը:

Ծանօթութիւնը յաւիտեանական գեղարուեստին:

Մատենագրական պատմութեան խոր ուսումնասիրութիւնն է որ Հայութեան պիտի ցուցնէ գրականութեան մէջ միշտ մնայուն տարր մը՝ մինչ գպրոցները կը ծնանին ու կը մեռնին, ինչպէս գոյացութիւնը նիւթի մշտափոփոխ ձևերուն տակ: Մեծ գրականութեանց ուսումն է որ Հայութեան պիտի տայ մարդկային փորձառութեանց արդիւնքը, պիտի արգիլէ զինք կըրկնելէ իբր սխալ ապացուցուած ծամբայ մը. նա պիտի ցոյց տայ անկապաշտութիւնը — օրինակ իմն — Իտալիոյ մէջ ԺԸ դարէն ի վեր ծաղրական դարձած Seicentoի գրականութեան անուամբ, ֆրանսայի մէջ այն ուղղութեամբ զոր Մոլիէր Précieuses ridiculesով կը ծաղրէ: Օտարականը հիւրասիրելէ առաջ հարկ է քննել որ մի՛ գուցէ յանցաւոր մ'ըլլայ՝ կանխաւ դատապարտութիւն կրած:

Բայց նոյն իսկ գեղեցկութիւնը շահեկան ըլլալու համար կարօտ է եզակիանութեան մը և այս եզակիանութիւնը կը գտնուի ազգային նկարագրի մէջ: Պէտք է տալ ոչ միայն գեղեցկութիւնը՝ այլ անոր հայկական տիպարը: Ոչ միայն հոգի պէտք է շնչել քանդակին, այլ հայկական հոգի:

Ոգի՛:

Այս բառը ա՛յնքան կրկնուած է, ա՛յնքան սո՜գոյն որ իմաստը դատարկուած կը թուի. ամենէն մեծ դժուարութիւններէն մին է որոշակի ճանչնալ ու սահմանել թէ ի՞նչ է «հայկական ոգի»ն: Արհեստագէտը իր գործին կէսը հասած է արդէն, երբ կը հասնի այս ծանօթութեան: Պէտք էր տարիներով վիճել մամուլի մէջ ճիշդ կերպով հասնելու համար ըմբռնուած մը՝ որ իբր կաղապար պիտի ծառայէ մեր գեղարուեստին, մեր գրականութեան, մեր կեանքին:

Հատեր ազգային ոգի տուած կը համարին իրենց վէպին, երբ տեսարանը Հայաստանի մէջ է, երբ դիւցազները Միհրան են ու Շուշան, երբ միջագէպերը միայն թշուառութիւն կը ներկայացնեն: Անշուշտ արեւելեան շրջանակը մեծ հրապոյր մ'ունի, բայց պէտք է շփոթել տեղական գոյնը տեղական ոգիի հետ:

Ազգային ոգին ամենէն առաջ հազարաւոր տարիներու կիրք մըն է, կիրքը այն անհատին՝ որուն սէրը միշտ դուրս է իր շրջանակէն, որ կը տանջուի ամէն բոլոր հակասութեան մէջ գտնելով իր տենչերն և արտաքին աշխարհը, որուն մէջ ճնշուած արպարութեան մոլեռանդ պաշտամունքը յառաջ բերած է, կիրքը այն անհատին որ խորտակուած կը զգայ իր բոլոր կեանքը, որ զինք աւելի մեծ կ'ըմբռնէ քան ողբան ճակատագիրը կրնայ յայտնել, որ կը համոզուի թէ աշխարհք եկած է միայն իր ագնիւ էութեան ոչնչացումը տեսնելու: Հայկական ոգին՝ Արդարութեան ողբերգական սէրն է:

Բայց ո՛րքան այդ հոգին մատնիչ ու դաւաճան կը գտնէ իրականութիւնը, այնքան աւելի կը սիրէ կեանքը, երբ բնութեան պատկերը կը կանգնի անոր մէջ, կեանքը՝ ընդհանուր իմաստով՝ կեանքը՝ անջատուած պատմական պարագաներու բաղադրութիւններէն: Ատող հոգի մըն է, որ կը զգայ սակայն թէ սիրելու համար ծնած էր: Հայութիւնը կեանքի գրեթէ հեղինակն էր: Հայութիւնը կեանքի գրեթէ հեղինակն էր: Հայը իր մեռած պահուն կը հառաչէ դէպ ի նուաասարգի արշալոյսը. փողերու և թմբուկներու յիշատակի հետզհետէ հեռացող արձագանքը անոր մշտական քունը կ'օրորէ:

Բայց կեանքի սէրը յառաջ կը բերէ շինող Ուժի պաշտամունքը: Կան ազգեր որոնց գեղարուեստական մութ բնագրը իրենց հաճելի կ'ընէ ինչ որ տխուր է. արիւնալի, գերեզմանական. հետեւաբար կ'մտախնայրը, մահը, պատերազմը: Հայութիւնը կը սիրէ հասկերով զարգարուած գաշտերը, հովիտներուն մէջէն բարձրացող երգերը, կեանքի ժպիտը: Քոչոր ազգերու մէջէն մերինն եղաւ ամենէն առաջ պաշտօնապէս քրիստոնէութիւնն ընդունող: Քրիստոնէութիւնը Սիրոյ կրօնքն էր:

Արդարութեան հաւատացողը լաւագոյն աշխարհ մը կ'երազէր. կեանքի սիրողը կ'ուզէ որ ան անվերջ ըլլայ. ամէն ինչ հայ սիրտը կը տանի Հաւատքին: Մեր հին գրականութեան մէջ՝ համեստ ձեւերուն տակ՝ ծածկուած է ամենէն բարձր զգացումը. յաւիտենականութեան, անվերջ գեղեցկութեան անշարժ տեսիլքը: Այդ հաւատքը դիտելով Ֆինք մեր ազգային հոգին կը համեմատէ գերմանականին: Աստուծոյ տեղ երբեմն Բնութիւնը կը գրաւէ, կամ ընկերական դաւանանք մը. բայց Հայը կը մնայ միշտ Արեւելցի նոյն մոլեռանդ հաւատացեալը. կրօնքի հակառակորդներն անգամ՝ միայն անոր առարկան փոխած են. Ազգը ա'յնքան մարտիրոս տուած է Աղատութեան՝ որքան երբեմն քրիստոնէական կրօնքի:

Ոչ մէկ ազգի մէջ թերեւս ա'յնքան ժառանգութիւն կայ հեթանոսութենէ ո'րքան Հայոց մէջ. բնութեան պաշտամունքը կը շարունակուի իր մէջ իբր գեղարուեստ. հայ բանաստեղծութիւնը դիցաբանութեան շարունակութիւնն է: Բնութիւնը հայ ժողովրդեան քնարերգութեան մէջ կեանքի ոսկեգոծ շրջանակ մը չէ, այլ ինքնին հոգի մ'է, կախարդական ձեւերով յայտնուող հոգի մը, որ ուղղակի յարաբերութեան մէջ է մերինին հետ: Հայը կը խօսակցի ձեան և ամպին հետ այն զգացմամբ՝ որով հեթանոսը կ'աղօթէր արեւուն և լուսնին: Դժուար է գանել գրականութիւն մը ուր բնութիւնը իբր գեղեցիկ զարգարանք մը գործածուելու տեղ այսքան կենդանացած ըլլայ, ա'յնքան ընտանեցած: Բնութիւնը հայկական զգացումներու կեդրոնափայլն է. սիրտը կը կապէ Աստուծոյ՝ որ իր յօրինողն է, անցեալին՝ որմէն գերեզմաններ ունի, հեռաւոր սիրելիներուն՝ զորս միշտ կը

տեսնէ, Ապագային հետ՝ ուր արդարութեան դարու մը տեսլարանը պիտի ըլլայ:

Այսպէս բնութեան ամէն անկիւնէն զմայլումներ կ'իջնեն հայ հոգւոյն մէջ, գաշտերուն վրայ տարածուող լոյսի նման: Այնքան հանդարտ զգացումներ իրենց բազմութեամբը կ'իրքի կը փոխուին. կը ձուլուին, կը կեդրոնանան, արտայայտուիլ կ'ուզեն: Բայց բազուկները անկարող են երկրագունտը պարփակելու. հայ հոգին կը դառնայ գէպ ի Անհատը, անոր մէջ գտնելու համար Բնութիւնը՝ այս անգամ իբրև միակ էակ մը, իրապէս կենդանի և խօսուն: Հայ քնարերգութեան մէջ թիւերու նոր ըմբռնում մը կայ. մէկը իրերու բազմութիւնը կը նշանակէ. անհատը՝ բնութեան գեղեցկութեանց ամբողջութիւնը: Նոյնն էր մեր նախնեաց համար. Անհատը՝ անձ մ'էր, բայց բնութեան մեծ մաս մը պատկերող:

Ինչպէս պատմութեան և գրականութեան՝ հայ հոգին է մեր իրական կեանքին մէջ. հոս յամառ կամքն է ան՝ կռիւ յայտարարած արտաքին աշխարհի դէմ. չի՛ սարսափիր անձանօթէն. ապագային դատարկութիւնը զինքը միայն կը հրապուրէ՝ ինչպէս ջուրի անվերջ հորիզոններ յանդուգն նաւորդը. բաղդախնդիրն է որ անցեալին մէջ ու ներկային՝ գիտէ անակրնկալ յաղթանակի մը հասնիլ: Կը մեկնի զուրկ ամէն միջոցէ. չի՛ գիտեր ո'ր ափին վրայ կանգ պիտի առնու. բայց գիտակցութիւնը իր հետն է: Աշխատանքը իրեն համար վայելք մ'է. դժուարինը՝ ինչ առարկայի վրան ալ հանդիպին գործի հմայքն է իրեն համար, որովհետև պիտի ապացուցանէ իր եսին ուժը. աներևոյթ պատերազմ մ'է, որ լուութեան մէջ յաղթութեան երգ մը կը լսէ:

Հայ հոգին է վերջապէս իւրաքանչիւր անհատի մէջ, ինչպէս գոյնը իւրաքանչիւր առարկայի: Իւրաքանչիւրի արեան մէջ խօսող ձայնը աւելի որոշ պիտի հնչէր, եթէ համոզման սխալ ուղղութիւններ — ինչպէս յաճախ կը պատահի — չխեղաթիւրէին մեր խառնուածքն և զգացումները՝ տարբեր ձանապարհներ բանալով անոնց:

Քսաներորդ դարը կը հրաւիրէ Հայութիւնը գործելու միջազգային ասպարէզի վրայ: Պոլիս կեդրոնն է ուր Հայը յարաբերութեան կը մանէ

բոլոր ազգերու հետ: Այս շրջանը ուրիշ անգամ անցած է մեր պատմութենէն, այն դարուն՝ ուր Համիտի բնակարանէն Հայ թագաւորի մը նայուածքը կ'իշխէր Մարմարայի, ուր Սըմբատներ ծովեզերքի վրայ թափառուն, հոռոմեական կայսրութեան համար օրէնքներ կը խորհէին: Վարող պիտի ըլլա՞նք ապագային նոյնպիսի պատմութիւն մ'յանձնելու. այս դարուն մէջ՝ որ անցեալի հեռանկար մը պիտի դառնայ, պիտի ներկայանա՞նք մեր նախնեաց պատիւով: Մայրաքաղաքիս Ազգ. Գրադարանին մէջ հանդիպեցայ անծանօթ գրքի մը. « De l'Introduction des Arméniens catholiques en Algérie » par Barbié du Bocage. Հեղինակը 1836 ին ֆրանսայի կառավարութեան կ'առաջարկէ Ալժերիի մէջ հայ գաղութ հաստատել զայն շուտով վարգացնելու և արդի քաղաքակրթութեան հասցնելու համար, թուարկելով հայ ցեղի ընդունակութիւնները: Վարելի է սակայն արտութեամբ հարցնել թէ Ափրիկէի անապատները զարդարելէ առաջ, ի՞նչ ըրած ենք մեր երկրի ամայութիւնները ծաղկեցնելու համար և թէ Մաւրիտանացիները դաստիարակելու հրաւիրուող ազգը ի՞նչ ըրած է իրապէս հասնելու համար քսաներորդ դարուն:

Սակայն ինչ ալ եղած ըլլայ մեր ճիգերուն արդիւնք, յարգանք կը պարտինք մեր հայրենիքի հերոսական կամքին:

Հին հայերու համար ամենէն մեծ սօնն էր ժամանակի նորոգումը, բնութեան վերածնութեան հետ. Ամանորը՝ գարնան եղանակին: Յաշտիշատի տաճարներու մարմարներուն վրայէն հայ քնարներ կ'ողջունէին պայծառ աստղերու վերադարձը. հայ թագաւորը՝ իշխաններուն հետ ընդ առաջ կ'ելլէր առաջին ծաղիկներուն:

Ոչինչ կը գտնեմ աւելի հայ հոգին խորհրդանշող:

Երբ կը տեսնեմ մեր յարումը դէպ ի նոր գաղափարները, կարծեմ՝ նոյն պաշտամունքը տեսնել թարմութեան, յոյսի: Հին մեղեդիներու արձագանգ մ'է որ իբր հովիտէ հովիտ դեռ կը կրկնուի դարէ դար, հոգիէ հոգի:

Ար սիրեմ այդ գեղեցիկ հանդէսը. ինչ որ կ'ուզէի ըսել այս երեկոյ այն է միայն որ մի՛ գուցէ զոհի մ'արեան արատը նետուի մեր բագնին վրայ. հառաջ մը խղզուի հասարակաց ուրախութեան մէջ՝ ինչպէս այդ հին սօներուն:

Փարիզու հայ գաղութը ներկայացուցիչներուն մտաւոր ամէն ասպարէզի մէջ. մատենագրութեան, երաժշտութեան, նկարչութեան, քանդակագործութեան. կը ներկայացնէ միութիւնը՝ Հայութեան և քսաներորդ դարու: Ար մաղթէի նոյն միութիւնը ամբողջ Հայութեան համար, ո՛չ թէ ասիական, այլ ինքնայօժար հարսանիքով: Եւ այն ատեն հայ կեանքը գուարթ պիտի ըլլայ իբրև յաւիտենական սօն մը գարնան:

Հ. Կ. ՅԷՐ-ՍՍ.ՀԱ.ԿԵԱՆ

Փարիզ, 13 Մայիս 1911.

Ա Ն Օ Թ Ի Ն Ե Ր Ը

Այն իրիկուն գիւղին վրայ կը ձիւներ. Պարտէզներէն կը լրտուէր ձայնն ահաւոր Շրնագայլին անաւաղ: Լուռ էր. կարծես կեանքը այնտեղ կայծ առ կայծ Սըրտերուն մէջ կը մարէր: Դուրսը մութին մէջ զըժխեմ՝ Շուներն ամէն դուռի առջև կ'ոռնային: Եւ այն իրիկուն գիւղացիները բոլոր՝ Կիրակմուքի աղօթքին՝ Հայցեր էին իրենց ծերուկ Ասուածէն Խաղաղութիւն աշխարհին...: Հայր մ'արցունքոս աչքերով Պանդուխտ զաւակն ուրիշ խապրիկ չէր եկած Աղօթքին մէջ էր յիշեր. Եւ սրգաւոր մայրերը սև քօղերով Մեռելներուն համար իրենց մոռցրած՝ Բաղկասարած՝ Ասուած պապէն կապուսիկ՝ Լոյս, լոյս էին պաղասեր: Եւ տուն դարձած՝ ամէնքն հիմա մըսախոհ Ունկընդրելով հովին ձայնին և մահուան Երեսնին խնջ կ'հանէին: Եւ կ'ոռնային, կ'ոռնային Շուներն ամէն դուռի առջև կ'ոռնային...:



Գործասունը շատ, շատ հեռի էր գիւղէն. Պէտք էր երթալ երկու օր Երկու ամբողջ գիշերներ. Հարկ էր ցերեկն երեք հեղ Կաղամախին սակ հանգչիլ Որ շուք կու տար մօր մը պէս Աղբիւրակին հայրենի: Երեք հեղ մեք հոն նըսած Կը պասմէինք փոխն ի փոխ Զուլում դարդեր, խոր ցաւեր...

Մին կը պատեր թէ ինչպէս  
 Իր մանկութեան օրերուն  
 Վարդենիի պէս կ'ածէր  
 Վարան իր մօր ծրնկներուն...  
 Եւ մին կ'ըսէր արտօնապէս թէ յաւէս  
 Իրենց օձախն էր մարած,  
 Եւ թէ ինչպէս պատին վրայ ալ չէր վառեր  
 Ժրպսուն ծրրազն արուարչս  
 Կախուած սուրին մօս պապուն...:  
 Ու երբ ամէնքը սրբուս  
 Գրուին իրենց ծրուէին,  
 Մեզմէ սարէցը խոյն  
 Կ'աւելցրնէր հառաչելով իր սրբէն,  
 — « Ելէք, սրղաք, ելէք, արեւը ահա  
 Հասաւ գազաթը ծառին.  
 Վիշն ու ցաւերը, սրղաք,  
 Սա ջուրին պէս են վազող.  
 Կ'անցնին, կ'երթան, կ'անհետին  
 Մրնցրնելով ծաղիկ մ'իրենց եղբրքին.  
 Ելէք, սրղաք, դեռ պիտի  
 Գալենք կէս օր մը ամբողջ.  
 Պիտի անցնինք շամբուսէն  
 Ուրիէ հովին ու մեր հայրերն ասեոք  
 Սրբինգն իրենց կրտսերին:  
 Ելէք, սրղաք, ելէք, արեւը ահա  
 Հասաւ գազաթը ծառին...: »  
 Այն ասէն մենք մի առ մի  
 Վերջին անգամ մ'ալ խրմելով ջուրը պաղ՝  
 Որ մեր ցաւէն կը փախչէր՝  
 Կը քայլէինք, կը քայլէինք լուռ ու մունջ  
 Միջօրէի տօթին մեջ  
 Վիշերը մեր ծրխելէն...:  
 Անտուն քայլ մը անդին  
 Մտներու թուխ բացուածքէն  
 Կ'երեւէր սև ծրխնելոյցը գործասան.  
 Սև շէնքն էր այն ուր չորս տարի անընդհատ  
 Չորս անգամ մեր կեանքին անին էր դարձեր  
 Իր հետ փաթթած թելերն ոսկի, ապրբունով,  
 Թելերն արծաթ, ծիրանի  
 Մեր գունագեղ յոյսերուն...  
 Առտու մը նենդ, չարաշուք,  
 Մայրս ինձ ըսաւ.  
 « Բաւ է, սրղաս, բաւ է ալ  
 Որքան դու գիր սորվեցար,  
 Բաւ է որքան մասդառ գրուխդ հակեցիր  
 Թուղթին վրայ գրբերուդ.  
 Այ չեմ կարող, ո՞վ սիրասուն իմ գաւակս,  
 Այ չեմ կարող օրուան հացիկը ձարել.  
 Մեր եմ գուցէ մինչև տօնը Մուրը Չասկի  
 Փակած ըլլամ գոյգ աչքերս.  
 Ելիր, սրղաս, աղօթքը ըրէ, և գրնա  
 Վերջին բարեկ ըսել ծերուկ տերտերին  
 Որ քեզ օրհնէ իր խաչով:  
 Այս առաւօս պիտի երթաս  
 Կարօին հետ գործասուն:  
 Երկու գաւակս և եղբայրներդ երկու  
 Հոն կ'աշխատին տաս տարիէն աւելի...  
 Պըզտիկ էին, սրղաս, անոնք ալ քեզ պէս  
 Երբ մահէն վերջ հայրիկեղ  
 Աշխատելու զրկեցի:  
 Տըղաս, այնտեղ պիտի սորվիս շատ բաներ,

Հոն կան մարդեր ծերմակ մազով, և մանչեր  
 Սէրվիներու հասակով...:»  
 Այն առաւօսը, իցիւ,  
 Տեսած չըլլար մասերուն լոյսն Արարչին,  
 Այն առաւօսը, իցիւ,  
 Հազար անգամ սև ըլլար քան զինք ծրնող  
 Գիշերն աստղոտ, մայրագութ.  
 Իցիւ, աչքն իր թունակարմիր, զրուտան  
 Հանուած ըլլար ժանսափուշի ծայրերով...:  
 Այն առաւօս մեկնեցայ  
 Կարօին հետ զրոյցի:  
 Ամէն քայլիս ետև դարձած՝ արցունքով  
 Կը նայէի դարբոցին  
 Ուր դեռ երէկ դասերս գոց կ'ըսէի...:  
 Կը նայէի գանգակասան մասուտին  
 Որուն զըմբէթն ամէն իրկուն կը հընչէր  
 Չայնովս զիլ, թրթրուուն,  
 Որուն համար ծերերը զիս կ'օրհնէին...:  
 Կը նայէի սրնակին ուր մայրս հիմա  
 Աղօթասաց շուրթերով  
 Ամէն քայլիս կը հետևէր խընամբով:  
 Կ'երթայի. ախ, չըզիտէի թէ այնտեղ  
 Մարդիկ իրենց արիւնով  
 Կեանքերն իրենց կը թունեն:  
 Կ'երթայի, խեղճ Կարօն ինձի կը պատեր  
 Իր հին օրերն ուր առոյց՝  
 Դեռ ինձի պէս մասդրուով,  
 Ճամբուն քարերն ամէն, խոտերը բոլոր  
 Մէկիկ մէկիկ կը ծանչնար.  
 Թէ երբ երգէր սրբինգով՝  
 Թըռչնիկները թև ի թև  
 Գըլխուն վրայ, ուսին վրայ թառ ի թառ.  
 Կուգային երգն իրենց՝ իրմէ ուսանիլ...:  
 Եւ խըղաղով Կարօն կ'ըսէր թէ օր մը  
 Ինք և ես շատ մեծահարուստ պիտ'ըլլանք...:  
 Գործասունը շատ, շատ հեռի էր գիւղէն:



Այն իրիկուն գիւղին վրայ կը ձիւներ.  
 Լուռ էր. ամէն դուռի առջև կ'ոռնային  
 Շուներն ամէն դուռի առջև կ'ոռնային...:  
 Ես ետ դարձած՝ փողոցներէն մըթամած  
 Որոշեցի հիւղակս իրեն նըշիէն  
 Որ զիտէր իմ մանկութիւնս  
 Եւ ես իրեն ծրնակին...:  
 Ելայ վեր. մայրըս միայնակ կը խոկար  
 Կրակին մօտ զոր այն գիշերը ձըմբան  
 Գիւղի աղջիկ մը բարի  
 Իրենց տունէն էր բերած...:  
 Մայր, ըսի, մայր, ես դարձայ,  
 Դարձայ հիւանդ և նօթի...:  
 Ախ, վերջին շունչս գուցէ  
 Մինչև ծաղիկը գարնան  
 Թըռած ըլլայ հոգիէս...:  
 Եւ կը զգամ, մայր իմ, կը զգամ  
 Որ աչքէս վար կը կաթին  
 Պերձ երագներս աստղ առ աստղ.  
 Կը զգամ որ վաղը արդէն  
 Ճառագայթներն արևին  
 Գոյրերու պէս հերարձակ

Ներմիս վերայ պիտի լան...  
 Եւ դու, ո՞վ մայր իմ, մայր իմ,  
 Պիտի ցանկաս հազար մահով, հազար հեղ  
 Չաւակիդ սեղը մեռնիլ...  
 Գործասունէն ինծի ըսին.

— « Վաղն այլևս

Այսեղ պիտի չունենաս  
 Գործ և գործիք բանելու.  
 Հիւանդ ես դու, և հիւանդ  
 Թորթխտաւոր ցաւերով.  
 Պէ՛տք ես մեկնիլ. ընկերներդ  
 Աղաչեցին որ իրենց  
 Կեանքին համար 'ւ օրերուն  
 Այսեղէն չու՛ս բաժնուիս... : »  
 Տեսան հաշիւս, և զրտան  
 Ո՛չ առնելիք, ո՛չ ատելիք.  
 Գրքսինքներուս զինը, մայր,  
 Հաղիւ պարտքերըս կըռուեց.  
 Եւ ես երկու օր ամբողջ  
 Երկու ամբողջ գիշերներ  
 Չիւնին վրայ քայելէն  
 Եկայ հասայ այս իրիուն :  
 Ճամբուն վրայ ձիւնը զըլխուս դիզուեցաւ...

Մայր, մի չուզուիր, մի՛ չուզուիր, մայր, երբ ըսեմ  
 Որ անցեալ օր մեծ եղբայրս  
 Երեք օրէ վերջ զըմէ՛  
 Մեռաւ : Եւ քեզ յիշելով  
 Ամէն վայրկեան արտասուեց :  
 Լացաւ, լացաւ, ու յետոյ  
 Աչքերը քայ թաղեցինք :  
 Թաղեցինք զինքն այն ծառին սակ ուր յաճախ  
 Կ'երթար հանգչիլ կէս օրին :  
 Թառակիսակը զոր նշանաձն էր զըրկած  
 Անոյշ, անոյշ հոտերով  
 Սրբսին վրայ զըրի զայն... :  
 Միւս եղբայրս ալ յանկարծ  
 Օր մը եկան կանչեցին.  
 « Զինուոր պիտի 'լլայ » ըսին.  
 Գընաց, մայր իմ, զընաց ան  
 Եւ ալ երբեք չը զարձաւ.  
 Վերջին անգամ նայեցաւ  
 Ինծի, և այն ճամբային  
 Որ դէպի գիւղ կ'երկարէր... :  
 Արդ միայնակ մընացի,  
 Սև մահուան հետ միայնակ... :  
 Հիւանդ եմ ես, անօթի,  
 Պատառ մը հաց, պատառ մը հաց ձարէ, մայր :  
 Մայրս յանկարծ իր ծերութեամբ կանգնեցաւ  
 Ինչպէս ձիւնով ծածկուած ծառը դաշտին...  
 Զարկաւ ձեռքերը ծունկին,  
 Փետեց մազերը զըլխուն,  
 Փետեց թել թել, ձիւն առ ձիւն...  
 « Ախ, անիծուած, անիծուած  
 Ըլլայ, ըսաւ, օրը այն  
 Ուր ծընաւ զիս երկինք, և ես ծընայ ձեզ.  
 Հիմա որ հողն, որ քարն, որ գետն անձանօթ  
 Պիտի ծածկէ զիս իր սակ.  
 Մարմինըս այս ազազուն  
 Եթէ չառնես, ո՞վ երկինք,  
 Պատառ պատառ ազառներուն պիտ'նեսեմ,

Պիտի հողիս իսկ փետրոսեմ որ չը գայ  
 Վայել բարիքդ անօրէն... :  
 Օ՛ր ես ծընայ զաւակներս  
 Որ շուքին սակը իրենց  
 Ճամբորդի պէս հովանամ :  
 Երկինքը գնւր պաշտեցի...  
 Չը զըթաց ան, չը զըթաց  
 Երեքարձէն դալարութեանն առուոյսիս... :  
 Վերջին մոմը դեռ երէկ  
 Հեկեկալով վառեցի  
 Խաչելութեանն իր առջև.  
 Չէ լրտեր ան, չէ լրտեր  
 Աղօթքը զոր ես ուսայ  
 Իմ շատ փոքրիկ սարիքիս :  
 Մազերս սև՝ ձերմկեցան քրտուելէն  
 Մարմաներուն իր ոտքին.  
 Ախ, անիծուած, անիծուած  
 Ըլլայ օրն ուր ես ծընայ... :  
 Մեծ սրղաս երբ ասեցով  
 Շեմին վրայ կ'օրրէի՝  
 Մովերն ամէն և լիճերն  
 Աչուին անոր ալէվէս  
 Գողնալ փախչիլ կ'ուզէին... :  
 Մազեր ունէր խորոտիկ  
 Հեղ լոյսին պէս մոմերուն...  
 Իսկ այն զաւակս որ զինուոր  
 Տարին առանց համբոյրիս՝  
 Նախառն նուռն էր պարտեզին  
 Զոր աղջիկները իրենց  
 Մոցերուն մէջ կը պահէն...  
 Օ՛ն, զաւակդ իմ, զաւակս անոյշ, մէկ հասիկ  
 Բախէն ինծի մընացած,  
 Որ պէսզողու ապրիս, փակես իմ աչքերս  
 Ահա՛ ծիծերս, ըսաւ, քամէ, ո՞վ զաւակս,  
 Երկու ձեռքով քամէ զանոնք, և ծրծէ  
 Արեան կաթիլը վերջին՝  
 Որ օձի պէս երակիս մէջ կը սողայ :  
 Կուրծքս իմ զըթած է քան երկինքը վերի... :  
 Մըծէ, ծրծէ սիրքս ծեր...  
 Տըղաս, չրկայ, հնց չրկայ... :»

Օվածրդ ԱՀԱՐՈՆ

(\*) Հետեւալ գրութիւնը օրինակած ենք Փարիզի Ազգ. Մատենադարանի քիւ 186 ձեռագրէն : Մեծապէս հետա-  
 քննական է մեր հին ցկարիչներու արհեստի քեֆնիական  
 մանրամասնութեանց մասին պարունակած տեղեկութիւննե-  
 րով : Կր հրատարակենք զայն եւ ցանկալի կը գտնենք որ  
 մասնագէտներ մեկնաբանող մանրակրիչիս ուսումնասիրու-  
 թեան մը ենթարկեն զայն :

Վ Ա Ս Ն \*) Ն Ա Խ Ա Շ Ի

Առաջի բանն նախաշին այս է. գտախտակն  
 ստսիւննի թանձր ջրով օժէ (2) երեք (3) տառւայայ,  
 առաջինն թանձր (4), երկուսունմն քան զայն

(1) Չեռ. վտ : (2) ձ. աւծէ : (3) ձ. գ : (4) ձ. թան-  
 ծրր :

նոսր, երրորդ (1) խիստ նոսր. յետոյ զպոռն առ, ու լաւ լօսէ ստորնձի(2) ջրով երեք (3) տառպայ, օծանէ գտախտակն. յետ չորնալոյն առ և լաւ դանկով (4) քերէ (5) որ կոկ լինայ, լաւ (6) կոկ արա (7) և յետոյ սամէ՝ ինչ պիտանի է. յետոյ գնեղիզ լաւ (8) լօսէ և հաւկթի (9) պեղինով խալամէ՝, առաջ դոտակն (10) արա (11) զըրնեկով բոլոր, յետոյ գտախտակն ներկէ՝ ինչ ներկով որ ուզենաս. յետոյ գնանձն ներկէ որ ներկով որ ուզենաս. թէ լաճվարդ անես զհանդերձն, լեղակով բաց տուր. թէ նաֆթի անես, կանանչով բաց տուր. թէ կարմիր անես խոմրով բաց տուր. և լաւ խալամ քալեցոյ (12) որպէս որ գիտես և բաց տալուն ձերմկով ալ քալեցոյ (13) ի բեղերուն մէջն (14). յաջողի (15) Աստուծով (16):

Բայց զնարմնադեղն լաւ (17) գիտացիր. այլի գիտացիր որ լաւ (18) լօսել պիտի զգեղրանքն: Առ զօրրան և զթուխ և քիչ (19) մի քրչան, գերեքն (20) ի մի տեղ հաւկթի (21) դեղնով շաղվէ՝ և խալամէ՝ գերեսն զձեռովին և զոտքն, յետոյ առ զծիրանին և լաւ սամէ ծիրանով զաչքն զձեռովին զոտքն լաւ սամէ, որպէս սամես այնպէս պիտի լինայ (22). յետոյ զաստրինդէսն առ և ձերմակ (23) խառնէ ու գերեսին շքերն բաց, յետոյ (24) զայս զեղին կէսն առ և քիչ (25) մի կարմիր շաղվէ (26) և քսէ՝ (27) գերեսն, զձակատն ու զձեռովին ու զոտովին, յետոյ այլի ծիրանով սամէ՝ զաչքն (28) զքիթ (29) զբերանն զականջն (30) զոտովին զձեռքն զչըլնիքն, յետոյ զաչքն զունքն սեով խալամէ բարակ, յետոյ զաչից (31) ձերմակն քիչ մոր երեկի (32) կամ չերեկի (33), սեն ալ նոյնպէս, յետոյ ձակտին բոլորն (34) ձերմակ քալեցոյ (35) որտեղ որ պիտի գրիթ երեսն զաչից (36) բոլոր (37) գտտասն զչըլնիքն զականջն զձեռքն զոտովին, նոյնպէս ա՛ռ զկարմիրն ու որտեղ որ պիտի նոսր խալամով քալեցոյ (38) գերեսն, ձակտին գերեզու դին, զբերանն և զշքերքն կանանչով արա (39) նոսր, բայց զայս գիտացիր որ ինչ անես հաւկթի (40) զեղինով արա (41), թէ չէ կ'աւիրես յորժամ որ ջրդեղես: Եւ կատարելոյն յետ և ջրդեղէ երկու (42) կամ երեք (43) տառպայ:

Պաշին ծեփն (1) այսպէս արա՛ (2), ա՛ռ զկիրն եւ ջրով շաղվէ՝ քիչ (3) մի աւազ խառնէ՝ ի մէջ և շաղուէ՝ և ովուտի ջրն բուռնակ բօլովա ու կիրին մէջն խառնէ՝ և ծեփէ՝ զպատն և լաւ (4) կոկանէ՝, և թո՛ղ որ երկու կամ երեք (5) օր չորնայ, յետոյ սամէ՝ գործելով և զգեղն քսէ (6) խալամով որպէս կամիս, գրչանի տեղ պոր է, բայց զայս գիտացիր որ ինչ գեղ որ քսես ստորնձի ջուրն տաքծոյ և ստորնձի ջրով գրէ որպէս (7) գիտուն ես:

Բայց այլ ցեղ (8) մարմնագոյն այսպէս արա՛ (9), ռասակ՝ գործելով, յետոյ սեով, յետոյ ա՛ռ զօրրան, ու քիչ (10) մի կանանչ ու շքերն բաց զաչից (11) ու գերեսին ու զմիտուաց, յետոյ նոսր կարմրովն այն շքերուն (12) վրայ (13) նոսր խալամէ՝, յետոյ ի այն կարմիրն ձերմակ խառնէ՝, որ ձերմակն շատ լինայ, կարմիրն քիչ (14), ու քսէ (15) ի երեսն լրման զամէն, յետոյ ձերմակ քալեցոյ (16) որտեղ որ պիտի, զամէն բանն լաւ (17) պաշարէ:

Չդեղրակն ի մեկ ի մեկ (18) խառնել կամենաս որ գունգունն լինայ, ի կարմիրն սե խառնէ խորունկ ծիրանի լինայ, ի կարմիրն ձերմակ խառնես ալ կու լինայ, ի կարմիրն լաճվարդ խառնես բաց ծիրանի կու լինայ, լեղակ խառնես՝ միջակ կու լինայ, ի դեղինն լեղակ խառնես՝ խորունկ նաֆթի կու լինայ, լաճվարդ խառնես՝ բաց կու լինայ:

Առ պաղաւթի (19) փայս ֆեռե՛ (20) եւ եոցու (21) ջրով որ քանձրեայ (22) և սակաւ մի կիր ձգէ և սամղով գրէ:

Չլոյքն եփէ զպտուղն և զաւշան լաւ եփէ՛ որ թանձրանայ (23) և սամղով գրէ:

Առ զարիկն հաւան ձգէ՛ և ծեծէ՛ և զլեղակն լաւ աղա՛ (24) և վրայ (25) ա՛ծ քիչ քիչ (26) և սամղն նռան ջրով գրէ:

Չտաշեղ զառիկն և զընձիֆն աղա՛ և գրէ՛ սամղով. նարինձի է:

Նշանք կանանչ թանաքի (27), առ ժանգառ և մոխրի ջրով լաւ լվա՛ (28) ապա (29) սկուռայն հան և այն ջրէն ի վրայ (30) ա՛ծ որ զաղան հանէ. ապա (31) զաֆրանն ի կտաւն ա՛ծ և տաք ջրով տրորէ՛ և ժանգառն աւելի տրորէ՛ զաֆրանի ջրովն և սամղն ալ ջրով տրորէ՛ պարզէ՛ և գրէ՛: Նշանք կարմիր թանաքի (32), առ գղզոր

(1) 2. գ: (2) ձ. սովրնձի: (3) ձ. գ: (4) ձ. տանկով: (5) ձ. գերէ: (6) ձ. լօ: (7) ձ. առայ: (8) ձ. լօ: (9) ձ. հաւկթի: (10) ձ. պրազն: (11) ձ. առայ: 12-13) ձ. քալեցոյ: (14) ձ. մեջն: (15) ձ. յաջողի: (16) ձ. ալ: (17) 2եռ. լօ: (18) ձեռ. լօ: (19) ձ. գիչ: 20) ձ. գո: (21) ձ. հաւկթի: (22) ձ. լինա: (23) ձ. ջերմակ: (24) ձ. յետոյ յետոյ: (25) ձ. գիչ: (26) ձ. շաղուվէ: (27) ձ. գսէ: (28) ձ. զաջքն: (29) ձ. զգիղ: (30) ձ. զականջն: (31) ձ. զաչից: (32) ձ. էրեկի: (33) ձ. ջերեկի: (34) ձ. բոլորն: (35) ձ. քալեցոյ: (36) ձ. զաչից: (37) բոլոր: (38) ձ. քալեցոյ: (39) ձ. առայ: (40) ձ. հաւկթի: (41) ձ. առայ: (42, 43) ձ. բ. գ:

(1) ձ. ծեփն: (2) ձ. արայ: (3) ձ. գիչ: (4) ձ. լօ: (5) բ. կամ գ: (6) ձ. գսէ: (7) 2եռ. ոպ: (8) ձ. յ. ձեղ: (9) ձ. արայ: (10) ձ. գիչ: (11) զաչից: (12) ձ. շիքերուն: (13) ձեռ. վրս: (14) ձ. գիչ: (15) ձ. գսէ: (16) ձ. քալից: (17) ձ. լօ: (18) ձ. ի մեկիմեկ: (19) ձ. առպաղամի: (20) ձ. գերէ: (21) ձ. երցու: (22-23) ձ. թանձրնայ: (24) ձ. աղայ: (25) ձ. վր: (26) ձ. գիչ գիչ: (27) ձ. թանաքի: (28) ձ. լվայ: (29) ձ. ապայ: (30) ձ. վր: (31) ապայ: (32) ձ. թանաքի:

մէկ (1) տորուն և եռացոյ (2) ջրով որ թան-  
ձրնայ (3), սամդէ՛ և գրէ՛ ինչ որ կամենաս:

Առ գմահակն և զոսկին ի վրայ (4) քսէ՛  
ջրով որ մաշի, և զիր որ խտիկի, սամդ գարկ և  
զաֆրանի գրէ, թող որ ցամաքի (5), ապա (6)  
կոկէ (7) նոյնպէս զգեղին պղինձն (8) արա (9)  
և գրէ՛ սամդով:

Չլաճվարդն սամդի ջրով (10) և ապա (11)  
աղջրով լվա որ խտիկի և թող որ ցամաքի (12),  
ապա (13) ա՛ռ ձագուց մեղր ծոր և պինդ (14),  
զարկ այնով զլաճվարդն որ կոկի, ապա (15) այլ  
լրվա՛ (16) ջրով իստակ և՛ սամդով գրէ՛:

Ա Ր Ե Ի Ե Լ Ե Ա Ն Խ Ա Ղ Ա Շ Խ Ա Ր Հ

« Խ Ռ Ծ Կ Ո Ց Ի Կ »

Դժուար կարելի է նկարագրել այն ուրախու-  
թիւնն որ արեւ կ'ընայ աղջիկներու ամբողջ էու-  
թեան մէջ՝ երբ իրենց գիրկին մէջ, սիրտերնուն վրայ  
կ'աղմեն իրենց շինած քրջէ պաճուճապատանքը, լբբ  
թէ՛ իրենց մէջքի ցաւերովը ծնած դաւակ մ'ըլլար ան:

Թէ մայրական սիրոյ զգացումը կ'ծնի աղջիկ-  
ներու սրտին մէջ՝ իրենց մօր գրկէն բաժնուելու օրէն  
իսկ՝ կ'ապացուցուի անով որ հազիւ զեռ աշխարհա-  
յին իրերու պէսպիսութեան մէջ աչքերնին բացած՝  
իրենց շուրջի պատկերները դիտելով նմանողաբար  
ըլլայ թէ բնագոյրաբար՝ պուպրիկ մ'ալ իրենց թևե-  
րուն մէջ տեսնել կ'ուզեն: Այս անհասարկի հա-  
ճոյքին համար ոչ իրենց կարմրայար շրթունքներուն  
աղաչական ինքնատիպ բառեր կ'պակտին, ոչ նորաբաց  
ծաղկի պէս պճտուն իրենց գունարթ, շողող աչուկ-  
ներուն՝ մեղույ ձեքձեքումներ. որոնց հանդէպ մայր  
մը չէ՛ այլ քարէ արձան մ'ալ ըլլար՝ պիտի թուլ-  
ցընէր խոժոռ պրկումն իր աչք ու ունքին, և պիտի  
բացուէին ձոթերն իր կար-կարկառանի բոխչային՝  
անկէ պատառ մ'երկու քուրջ հանել տալու պղտլիկ  
մանկատածին:

Եւ ահա նորուս փոքրիկ զերձակուհին կ'նստի  
ձեռք բերած լաթի կտորները քով քովի կ'բերէ, կը  
ձևէ, կ'յարմարցընէ, կ'հագուեցնէ՝ ճղակ [երկճղի]  
փայտիկի մը վրայ, և անոր տարով գլուխ մ'ու  
համբակօրէն գծուած աչք-ունքով դէմք մը՝ շրջա-  
զգեստով ու թեզնիքներով ալ կ'արդուգարդէ իր հո-  
գեհատոր պուպրիկը: Ինչ երանութիւն աղջկան մը  
համար:

Ան իր ապագայ կենաց նախափորձն է որ կ'ընէ.  
ձեռակերտ անշունչ խոճիկը կ'հագուեցնէ, անուշ ու  
քաղցր երգերով՝ թևերուն վրայ կ'թռցնէ, սրտին կը  
սեղմէ, տաք պաչիկով մը կ'ոգևորէ երեսն ու այ-

(1) ձ. ա.: (2) ձ. երացոյ: (3) ձ. թանձրնայ:  
(4) ձ. վր.: (5) ձ. ցամաքի: (6) ձ. ապա: (7) ձ.  
կոկէ: (8) ձ. պղինձն: (9) ձ. արայ: (10) ձ. ջրո-  
վայ: (11) ձ. ապա: (12) ձ. ցամաքի: (13) ձ.  
ապա: (14) ձ. պինտ: (15) ձ. ապա: (16) ձ.  
լրւայ:

տերն անշունչ շորեղէինն: Կամ ծառի մը շուքին  
նստած՝ հողին մէջ երկու ցպիկներ խոթելով, իր  
խոճիկին բաժովն ու բոյովը ձանդրմակ [կախօրրան]  
մը կ'կապէ և գլուխը սնարին դրած, ձէնիկը գլուխը  
ձգած՝

« Իմ տղէն զնեմ զարդար,  
Ասեմ զարէզարդար,  
Ի՛ջ զարդար... »

— « Ուրուր ուրուր իմ տղէն,  
Կախուեր էր ծառի ձղէն,  
Թափեր էր ծիրան վերէն [վրան] »:

Մեներգելով կ'օրրէ տղան, ու երգովն ինքն ալ  
կ'օրօրուի օրօր...: Եւ սէր ու գորով չէ՛ որ պիտի  
պակտի իր մատաղ սրտին, աղապատանք իր շրթնե-  
րուն, ու՛մ իր մանրիկ թևերուն՝ մանրիկ պուպրիկին  
պզտիկ օրրոցն օրրելու, և օրօրս ասելու համար:

Պուպրիկը շուտ ալ կ'աչխի [կ'արթննայ]. չա-  
բաճճի է. կուլայ, կ'ճչէ. ծիծ կ'ուզէ. հազար  
գորով՝ մէկ փարա, սաստ ու կուլ՝ անօգուտ. պզտիկ  
մայրիկն այն ատեն իր նորաւէր կուրծքն է որ կը  
բանայ, կաթ ջամբելու, իր կաթնատուն անասումին  
... կանչն ու վժոցը, պօռոց-ձրջոցը մեղմելու: Եւ  
երբ անժուժութիւնը մինչ սա տեղը [կոկորդ] հասնի  
համբերութիւնը կտրի՝ սրտնեղ մայրիկը թաթիկովը  
թէթև ապտակներ կուտայ անբասեռ լալակին  
կրողի բրդուճին, որ պահիկ մը մնչէ, մրսի տայ  
աչաց և իր եղնիկ, սրտմաշ մերկին օր ու աստուր  
տեսնէ: Խեղճ պուպրիկ, յանցանքն իրն է երբ վերջ  
ի վերջոյ՝ կեղծ մայրիկին սիրտն այնքան ցաւցած  
ջանին հասած, զէզ ու անգութ, խիղճը մեռած,  
մայրականին տեղ մարդասպանի մը բազուկն երկրն-  
ցընելով՝ քաշել ճրվտել, թև ու տոտիկ, գլուխ-  
փորկիկը ծուխ-ծուխ բզբտելը մէկ ընէ՝ կաթիլ մը  
շողոտ արցունքի տեղ՝ պուրակ մը վառող պճառ  
[կայծ] մ'աչքին ձոթը...:

Միշտ միևնոյն կատակերգութիւնը՝ կեանքի իրա-  
կան թատերաբեմին մէկ ծայրէն միւսը: Հոն քուսն-  
ամեայ երեսնամեայ արամբին է որ կ'ծնի, կ'խնամէ,  
կ'մեծցնէ և յուսահատ ըտպէի մը յետին ճգնաժամին  
պրկուող իր մատներուն անգունիկ օղակին մէջ կը  
խեղդէ վրկն իր միջաբեր զաւրներուն. հոս՝ եր-  
կամեայ կամ քառամեայ պզտիկ աղջիկն է որ կը  
զնէ կ'վերցնէ ձեռակերտ խոճիկն, և սիրտը հասած  
պահուն՝ կ'ձօլտէ ձիտէն ու կ'ձրվտէ ճղաչէն իրանը  
թևերէն...:

Պաճուճապատանքի կամ խոճիկի սէրն այնքան  
խոր ու լայն բոյն դրած է աղջիկներու սրտին մէջ  
որ, միայն շորէ խոճիկներով չեն բաւանար, և միայն  
տղայ տարիքի մէջ չեն յագեհար. անխելահաս շրբ-  
ջանէ մինչև խելահաս տարիքը՝ աստիճանական զար-  
գացում կուտան իրենց պուպրիկասէր տրամադրու-  
թեան:

Միրանի չիրով՝ ճուճուկ կ'չինեն, բաղարջէ  
ճուճուկ [մարդուպատկեր] կ'չինեն, հոգ չէ թէ  
ախորժակը տեղն եղած պահու մ'ալ մարգրտի պէս  
սիվտակ ու շղուն և զառու ստամբերուն պէս մանր  
ու կտրուն ակռաներնուն տակ նետեն, կրկ-կրկ-  
ուտեն լիթեն... — անուշ ըլլայ, պզտիկ մարդա-  
կերներ ! !:

Աւելի մեծնալով՝ խոճիկը վիճակի՝ կ'փոխեն,  
— գլխիկը լաչակի տակ կ'ձածկեն, գաւարսուն ու

ջբուեն թասն ի գլխին, երեսնոցները քունքերուն, ճանոցն ու յօխը վզին, ղեղորուն՝ պոչով աչքերը վրան տապակ երեսին, և այս պճնագարդ կուռքին իբր փոր՝ սեռիկ [ամանիկ] մը տկկիկ՝ եօթն աղբիւրէ ժողված, աստղունք դրած ջրովը ջրալից...

Երկու խօսք ալ՝ և խոճկոցիկին խնձորը թող իջնէ (\*):

«Խամաճիկ» ի խաղին ծագումը շատ հին է: Վրայէն դարեր անցած կործանեալ քաղաքներու աւերակներուն մէջ երևան կուգան պաճուճապատանքներ՝ որ կ'հանգչին մեռած փոքրիկ աղջիկներու քովիկը: Այս հնորեայ սովորոյթին սիրուն աւանդալէս պ մը կ'միանայ:

«Կորնթացի դեռահասակ կոյս մը մեռնելով՝ իր ծծմայրը կ'հաւաքէ անոր բոլոր խաղալիկներն ու դամբելոյ մը մէջ տեղաւորելով՝ կ'տանի կ'դնէ անոր դամբանաքարին գուլիւր: Եւ որպէս զի անոնք բաց օդին աղբեցութենէն չայլայլին՝ կղմինարով կ'ճածկէ: Զամբելոյն ապա գոնտուեցաւ դիպուածաբար գետեղուած Արշամազիլի մը (Acanthe) արմատին վրայ: Գարնան մազմզուկներն ու տերեւներն իրենց պարունակին մէջ կղմինտրին ծանրութենէն ձնուած՝ դամբելոյն կուշտերէն վեր ելան, ապա կորանալով ու դառնալով՝ բնական ոլորադարձեր կազմեցին: Գալլիմաք (Callimaque) արձանագործն այս դամբարանին քովէն անցնելու պահուն՝ նշմարեց հեռուէն տերեւներուն սիրունիկ շարակարգութիւնն, և առի ծագում տուաւ ճարտարապետական ոճերու մէջ ծանօթ կորնթական խոյակին »:

ՎԱՆ

Տ. ՉԻԹՈՒՆԻ

Ք Ր Ո Ն Ի Կ

Թիֆլիսի Հորիզոնին մէջ, Լէօ՝ գեղեցիկ յօդուածով մը առաջարկած էր վերջերս որ գալ տարուան սկիզբը հայ ժողովուրդը տօնէ հայկական տպագրութեան չորսհարիւրամեակը, և այդ առթիւ հայ գրականութեան զարգացման մտապէս աջակցող հաստատութիւն մը՝ հայ-գրական Փօնոս մը՝ հիմնուի: Հոյակապ գաղափար, որուն խանդավառ համամտութիւնս կը յայտնեմ, և որուն իրականացման բարոյապէս պէտք է օժանդակեն անշուշտ բոլոր հայ մտաւորականները: Բայց եթէ այդ Փօնոսն ալ՝ երբ հիմնուի՝ պիտի ունենայ այնպիսի կենսունակութիւն մը ինչպէս Թիֆլիսի Հրատարակչականը... վայ հայ գրականութեան գլխուն:

Այդ հաւաքումներուն մէջ ուր հայկական տպագրութիւնը տօնող մտաւորականները պիտի խորհրդակցին՝ գրական Փօնոսը կազմելու համար, երանի՜ թէ կարենան սա երկու էական հարցերուն լուծում մը գտնել. 1. — Ի՞նչպէս ընել որ հայ մարդը գրքի եւ լրագրի դրամ տալու վարժուի (է՛ն հիմնական

միջոցը՝ հայ գրականութիւնը մշտապէս ապահովելու). 2. — Ի՞նչպէս ընել որ մեր ամէն հանրային գործերուն մէջ՝ մանաւանդ ամենէ մը ի վեր՝ ցոյց տրուած ահաւոր դանդաղութիւնը, հետևողականութեան պակասը, անկանոնութիւնը, անճշդապահութիւնը, որոնց երեսէն մեր նոյն իսկ ամենալաւ ծրագրով սկսած մարմիններն ու հաստատութիւնները կը կաղան կամ բնաւ չեն քալեր, բուժում գտնին:

Անհրաժեշտ է որ այդ մեծ տօնը տօնելու եւ այդ առթիւ հայ-գրականութեան զարգացումը ապահովող այսպիսի ձեռնարկ մը յաջողցնելու համար՝ ո՛չ միայն Ռուսահայք այլ և թրքահայ ու պարսկահայ հասարակութիւններէն ինչպէս և արտասահմանի կարեւոր գաղութներէն ներկայացուցիչներ գտնուին այդ համագային նշանակութիւն ունեցող հանդիսաւորութեան արդ, ծանօթ ըլլալով մեր անհոգութիւնը՝ դանդաղութիւնը որուն վերեւ ակնարկեցի, դժբաղդաբար շատ յոյս չունիմ որ ամէն կողմէ պատգամաւորներ երթան մասնակցիլ կովկաս կատարուելիք հանդէսին: Երկրանդադէի յորեւանին առթիւ թրքահայ մտաւորականութիւնը դէպ ի ուստահայ վարպետը իր յարգանքը շատ վայելուչ և փայլուն կերպով յայտնեց յօդուածներով, ուսումնասիրութիւններով և բանախօսութիւններով, բայց Պոլսոյ գրական հասարակութիւնը հարկ եղած փոքրիկ ճէգը չուզեց ընել պատուիրակ մը ուղարկելու համար որ երթար կովկաս ներկայ գտնուէր յորեւանին և անձամբ յայտնէր թրքահայ մտաւորականութեան մեծարանքը, հակառակ որ այդ գաղափարը որոշապէս թելադրած էինք այս էջերուն մէջ: Այս դանդաղութիւնը ես կը բացատրեմ ոչ թէ չկամութեամբ, այլ այն համբաւաւոր դանդաղութեամբ զոր մատնանիչ ըրի իբրև մեր ախտերէն մին: Որպէս զի այդ նոյն դանդաղութիւնը արգելք չըլլայ Լէօի գաղափարին համագային հանդիսաւորութեամբ իրագործուելուն՝ ես կ'առաջարկեմ հետեւեալը. հայկական տպագրութեան չորսհարիւրամեակը տօնել յառաջիկայ կաթողիկոսական ընտրութիւններէն անմիջապէս յետոյ. այդ առթիւ արդէն իսկ աշխարհիս ամէն կողմէն մեր ազգային կեանքին մէջ մեծ նշանակութիւն ունեցող այդ հարցը լուծելու համար ազգին բոլոր հատուածներուն կողմէն ընտրուած կարեւոր անձնաւորութիւններ պիտի հաւաքուին էջմիածին. ընտրութիւնը կը կատարուի դեկտեմբերի վերջերը, հայկական տպագրութեան չորսհարիւրամեակը՝ անոր կցելով նաեւ հայ տառերու գիւտին հազար չորսհարիւրամեակը՝ կ'առաջարկեմ կատարել յառաջիկայ յունուարի սկիզբները, մասնակցութեամբ բոլոր կաթողիկոսական պատուիրակներու ինչպէս և այն բոլոր ուստահայ անձնաւորութեանց որ պիտի փափաքին մասնակցիլ, ու այն թրքահայ կամ պարսկահայ մտաւորականներուն (եթէ երբէք պատահի) որոնք պիտի

(\*) Հեկեաթներ միօս կ'վերցանան այս խօսքով. — « Երկուց երեկ խնձոր իջաւ, մէկն ասողաց, մէկը լուսաց, մէկն ականց արողաց »:

ուզեն այդ տօնին երթալ մասնակցելու համար հարկ եղած « յոգնութիւնը » յանձն առնել :

\* \* \*

Հայոց նոր գրականութեան նահապետներէն մին եւս՝ Ղաղարոս Աղայեան, անհետացաւ մեր հորիզոնէն : Թէպէտ եւ Արեգնագանի պաշտելի հեղինակը իր գործը ամբողջապէս կատարած էր, բայց իր մահը ամենախոր ցաւ պատճառեց ամբողջ Հայութեան, որովհետեւ այդ մաքուր եւ ազնիւ դէմքին շողիւնը մեր հանրային կեանքին վերեւ՝ գեղեցկութիւն մը, հաճոյք մը եւ սիրով մըն էր մեզի համար : Միտքս՝ այստեղ Տորֆի երգչին գործը վերլուծելը չէ. Լէօ՝ Հորիզոնի մէջ իր գեղեցիկ եւ հիւսթալից յօդուածներովը, Միմոն Յակոբեան (որ Շիրվանդադէի մասին իր լուրջ եւ բարեխիղճ ուսուցիչութեամբ ճշմարիտ քննադատի կարողութիւններ յայտնեց) Ազատարարի մէջ իր նուրբ յօդուածովը՝ արդէն իսկ այդ վերլուծումը ըրին գրեթէ լիակատար կերպով : Ես կ'ուզեմ միայն այստեղ քանի մը առողով՝ իմ որդիական յարգանքիս արտայայտութիւնը դնել ուրքը այն շիրմին՝ ուր կը հանգչի մեր նոր գրականութեան սահմիւրաններէն մին, մեր արդի հայ կեանքի է՛ն աղւոր, է՛ն մաքուր եւ է՛ն նայ դէմքերէն մին :

\* \* \*

Ցաւալի երեւոյթ մը որուն վրայ պէտք էր տեսնեմ ուշադրութիւն հրաւիրելու՝ այն է որ թրքահայ մամուլը շատ քիչ անգամ, յաճախ շատ տոգոյն կերպով, արձագանգ կը հանդիսանայ ուստի մամուլի մէջ երեւցած այնպիսի առաջարկներու կամ կոչերու որոնք համազգային նշանակութիւն ունին եւ ուղղուած են ամբողջ Հայութեան : Օրինակ համար՝ թրքահայ թերթերէն ո՛չ մէկը գոնէ երկու առողով ծանոյց իր ընթերցողներուն Լէօի այս կարեւոր առաջարկը որու մասին խօսեցայ քիչ մը առաջ. եւ սակայն հայկական տպագրութիւնը միայն Ռուսահայոց համար չէր որ հիմնուեցաւ. առաջարկը՝ այն ձեւով որով Լէօ զայն ներկայացուցած է՝ շատ գեղեցիկ է եւ ամբողջ ազգին օգտակար. առաջարկը ընողը չէ թէ միայն ուստի այլ եւ ամբողջ հայ արդի գրականութեան ամենամանօթ եւ ամենակարեւոր դէմքերէն մէկն է. այսպիսի պարագայի մը թրքահայ մամուլին լուրջութիւնը անհասկանալի եւ անհերքելի կը գտնեմ : Նոյնպէս անհասկանալի եւ անհերքելի կը գտնեմ այն բացարձակ լուրջութիւնը զոր թրքահայ մամուլը պահեց ի պատիւ Արտվանի յուշարձան մը կանգնելու նպատակաւ Թիֆլիսի Հորիզոնին բացած հանգանակութեան հանդէպ : Արտվանի Միթրար Աբբային հետ՝ Հայոց նոր ժամանակներու գրականութեան ամենամեծ ուսովիւրան է. անոր ի պատիւ յուշարձան մը կանգնելու գաղափարին թրքահայ ամբողջ մամուլը պէտք էր խանդավառութեամբ արձագանգ

հանդիսանար : Պէտք է խոստովանիլ որ Ռուսահայք շատ աւելի կը շահագրգռուին Թրքահայոց թէ՛ ազգային եւ թէ՛ գրական կեանքով քան Թրքահայք Ռուսահայոց կեանքով, գոնէ այս վերջին 2-3 տարիներուն մէջ, ուր սակայն արտաքին հանգամանքները շատ աւելի նպաստաւոր են հայ ժողովրդին հետաւոր հատուածներուն միջեւ կանոնաւոր ու սերտ բարոյական կապ մը պահպանելու եւ մեծ հարցերու մէջ գործակցելու : Այդ ալ պէտք է բացատրել այն տեսակ մը « յոգնածութեամբ » որուն մէջ կը գտնուի համիտեան բեթիմի միջաւաններէն նոր դուրս ելած դեռ կէս-հիւանդ եւ ջղագար թրքահայ հասարակութիւնը : Այն գանգաւանները որ կը լսուին նոյն իսկ թրքահայ հրապարակագիրներէ ոմանց կողմէ՝ թրքահայ գրականութեան այժմեան անկման մասին, ատով կը բացատրուին դարձեալ. ես իսկական անկում չեմ տեսներ. թրքահայ գրականութիւնը այժմ իր ծոցին մէջ կը պաշտպանէ շատ գեղեցիկ տաղանդներ՝ թէ՛ հին եւ թէ՛ նոր (\*). բայց « գրական ընդհանուր կեանքը » տկարացած կ'երեւայ, նախ որովհետեւ հասարակութիւնը յոգնած է՝ ինչպէս ըսի, երկրորդ՝ որովհետեւ արուեստի եւ գրականութեան մեծ թշնամին՝ քաղաքականութիւնը՝ դեռ կը շարունակէ շատ տիրական տեղ մը բռնել մեր մտաւոր կեանքին մէջ : Այս էական հարցերուն վրայ անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել. պէտք է առանց իրար անցնելու, առանց յուսահատան ճիչեր արձակելու, ջանքեր ընել բուն գրական գործունէութիւնը զօրացնելու համար, եւ նոյն ատեն ուստի ազգային եւ գրական կեանքին հետ թրքահայ մտաւորականութեան հաղորդակցութիւնը ապահովելու համար : Եւ ասիկա պիտի ըլլայ երբ թրքահայ բոլոր ճշմարիտ գրագէտները, ինչ կուտակցութեան ալ որ պատկանին, գիտնան քաղաքական մտահոգութիւններէ եւ տարախոհութիւններէ բարձր լոկ չայ Գրականութեան յառաջդիմութեան գաղափարին շուրջը խմբուիլ եւ գործակցիլ : Պէտք է հիմնել Թրքահայ Գրագէտներու Ընկերակցութիւն մը, կովկասի մէջ եւս պէտք է հիմնուի Ռուսահայ Գրագէտներու Ընկերակցութիւն մը : Եւ այս երկուքը մշտական հաղորդակցութեան մէջ ըլլան իրարու հետ :

(\*) Գրական ի՞նչ զմայիլի նոր նոյնութիւն մըն է՝ օրինակի համար՝ այն Արձակ երգերու ինկնասիւ պուսիսիս փուկը զոր օրհոր Մանգիկ Պրայերեան բերաւ այս օրես իսկ աւելցնել մեր բանաստեղծութեան բուրասանին : Եւ ի՞նչ հոյակապ էջ մըն էր որով սիկին Զապէլ Եսայեան, որ իր հարուստ տաղանդով ասոնց ի վեր մեծադոյն զարգերէն մին է մեր ներկայ գրականութեան, որոնց « Ազատարար » ին մէջ յայնուօրինակ այդ հայ ֆերոյական նորափայլ գեղեցկութեան : Եթէ մեր մէջ ամէն բան այդքան Երաբեամբ, ազնուութեամբ եւ կատարելութեամբ արտայայտուէր՝ որքան այդ երգերն եւ այդ կենդանակար, մեզ Բաղափախիթ ազգերու մէջ առաջնակարգ տեղ մը կը գրաւէին :

Չուա գրական հանդէսներ կը սկսին երեւնալ այս վերջերը, Պոլիս, Իզմիր, Պոսթոն, Ազատականս Կրական յաւելուած, Ոստան, Հայ Գրականութիւն, Շանք, Արագած, լաւ նշան մըն է այդ արդէն: Բայց պէտք կայ զուտ գրական մեծ օրաթերթ մը, մեր երբեմնի Հայրենիքին տեղը բռնող թերթ մը պէտք է. անոր մեծ ուժը իր շրջանին գրական մեծ թերթը ըլլալն էր:

\* \* \*

Թիֆլիսցի հարիւր մէկ Հայերու հանրապրութեան մասին բառ մը: Ազգային ժողովը հարկ դատեց զայն վերադարձնել՝ որպէս զի ստորագրութիւնները վաւերացուին Ըստ կանոնագրութեան՝ թերեւս այդ ձեւակերպութիւնը անհրաժեշտ էր. բայց ինչո՞ւ չգտնուեցաւ մէկ հոգի մը ժողովին մէջ, որ այդ որոշումը տրուած ըստ էին՝ ելլէր սա պարզ եւ անհրաժեշտ յայտարարութիւնն ընէր. « Մենք չենք տարակուսիր որ այս հանրագրութիւնը վաւերական է, բայց օրէնքը յարգելու համար միայն կ'ուզենք որ այդ ձեւակերպութիւնը կատարուի: Լրագիրներուն մէջ հրատարակուեցաւ բնագիրը, գիտենք ինչ որ մեր Թիֆլիսի հայրենակիցներէն ոմանք մենէ կը խնդրեն. այդ բանն ընել արդէն մեր պարտքն է. կը ցաւինք որ մենք ուշացած ըլլալով այդ պարտքը կատարելու՝ մեր Թիֆլիսի հայրենակիցները կը յիշեցնեն մեզ զայն. առանց իսկ սպասելու որ հանրագրութիւնը վաւերացուելով դառնայ հոս եւ պաշտօնապէս կարգացուի, մենք գալ նստին իսկ պէտք է սկսինք քննել Օրմանեան սրբազանի խնդիրը: » Ոչ միայն ըսող չեղաւ, այլ ամբողջ ժողովը ձեւն ունի լրջօրէն սպասելու հանրագրութեան դառնալուն՝ որպէս զի Օրմանեան սրբազանի հարցը լուծէ... Ի՞նչ ամօթ թրքաճայ հասարակութեան համար... »

\* \* \*

Պոլսոյ թերթերէն ոմանց մէջ ատենէ մը ի վեր թուրքերէն բաժին մը կը տեսնեմ աւելցուած: Ես ինչքա Անանիսի մէջ յայտնած էի այն կարծիքը թէ հայ թրքագէտ հրապարակասունը մեր ազգին մեծ ծառայութիւն կը մատուցանին եթէ ուղղակի թրքերէն լեզուով խօսին թուրք հասարակութեան այն հարցերու մասին զոր մեր եւ երկրին ընդհանուր շահը կը պահանջէ որ մանրամասնօրէն բացատրենք եւ լուսաբանենք թուրքերուն: Բայց ես նախընտրելի կը գտնեմ որ այդ գործը չկատարուի հայերէն թերթերու միջոցով. աւելի՛ լաւ է եւ աւելի՛ բնական՝ որ հայ թրքագէտ հրապարակագիրները գրեն ուղղակի թուրք թերթերու մէջ, եւ կամ հայ թրքագէտ խմբագիրներու. ձեռքով հրատարակուող թրքերէն օրկան մը հիմնուի. Ինձի խորթ կը թուի տեսնել հայ թերթերը կիսովին թրքացած, ինչքան ալ որ լաւ նպատակով եղած ըլլայ ատրիկա: Ո՛չ գեղեցիկ կը գտնեմ զայդ,

ո՛չ ալ խոհեմ: Ոչ մէկ ցեղ չէ ըրած այդ բանը: Մեր թերթերը պէտք է միայն մեր լեզուով խմբագրուին:

\* \* \*

Ստացայ Թ. Թորամանեանի նոր հրատարակած գիրքը որ կը պարունակէ հմտալից եւ ինքնատիպ ուսումնասիրութիւն մը Տեկորի տաճարին մասին, զարդարուած բազմաթիւ լուսանկարներով եւ յատակագիծներով: Ասիկա առաջին թիւն է շարքի մը զոր Թորամանեան մտադիր է հրատարակել՝ եթէ նիւթական միջոցներ ունենայ՝ « Պատմական հայ ճարտարապետութեան » մասին: Այս հատորը հրատարակած է աջակցութեամբ Ալէքսանդրապոլցի պատուական Հայու մը, Պ. Յարութիւն Կարանեանցի, որ հակառակ համեստ գիրքի տէր անձ մ'ըլլալուն՝ ազնուութիւնն ունեցած է հատորին տպագրութեան ծախքերուն օգնել նիւթապէս: Կը մաղթենք որ ուրիշներ հետեւին այս գեղեցիկ օրինակին եւ Թորամանեան կարենայ հրատարակել իր հոյակապ ուսումնասիրութեանց ամբողջութիւնը: Թորամանեան մը՝ ինչպէս Կոմիտաս վարդապետ մը՝ որ հայ ցեղին հին գեղարուեստը կը վերակենդանացնեն եւ անոր մէջ Հայուն ցեղային ստեղծագործ բաժինը կ'որոշեն եւ կ'ապացուցանեն, այդ ազգութեան մեծագոյն բարերարներուն կարգը դասուելու արժանի են, եւ անոնք որ կ'օգնեն այսպիսի գործիչներու՝ պարզապէս իրենց պարտքը կատարած կ'ըլլան հանդէպ հայ ազգին:

Չեմ ծածկեր որ ապշութիւն եւ խորին տրամուլթիւն զգացի կարդալով Թորամանեանի հատորին այն տողերը, ուր կը գտնուի իր կարգ մը հակառակորդներէն որ « ականջէ ականջ փսփսուքներով փորձեր են իր գործը սպաննել եւ զինքը յուսահատեցնել »: Ո՞վ կարող են ըլլալ, ի՞նչպէս կարող են գոյութիւն իսկ ունենալ այդ հրէշները, որ Թորամանեան մը հալածելու գաղափարը կ'ըցած են ունենալ: Լե՛օ, որ առաջին օրէն ջերմ համակրութեամբ վերաբերուած է դէպ ի Թորամանեանը եւ զայն միշտ սրտագին գնահատած ու խրախուսած է, կը փափաքէի որ ինքն իսկ այս խորհրդին քօղը վերցնէր, զիմակաթափ ընէր սա արտառոց ձեւաղները, եւ զանոնք լաւ մը խայտառակէր:

\* \* \*

Նգիպտոսի Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան հիմնադիրներէն եւ գլխաւոր ղեկավարներէն մին՝ Նրուանդ պէյ Աղաթօն, քանի մը լրագիրներու մէջ վերջերս հրատարակած էր յօդուած մը, որով հայ ցեղին բարոյական անկումը նկարագրելէ յետոյ՝ իբր դարման կ'առաջարկէր բարոյագիտութեան դասագիրք մը հրատարակել եւրոպական նմանօրինակ լաւագոյն գործերու հետեւողութեամբ եւ բարոյագիտութեան դասը՝ այդպիսի դասագրքի մը վրայէն՝ պարտաւորիչ ընել մեր բոլոր դպրոց-

ներուն մէջ : Այս հարցին վրայ շատ բան կայ ըսելու . պիտի երկու բառով ամփոփեմ առ այժմ մտածումս : Նախ՝ ես համամիտ չեմ մեր ցեղը այդքան յուսահատականօրէն ինկած համարելու . նկատելով զայն իր միջավայրին մէջ , բաղդատելով իր գրացիներուն հետ , ան ունի բարոյական մեծ յատկութիւններ . ունի նաեւ մեծ , շատ մեծ թերութիւններ . (աչքի առջեւ ունիմ ցեղը , ոչ թէ շուկայի դասակարգը . որ խաբեբայ է՝ աւելի կամ պակաս՝ ամէն տեղ) : Բայց համամիտ եմ որ մեր ցեղին թերութեանց սրբագրուելուն , անոր բարոյապէս զարգանալուն , աւելի եւս ազնուանալուն , բարձրանալուն համար անհրաժեշտ է որ ջանքեր ընենք : Բարոյադիտութեան հայերէն դասագիրք մը յօրինել , բարոյագիտութեան դաս մը հաստատել մեր բոլոր դպրոցներուն մէջ , շատ լաւ գաղափարներ են . բայց ոչ բաւական : Կան միջոցներ աւելի արմատական , աւելի հզօր եւ լուրջ : Հայ ժողովրդին թերութեանց մեծ մասը իր զարաւոր ստրկական կենցաղէն կ'ըլլի . Թուսահայր՝ որովհետեւ մօտ զարէ մը ի վեր ստրուկի կացութենէն ազատած են , բարոյապէս զգալի կերպով աւելի բարձր են քան Թրքահայերը : Պէտք է ուրեմն 1. աշխատիլ , այս կամ ձեւով , որ Հայութիւնը ստրկացնող պայմանները ջնջուին : 2. Պէտք է կարող , ձեռքնհաս , « երոպական » ոգևով ուսուցիչներ պատրաստել . առանց լաւ ուսուցիչ լաւագոյն դասագիրքը ո՛չ մէկ օգուտ ունի , ու լաւ ուսուցիչ մը՝ նոյն իսկ առանց դասագիրքի՝ մանաւանդ բարոյագիտութեան պէս դասի մը համար՝ կարող է մեծ արդիւնքներ տալ : Պէտք է ուսուցիչներ պատրաստել . ստիկա միշտ ըսած եմ , ու պիտի կրկնեմ յաւիտեան : Այժմ , աւելի քան երբեք քիչ են մեր մէջ լաւ ուսուցիչներ , — երոպական միջավայրի մէջ պատրաստուած , « ազատ առողջ մաքուր ոգևով » սողորուած ուսուցիչներ . 3. Պէտք է զօրացնել հայ գրականութիւնը , մասնաւորապէս՝ շինիչ , առողջ , մաքուր գրականութիւնը , հրատարակել ազնիւ ներշնչմամբ գործեր հայ տաղանդներու . հրատարակել երոպական վեհօգի հեղինակներու , (Հիւլօ , Գորնէյլ , Շիլլէր , եւն.) գործերու , կամ մեծ մտածողներու (ինչպէս հոյակապ Մարկոս Աւրելիոսին) խորհրդածութեանց թարգմանութիւնները : — Ահա ինչ որ ապահովապէս կարող է տալ այն արդիւնքը զոր Երուսնդ պէյ Աղաթօն կը բաղձայ ձեռք ձգել : Եւ 100 տարի սպասելու պէտք չի մնար այն ատեն : Ամէն պարագայի մէջ՝ Հայկ . Բարեգործ . Ընդհ . Միութիւնը մեծապէս շնորհաւորելի է որ այս կարգի կարեւոր հարցերով կը զբաղի , ազգին մտաւոր ու բարոյական վերականգնման կ'ուղէ աջակցիլ :

\* \* \*

Քանի մը ամէն հայ ժողովուրդը պիտի ընտրէ իր հայրապետը . ի մօտոյ պիտի ընտրուի նաեւ Պոլսոյ պատրիարքը : Ես իմ քօնէս կուտամ կաթողիկոսական աթոռին համար՝ ինչպէս

արդէն գրած եմ Պոլսոյ Տաճարին ուղղեալ նամակի մը մէջ՝ Կարապետ Եպիսկոպոս Տէր-Մկրտչեանին (\*), իսկ պատրիարքական աթոռին համար՝ Բարգէն եպս . Կիւլէսէրեանին . ինչպէս պատահեցաւ . ողբացեալ Իզմիրլեանին՝ Երկու հմուտ , խոնական , լուսամիտ , գործունեայ կարող հայ եկեղեցականներ , որոնք ցարդ տուած են իրենց թէ՛ ուսումնական մարզու եւ թէ՛ վարչագէտ գործիչի կարողութեան ապացոյցները : Պիտի առարկեն թերեւս թէ երիտասարդ են : Միթէ ատրկա՛ մերթ՝ առաւելութիւն մը չէ՞ : Բարդ կացութիւն մըն է որուն մէջ կը գտնուինք , բազմաթիւ հարցեր կան լուծուելու . կնճոտոտ , դժուար հարցեր . պէտք կայ կորովի , աշխոյժ , անխոնջ գործիչներու , որ ստորիքէն մաշած չըլլան , որ՝ մանաւանդ՝ ծերութեան յառաջացուցած հիւանդութիւններէն մէկուն ձեռքով յանկարծ զգեստուած՝ մէկ տարի պաշտօնավարութենէ յետոյ աթոռը թափուր եւ գործերը առկախ անորոշ վիճակի մէջ չթողուն . ինչո՞ւ խրտչինք առոյգ հասակի

(\*) Կաթողիկոսական զանուց համար՝ ցարդ առաջարկուած միւս անձնաւորութիւններն են Օրմանեան , Սուքիաս , Դուրեան եւ Սուրէնեան Եպիսկոպոսներ : Օրմանեան Եպիսկոպոսն այն միջոցին երբ պատրիարք ընտրուեցաւ . այժմ Եպիսկոպոսն է , եւ քեմալի Եպիսկոպոսն է . իր անձը կասկածի վիճակու առարկայ եղած է . արդ՝ հայրապետ պէտք է այդքան սուր կուսակցական մարդ չլլայ , այլ կապ մը ամեն կուսակցութեանց միջեւ : Սուքիաս սրբազանը պատուական Հայ մըն է , ազնիւ , ազգասէր , մեկեմաս հայ դպրութեանց , անձուէր , արի գործիչ՝ Հայ եկեղեցւոյ Եպիսկոպոսն հաւատարիմ . բայց երոպական կրթութիւն չունի , եւ ծեր է : Դուրեան արեւալիսկոպոսը հայ եկեղեցականութեան ամենէն նուրբ , ամենէն արուեստագէտ եւ իմաստասէր ուղեղն է , բայց իր պատրիարքութեան վերջին փուլին մէջ ցոյց տուաւ որ չունի այն կոռօք , վնասակասութիւնը եւ նեղատեսութիւնը որ անհրաժեշտ են պատրիարքի մը կամ հայրապետի մը մօտ . լաւագոյն է՝ իրեն ինչպէս եւ ազգին համար՝ որ « Հովուական Միեմ » յին հոյակապ բանաստեղծ բարունակէ թլլալ քրտանայ արդի գրական մտաւորականութեան պատրիարք : Իսկ Սուրէնեան սրբազանը ո եւ է լուրջ կարողութեան զուրկ անձ մըն է , Մարկոսին կամ Կիրակոսին գործիք դառնալու դասաւարտուած . ինքն էր որ՝ Սուրէնեան կաթողիկոսին մանուրեկէն յետոյ իր տեղակալութեան միջոցին , Մետոյ Եպիսկոպոսի ազդեցութեան տակ՝ Երուսնդ վարդապետ Տէր-Միմասեանի մէկ ազատամիտ յօդուածը պարունակող « Աւարտ » ի թիւ մը Մայր-Տաճարի բակը հաւատանական խորհրդի մը վրայ այրել տուաւ , եւ « Աւարտ » ի խմբագրութիւնը բազմամտութեամբ Գարեգին Վ . Յովսէփեանի ձեռքէն առնելով Մասթուս վարդապետ անուն ո եւ է տաղանդէ զուրկ անձու եւ անհամակրելի միաբանի մը յանձնեց . . . Յարմարագոյն ընտրելին՝ Կարապետ Եպիսկոպոս Տէր-Մկրտչեանն է , որ ունի Եպիսկոպոսի քիչ քեմալի , եւ կը վայել ընդհանուր յարգանք . ան այն միակ անձն է որուն անունին վրայ հակաօրմանեանականներուն մեծագոյն մտքը եւ օրմանեանականները կրնան համաձայնութեան մը գալ : Ես կը կարծեմ թէ նոյն իսկ « Հորիզոն » իմ պատուական

մարդոցմէ եւ կարծենք թէ ալեւոր մագերն անհրաժեշտ են մեր հայրապետական կամ պատ-  
 րիարքական աթոռներուն համար: Լուսուո-  
 րիչ քառասունհինգ տարեկան էր երբ հայ-  
 րապետական գառը հիմնեց. Մեծն Ներսէս երի-  
 տասարդ էր: Գրիգոր Պահլաւունի քսան տա-  
 րեկան էր երբ կաթողիկոս ընտրուեցաւ:

Իսկ այն պատկառելի ալեւոր ծերունին,  
 որ Օրմանեան սրբազանն է, անհրաժեշտ է  
 շուտով հանել այն անարդար, աններելի խայ-  
 տառակութեան ցեխէն ուր կրքերու կուրաց-  
 ման ըրողէն մը զինքը նետեցին ափ մը մար-  
 դիկ: Օրմանեան, ես համոզուած եմ, ոչ միայն  
 չէ այն ազգաստեղծ, անձնամոլ մոռալ տիպար  
 զոր կ'ուզեն ներկայացնել, այլ՝ ունենալով  
 հանդերձ իր թերութիւնները՝ ազգասէր լաւ  
 հայ մարդ է, կարող քարոզիչ, հմուտ ուսու-  
 ցիչ, ներհուն եւ կորովի պատմագիր: Ստե-  
 նով ես ալ՝ Տէր-Ներսէսեանի գործակատարու-  
 թեան շրջանին՝ շատ խիստ լեզուով քննա-  
 դատած եմ զինքը. այսօր կը ցաւիմ այդ լեզուն  
 գործածած ըլլալուս, երբ աչքի առջեւ կր բե-  
 րեմ Օրմանեան սրբազանի տնձնաւորութիւնը  
 իր ամբողջութեան մէջ, — հակահասունեան ազա-  
 տակերն հսկայ պայքարին զխաւոր վարիչներէն  
 մին եւ գրիչը, էրզրուսի անձնուէր եւ վառ-  
 վառու առաջնորդ, Արմաշի դպրեւանքի կարող  
 եւ բազմարդիւն վանահայր եւ ուսուցչապետ,  
 էջմիածնայ Գէորգեան ճեմարանի պաշտուած  
 ուսուցիչ, առաջնակարգ քարոզիչ, հմուտ աս-  
 տուածաբան, պատմագէտ, հեղինակ « Հայ  
 եկեղեցւոյ պատմութեան » Ֆրանսերէն հոյա-  
 կապ գործին, եւն. եւն.: Թեթեւամտութիւն  
 եւ անխղճութիւն է այդպիսի անձ մը իր  
 դաւաճան տունը փակուած պահել. ու միա՛կ  
 դաւաճանը, միակ պատժուածը! որպէս թէ 15  
 տարիէ ի վեր ամենքը, ամենքս, բացարձակ  
 անթերի էինք, եւ միայն Օրմանեանն էր  
 հայկական դատին վիժման պատճառ!! եւ այս  
 այն միջոցին երբ մարդը հայ եկեղեցւոյ ոգւոյն  
 այդ սքանչելի մեկնութեամբ « հայկական դա-  
 տին » յազմանակ մը տանել տուաւ ամբողջ  
 եւրոպայի մտաւորականութեան մօտ. . . Մենք  
 զմեզ պատուած կ'ըլլանք եթէ փութանք վա-  
 ւերացնել քննիչ յանձնաժողովին նպատաւոր  
 տեղեկագիրը, յայտարարենք աշխարհի թէ այդ  
 նշանաւոր հայ գործիչը սխալմամբ է որ ազ-  
 գադաւ կարծուած էր, գնենք զայն նորէն  
 հրապարակ իբր գործիչ իր բոլոր կարողու-  
 թիւններով գործելու վիճակին մէջ, մէկ խօս-  
 քով՝ օգտուինք իրեն: Կը կարծեմ միայն թէ

բարեկամներս՝ Լեօ եւ Թումանեան, որոնք պահ մը քիւր-  
 մացուքեան մը զոն դառնալով՝ ազնիւ բայց անարդար  
 զայրոյթ մը բռնուած՝ յարձակեցան Կարապետ Եպիսկո-  
 պոսին վրայ: Իրենք իսկ պիտի զգան այդ կարող եւ  
 մախուր եկեղեցականից անուան վրայ ընդհանուր համաձայ-  
 նութեան մը գալուս անհրաժեշտութիւնը եւ պիտի աջակցին  
 ասոր:

իրեն համար բնաւ անհրաժեշտ չէ կաթողիկո-  
 սակական գառը՝ ազգին օգտակար ըլլալու հա-  
 մար: Ղազար Փարպեցի կաթողիկոս չէր, ոչ  
 ալ Սորենացին, (եւ երկուքն ալ իրենց ժա-  
 մանակակիցներէն անուանարկուած ու հալա-  
 ծուած են). բայց շատ մը միջակ կաթողիկոս-  
 ներէ աւելի օգտակար եղած են ազգին:

Ա. ԶՊԱՆԵԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՏԱՌԱՊԱՆԲՈՒ ՈՒԺԵՐՈՒ  
 ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐՈՎ ԲԱՅԱՏՐՈՒԱԾ  
 Ա.

Մարդկային կեանքի մէջ ամէն բան շար-  
 ժուով է: Զգացումները, յիշողութիւնը, դա-  
 տողութիւնը, ուշադրութիւնը եւ ֆիզիքական  
 վիճակները ամէնքն ալ շարժում են: Իսկ շար-  
 ժումը ուժ է:

Անհատը պէտք է նկատել ֆիզիկական եւ  
 բարոյական ուժերու խուրձ մը: Ան կը գործէ,  
 կը խորհի, կը վաստկի, կը յետադիմէ եւ կը  
 յառաջդիմէ այդ ուժերու կիրարկումով միայն:  
 Գրամը, արհեստները, արուեստները, մեքե-  
 նաները, ճամբաները, շէնքերը բոլորն ալ այդ  
 ուժերու առարկայացած արտայայտութիւններն  
 են:

Անհատը ֆիզիքական եւ բարոյական ու-  
 ժերու խուրձ մը նկատելէ վերջ՝ ընկերութեան  
 համար չենք կրնար տարբեր բան մը խորհի:  
 Ան ալ ունի մարմին մը որ՝ աւելի զանգուա-  
 ծային՝ կը շարժի, կը սպառէ եւ կ'արտադրէ:  
 Ան ալ ունի բարոյական կեանք մը որ՝ աւելի  
 խոշոր ու բարդ խորշերով՝ կը սիրէ, կ'ատէ, կը  
 յուզուի եւ կ'արտայայտուի արուեստի եւ մտա-  
 ծումի գործերով, ազնիւ ձգտումներով կամ ցը-  
 նոյթներով:

Ընկերութիւնը ֆիզիքական եւ բարոյական  
 ուժերու մթերք մըն է: Խնդիր է զայն տնտե-  
 սել: Վասն զի ամէն յառաջդիմութիւն, ամէն  
 քաղաքակրթական նորութիւն կարելի կ'ըլլայ  
 միայն ուժերու խելացի գործածութեամբ:

Մարդկային յառաջդիմութիւնը ճամբոր-  
 դութիւն մըն է անհոգիին դեպ է կողորդելը:  
 Ճամբորդը իր սրունքներուն կորովը պարտաւոր  
 է հաշիւով եւ կանոնաւորութեամբ կիրարկել:  
 Յիմարական բան է մէկ ոտքով ետ եւ միւսով  
 առաջ ելլալը:

Տնտեսելու զգացումը քաղաքակրթական  
 ստեղծագործութեան պատճառ է: Եւ ամէն  
 գիտական ստեղծագործութիւն կորովի տնտե-  
 սութիւնը կը զարգացնէ՝ սահմանափակելով  
 աւելորդ վատնումներու չափը:

Հիմնական սկզբունք է աս:  
 Պատմական իրականութեան մէջ գիտական,  
 տնտեսական, կրօնական, լեզուական, դաստիար-  
 ակական, քաղաքական ամէն ստեղծագործու-  
 թիւն կամ ուժերու տնտեսութեան զգացումէն

բղիսած է, կամ առ նուազն ուժերու տնտեսութեան միջոցները ընդլայնած է :

Կորովի չափազանց վատնումը սահմանափակելու համար է որ տեղի ունեցած են մեծ յեղափոխութիւնները : Զարտարարուեստի ճոխացումը, յարաբերութիւններու և ճամբաներու աստիճանական զարգացումը եթէ միշտ ծնունդ առած չեն ընկերային կորովի սպառումները նուազեցնելու համար, գոնէ ունեցած են ուղղակի այդ լաւ հետեւանքը :

Մարդկային գոյութիւնը այս երկրագունդին վրայ շարունակական փոփոխութեան ենթակայ է : Եւ այդ փոփոխութեան մէջ նշմարելի է ուժերու տնտեսութեան զարգացումը : Սա քաղաքակրթութեան աճումը ըսել է :

Ուժերու տնտեսութեան սկզբունքին ծանօթանալէ վերջ կը մնայ ուսումնասիրել անհատը և ընկերութիւնը իրենց ֆիզիքական և հոգեկան բովանդակ կազմովը և ճշդել այն պայմանները որ կը սպառեն կամ կ'աճեցնեն անոնց մէջ մթերուած կորովը :

Այսպէս, մեկնակէտը ճշգրտած է : Խնդիր է հիմակ գնահատել ընկերային բոլոր այն կարգերը որ կը ձօնացնեն մարդկային կենսական կորովը, և դատապարտել բոլոր անոնք որ կը տկարացնեն զայն : Մերժել ընտանիքներու մէջ բուռն բոլոր փուճ սովորութիւնները, կրօններու մէջ դոնդողած բոլոր անբարեացիութիւնները, քաղաքականութեան մէջ ճարակած բոլոր վայրագ զգացումները, լեզուները և դատարարականութիւնը պղտորող բոլոր սովորութիւնները, տնտեսական մրցումի բոլոր այլանդակութիւնները : Մերժել իբր ընկերային կորովը սպառող շարիքներ :

Ամբողջ նկատելով քարացած մարմին մը որ չգիտեր զգալ գիտական ճշմարտութիւններու խանդավառութիւնը, որ յառաջդիմական քայլերու առջև կը լարուի ցանցի մը պէս, բնականաբար տնտեսութեան գաղափարը ոչ մէկ կերպով կրնայ հաշտուիլ ամբոխային վիճակներու հետ : Ան մանաւանդ կ'ուզէր ձերբազատել անհատը ամբոխային կաշկանդումներէն, կամ ժամանակակից հոգեբաններու պէս խորհելով բանականութիւնը բնագոյններու տիրապետութենէն : Ան մանաւանդ կ'ուզէր ներբողել անհատական գիտելիք, դատարարական, աշխարհ և իմաստասրտի կեանքի յաշտումը :

Ընկերային ուժերու տնտեսութեան գաղափարը կը ժխտէ նաև իրենց ժամանակը վաղուց լրացնող աւանդութիւններու արժէքը, զանոնք նկատելով «մեռելներու իշխանութիւնը» յաւերժացնող պայմաններ որ գիտական ու բարոյական նոր կեանքի ձևումները կը խափանեն :

Ան կ'առաջադրէ մարդկային տառապանքի աստիճանական նուազումը : Վասն զի, շատ հասկնալի է, տանջանքը միշտ կեանքէն բան մը կը պահեցնէ, թշուառ և անօթի մարդուն մէջ ուժերու ձօնացումը միշտ անկարելի է :

Այսպէս՝ տնտեսութեան սկզբունքը պարզելէ յետոյ, մտնենք մեր նիւթին ծոցը :

Բ.

Ցաւերու մասին խօսած ատեննիս, մենք բարոյականը ֆիզիքականէն պիտի չզատենք : Մեր նկատողութիւնները պիտի վերաբերին երկուքին ալ : Եւ արդէն անոնք էութեամբ իրարմէտարբեր բաներ չեն, միեւնոյն ակտանիշները ունին ու միեւնոյն դարմանումի միջոցները կը գործածուին երկուքին համար ալ :

Ռիպոյի սահմանումով «զգացող էակը, մարդ թէ անասուն, խուրձ մըն է հոգեկան կամ մարմնական պէտքերու, ակորժակներու, ձկտումներու : Ամէն ինչ որ գտնուի կը խափանէ կամ կը ջնջէ, ցաւ առաջ կը բերէ : Մարմնական ցաւը գործարանաւորութեան կոյր և անգիտակից հակազդեցութիւնն է ընդդէմ ամէն փաստակարար ազդեցութեան : Տխրութիւնը գիտակից հակազդեցութիւնն է ընդդէմ հոգեկան կեանքի ամէն նուազումի» :

Պէտք է հարցնել ուրեմն. — ուսկից կուգան այն գէշ ազդեցութիւնները որոնք մերթ կը խափանեն ու մերթ կը ջնջեն կեանքը բաղկացնող պէտքերը, ակորժակները, ձկտումները, և որոնք հակազդելու կը մղուի հոգեկան կամ ֆիզիքական կազմը :

Չուտ մարդկային տառապանքը միայն նկատի ունենալով այս հարցումին կը պատասխանենք. — այդ գէշ ազդեցութիւնները առաջ կուգան ընդհանրապէս ընկերային կեանքի գէշ յօրինուածութենէն :

Շօփէնհաուէրի յոռետեսութեան հիմը եթէ ուզէինք երկու բառով պարզել՝ պիտի ըսէինք.

«Մարդ կ'ուզէ և դէպք ինչ թիւ. — ինչիս ինչ լաւս, ու լեւրը ինչ թիւ :

Աշխարհ կը զլանայ. — Բայց որն է այդ զլացող աշխարհը : Անգործ նիւթը՝ որու վրայ կ'աշխատին մարդկային միտքն ու մարմինը : Բուսային, անասնական կամ աշխարհագրական միջավայրը՝ ուր իրենց գոյութիւնը ապահովուելու համար կատաղի ձիգեր կ'ընեն ժողովուրդները :

Այո՛, անշուշտ, հոգը եթէ տաժանափն աշխատանքով մը չմշակուէր, կրնար իր վրայ քալող մարդ էակները սովամահ ընել, կամ անոնց ձակատագիրը բոլորովին ուրիշ ընել : Կենդանիները և ընդհանրապէս բոլոր բոյսերը անոնց ծառայելէ կամ սնունդ ըլլալէ առաջ յոգնեցուցիչ խնամքներու կը կարօտին : Մարդկային բարդ պէտքերուն ու ակորժակներուն բնութիւնը դիւրութեամբ գոհացում չի տար, ստեղծագործ ձիգեր են հարկաւոր : Ատկէց զատ, ան չարատանջ դժուարութիւններ ու քանդիչ քմահաճոյքներ ունի որոնց պիտի գիմարբաւէ աշխատող ու քրտնող մարդը՝ տառապելով բայց յաղթելով :

Բայց եթէ մարդկային տառապանքի պատճառը անբան բնութիւնն է փայն, այն ատեն

(\*) Ribot, La psychologie des sentiments, մանուաւնդ 46-48 էջերը.

ինչո՞ւ անասունները մեզնէ աւելի դժբախտ չեն, ռամիկ գեղջուկը աւելի խորութեամբ չունի ցաւերու զգացումը, վայրենի մարդը կ'ապրի անհոգ և անտարբեր: Չէ՞, անոնք ալ մեզի պէս միևնոյն երկրագունդին վրայ կ'ապրին, ենթակայ նոյն վտանգներուն ու նոյն զրկանքներուն: Չէ՞, անոնց հանգէպ բնութիւնը՝ որ մայր կը կոչուի՝ աւելի անողորմ է յաճախ, աւելի բիրտ ու սպաննական:

Մարդկային ցաւերը միայն նկատի ունենալով, շէշու շէշու մենք կը թարգմանենք՝ հակամարտ կիրքերով ընկերական միջավայր: Հոս է որ բանաւոր էակը կը տառապի, վասն զի իր բաղձանքը ուրիշի մը վնասովը կ'իրագործուի գրեթէ միշտ: Եւ այս այսպէս է ո՞չ որովհետև մեր երկրագունդը տառապողներու անթիւ բազմութիւնը մասնաւորապէս ու մարմնապէս երջանկացնելու համար անբաւական է, այլ որովհետև ընկերային կարգերուն մէջ չկան կանոնաւորութիւն և հաշիւ:

Երկար ատեն կ'ընէ արդէն, տառապանքը մարդկութեան մէջ նկատուած է հաճութէն աւելի ընդհանուր ու սաստիկ ու խոր: Հնդիկները անոր վրայ հիմնեցին Պուտտայականութիւնը, տառապանքի կրօնը: Ըոփենհայուէր զայն խարխուր ըրաւ իր յօսետես փիլիսոփայութեան: Ան այսպէս ըսաւ.

— Ամէն ինչ որ կը խափանէ կամքը, ցաւ կը կոչենք: Ամէն ծիգ կ'ըլլայ պէտքի մը համար: Այդ պէտքը երբ չգոհացուիր, ցաւ առաջ կուգայ. երբ կը գոհացուի, այդ գոհացումը չկրնալով տեսիլ, նոր պէտք մը և նոր ցաւ մը կ'առաջագայի: Կամենալը էսպէս տառապիլ է: Եւ որովհետև ապրիլը կամենալ է, ամբողջ կեանքը էսպէս վիշտ է: Արքան էակը բարձր է, այնքան կը տառապի: Կեանքը մշտական որսորդութիւն մըն է, ուր մերթ որսորդ, մերթ որս, էակները կը կուռտին սոսկալի euréeeի մը պատաններուն համար: Ան այսպէս կ'ամփոփուի. — կամենալ առանց պատճառի, միշտ տառապիլ, միշտ պայքարիլ, յետոյ մեռնիլ, և այսպէս յաւիտենապէս...

Գ.

Արքան էակը բարձր է, այնքան կը տառապի: Մարդը անասունէն աւելի մեծ համեմատութեամբ ենթակայ է ցաւերու: Ռամիկ հոգիի մը մէջ բարոյական խիթերը այնքան քիչ են, որքան շատ են անոնք զարգացած էութեան մը մէջ: Իսկական մորմարը, կ'ըսէ Կիւյօ, իր նրբութիւններով, իր ցաւագին խայթերով, իր ներքին տուայտանքներով կը զարնէ էակները իրենց զարգացումին ուղիղ համեմատութեամբ, և ոչ թէ խոտոր (\*):

Զարգացումը աւելի սաստիկ կ'ընէ մեր մէջ ցաւերու զգայութիւնը: Մեր մտքը՝ իր մատա-

զութեանը մէջ՝ չկրնար ըմբռնել այն ներհակութիւնը որ կայ վայելողին ու ցրեւողին, ճնշողին ու ճնշուողին, նոյն իսկ գիտցողին ու չգիտցողին միջև: Ան չկրնար անդրադառնալ ընկերային կարգերու բիրտ անիրաւութիւններուն, ու չունի փորձառութիւնը անհասարուժերով ու դաժան գէնքերով այն կռիւին զոր ժողովուրդները իրարու դէմ և իրենց իսկ ծոցին մէջ կը մղեն: Իւ սա կը շինէ մանկական երջանկութիւնը: Կը մեծնանք. կը զարգանանք, և աշխարհ կը գէշնայ, կը սեւնայ: Կը տեսնենք ամէն զի տառապանքը որ իր ահաւոր ժանիքներով կը փորէ մարդուն էութիւնը:

Աչ միայն մանուկէն մինչև զարգացումով չափահասը, այլ և գիւղերէն մինչև մեծ քաղաքները երևոյթը նոյնն է, — տառապանքի յառաջատուական աճում: Գիւղացի համայնքը՝ միտքով աւելի խոնարհ, աւանդական հեշտ կեանքի մը թմրութեան մէջ, կ'ապրի անգիտակից այն շարիքին որ ընկերային ներհակութիւններէն կ'առաջագայի: Քաղաքացին իր ուժերէն մեծ չափ մը կը յատկացնէ աւելորդութիւններու, և հարկադրուած է կուռիլ նուրբ խորամանկութեամբ ու գաղտնի կամ օրինականացած վատութեամբ՝ իր գոյութիւնը տանելու ընելու համար: Քանի որ իր հոգեկան ու ֆիզիքական ցաւերը կը բազմապատկեն:

Տեղն է կարծեմ անմիջապէս ըսելու որ համայնքները իրենց կենսական կորովը կը սպառեն աւելի իրար գգելով, քան թէ բնութեան դէմ կուռելով: Գիւղացիներու և քաղաքացիներու բաղադատութիւնը մեզի կուտայ զօրաւոր փաստ մը: Ա իձակագրական իրողութիւններ չունիմ աչքիս առջև, բայց շատ յայտնի բան է որ քաղաքներու մէջ մարմնական ու հոգեկան տառապանքը աւելի մեծ աւերներ կը գործէ, քան ինչ որ չգործեր գիւղերու մէջ: Այս սպառնիչ երևոյթը, իրաւ է, մէկէ աւելի պատճառներ ունի, բայց ապահովաբար գլխաւորներէն մէկը ան է որ գիւղացիները ընդհանրապէս բնութեան հետ գործ ունին, կ'աշխատին ու կ'առաջանան: Իրենց գործերը իրար չեն չեզբացնիր, իրար չեն փձացնիր: Մինչդեռ՝ քաղաքացիները բնութեան հետ գործ ունին, և արտագրելէ աւելի կը սպառեն: Անոնք արտագրութիւնները իրարու բերնէ կը ձգնին ելել, և իրար կը հատցնեն, իրար կ'ուտեն:

Առաջինները կ'արտագրեն, այսինքն կը ծնին. երկրորդները կը սպառեն, այսինքն կը սպաննեն:

Այս ըսելէ յետոյ անցնինք բուն խնդիրին: Քաղաքակրթութեան առաջացումը տառապանքներու և տառապողներու շրջանակը կ'ընդլայնէ: Բարոյական վիշտը կը սաստկանայ և կը խորանայ գիտակցութեան աճումին հետ:

Ֆիզիքական կամ հոգեկան պէտքերու, ախորժակներու, ձգտումներու խափանումէն կամ ջնջումէն է որ վիշտը կ'առաջագայի: Իսկ մենք ըսինք որ քաղաքակրթութեան խոնարհ սաստիճաններուն վրայ ալ կան այդ խափանումները և

(\*) Esquiss, d'une morale sans obligation, ni sanction, էջ 224:

ջնջումները, բայց համապատասխան խոր ցաւերը կը բացակային հոն :

Ինչո՞ւ քաղաքակիրթ մարդը շատ կը տառապի :

Վասնզի, նախ, զգացող էակը ստորին մակարդակներէ դէպ ի բարձր գիտակցութիւն յառաջանալով, իր մէջ կը ձոխանան թէ՛ Ֆիզիքական և թէ՛ հոգեկան պէտքերը, և ստորժակները, ձգտումները : Աւելի քան այս վերջիններու գումարը մեծ է, հաւանական արգելքներու գումարն ալ մեծ է :

Զգացումներու զարգացումը, գրեթէ պարզ մը, զգացումներու ձոխացում ըսել է : Իսկ ամէն բաւարարապէս ուժգին զգացում արտայայտուելու կը ձգտի անպատճառ, և այդ ձգտումը ճիգերով միայն կ'ըլլայ . ճիգերը արդէն ցաւագին են յաճախ, ու նաև մորմոքալի՝ երբ կ'անցնին ապարդիւն, երբ իրենց նպատակին չհասած կը վիժին : Ընունդը առանց երկունքի անըմբռնելի է, ու մեռած զաւակ մը լոյս-աշխարհ բերել հոգեկան տանջանք :

Այսպէս, որքան ձոխ են զգացումները, այնչափ շատ են ցաւագին ճիգերը, այնչափ շատ են տխրառիթ վիժումները :

Քաղաքակիրթ մարդը շատ կը տառապի, որովհետև իր մէջ շատ են զգացումները, հոգեկան ու մարմնական պահանջները որոնց անհրաժեշտ է գոհացում տալ, և որոնք ամէնքն ալ տաժանագին դժուարութիւններով միայն կ'իրագործուին ու խոշոր արգելքներ ունին իրենց առջև խափանարար : Այդ որ քիչով կը գոհանայ, քիչ ցաւ կ'ունենայ :

Երկրորդ, քանի մարդիկ քաղաքակիրթուին, այնքան կ'ընդլայնին իրենց յարաբերութիւններու շրջանակը : Եւրոպացին իր հեռագիրներուն, հեռաձայններուն, լրագիրներուն, շոգիի և երեկտրականութեան մեծ կիրարկումներուն շնորհիւ ամբողջ աշխարհը կը ձանձնայ և անոր բոլոր յուզումները կը զգայ իր մէջ : Արդի միջազգային գաղափարներն ալ մեծ թափով կը դրդեն զինքը ունկնդիր ըլլալ բովանդակ մարդկութեան սրտի բաբախումներուն :

Հիները այդպէս չէին, վայրենին ու մանուկը և մութը ինկած գեղջուկը այդպէս չեն : Անոնք իրենց եսի կամ հողաբաժնի նեղ անկիւնէն հազիւ երբեմն դուրս կրնան ելլել :

Քաղաքակիրթ մարդու տառապանքին աճումը քիչ մըն ալ կը բացատրուի ուրեմն իր յարաբերութիւններու ընդլայնումովը : Արովհետև ժամանակակից ընկերային կարգերը այնքան գէշ են յօրինուածութեամբ՝ որ ամբողջ աշխարհ կը տառապի, և անհատը իր յարաբերութիւններու շրջանակը լայնցնելով իր ցաւերու շարժառիթները կը շատցնէ : «Ազեցի, կ'ըսէ Միւլլի Բրիտով, սիրելի ամէնքը, և ահա դժբաղդ եմ, վասնզի տանջանքներուս պատճառները բազմացուցի » :

Երրորդ, անասունէն ու վայրենիէն մինչև քաղաքակիրթ մարդը՝ երեւակայելու և դատելու կարողութիւնները կը ձոխանան, կը զօրանան :

Աւ որքան ձոխ են մտաւոր կարողութիւնները, այնքան ցաւի զգացումը բարդ է : Արովհետև երեւակայութիւնները, յիշատակները, ապագայի մտածումները բոլոր մէկ-մէկ կուգան իրենց կողմէ մասնաւոր խայթ մըն ալ աւելցնել այն ցաւին վրայ որ արդէն կայ, ճիշդ ինչպէս բոլոր դրացիները և բարեկամները կուգան իրենց արցունքը խառնել սգաւորի արցունքին, անոր վիշտը աւելի սաստկացնելով :

Ծիծեռնակ մը իր բոյնին աւերումը չողբար մեծ ցաւով, ինչպէս մարդը իր տունին հրդեհումը կուլայ յուսահատօրէն : Արովհետև առաջինը չկրնար երեւակայել կամ հետեցնել այն դժուարութիւնները, արգելքները, յոգեւորութիւնները որոնց ստիպուած է դիմագրաւել նոր բոյն մը շինելու համար :

Այսպէս, վիշտը կապուած է կէս մըն ալ մտաւոր վիճակներու զարգացումին : «Յայտնի է թէ, կ'ըսէ Ռիպօ, վառ ու շինարար երեւակայութեամբ օժտուած մարդը աւելի սաստկօրէն կըզգայ վիշտը : Մինչդեռ ուրիշ մը՝ ցուրտ ու աղքատ երեւակայութեամբ՝ կը մնայ անհոգ, իր դժբաղդութեան մէջ տեսնելով գրեթէ լոկ ներկան, արդին, այսինքն քիչ բան . — միտք բերուած վիշտերու գումարը համեմատական է միտք բերուած պատկերներու գումարին » :

Չորրորդ, զարգացած մարդը աւելի լաւ կը թափանցէ իր ցաւերու պարճառներուն, աւելի ուղիղ տեսողութիւն ունի, քան սոգէտը : Բժշկական լայն ծանօթութիւններու շնորհիւ քաղաքակիրթը գիտէ թէ գործարանային այսինչ հիւանդութիւնը որչափ վտանգաւոր է և ինչ բանէ առաջ կուգայ, ինչպէս կ'երեւակայէ թէ ո՞րքան ցաւագին ճիգեր և գործողութիւններ են հարկաւոր զայն բուժելու համար : Մինչդեռ, անքաղաքակիրթը յաճախ նոյն իսկ չգիտեր թէ իր ներսը ակտիւ կան մահացու, ինչպէս մանուկը չգիտեր որ ստամոքսային խանգարում մըն է իր տկարութեան պատճառը :

Տառապանքը զգացում մըն է որու պատճառին միտքով աղքատները, ըլլան անհատ թէ համայնք, ա) անբնական են յաճախ . (միբրոպի վախը որ մեր մէջ սուր ցաւ մըն է՝ անոնք չունին) . բ) կէս-գիտակից են գրեթէ միշտ (տնտեսական դժբաղդութիւնները շատ հեղ կը նկատեն իբր հետեւնք իրենց կրօնական պարտագանցութեան) :

Զգիտնայ տառապանք առաջացնող պատճառը, կամ արդէն իսկ եղած տառապանքի մը պատճառը սխալ տեղականացնել (localiser), ահա անոնց մթին երջանկութիւնը դոր չկրնար ունենալ քաղաքակիրթը :

Հինգերորդ, դարերու բարոյական կեանքը տկարացուցած է մարդուն յարձակողական և պաշտպանողական բնազդները, թաղացած է իր զէնքերը : Կուրի շարժառիթները տակաւին չափազանց շատ են սակայն, որոնց դէմ ան իր բարութեանէն և իմացականութեանէն զատ գրեթէ յաճախ ուրիշ զէնք չունի : Իսկ ասոնք միշտ անբաւական են, ցորչափ մարդկութիւնը իր

ծոցին մէջ կը պահէ նաև հին ժամանակներու վայրագութիւնները և նոր օրերու «խորամանկ կարգերը» : Ընկերային ներհակութիւններով լեցուն միջավայրին մէջ ամենէն աւելի անոնք կը շահին որոնք նախնական բիրտ, նոյն իսկ անամական բնագոյններէն մաս մը տակաւին կը պահեն իրենց էութեան խորքը : Բարձր կրթութիւնը կ'ազնուացնէ, այսինքն ստորին կիբքերը կը բարւոյնէ, կը մեղմէ : Բայց տակաւին կռիւր և քանդիչ բնագոյնները, ինչպէս է գայրոյթը, ինքնապահպանութիւնը անհրաժեշտ միջոց են : Տակաւին անոնցմով է ընդհանրապէս որ մարդիկ կ'ըլլան մեծ, ազդեցիկ, հարուստ, իրենց անհատականութեան սահմանները կ'ընդլայնեն : Խաղաղ բարձրացումները հազուադէպ են և բացառիկ նկարագիրներու միայն յատուկ :

Ամփոփելով մեր մտածումները . — քաղաքակիրթ մարդուն մէջ տառապանքի աճումը վերագրելի է այլազան և ներոյժ բաղձանքներու և ընկերական ու բարոյական զգացումներու ճոխացումին, որոնք միշտ չեն կրնար գոհացուիլ ու շատ հեղ կը վիժին : Անբարեկի է նաև հետզհետէ իր մէջ ընդլայնուող խելահասութեան որ ցաւառիթ պատճառները տեղն ու տեղը կը ձանձնայ :

Գ.

Տառապանքը, ինչպէս ամէն անախորժ զգայութիւն, իբր ուժերը սպառող երևոյթ, շատ հասկնալի է : Բնախօսապէս՝ փորձուած է որ վիշտը կամ սրանեղութիւնը (\*) միշտ կը նուազեցնէ կորովը : Սիրուած բարեկամի մը հետ կարելի է օրերով քալիլ, առանց սաստիկ յոգնութիւններու : Մինչդեռ ատելի ընկերի մը հետ ժամ մը իսկ ձամբօրդել տաժանագին պիտի գար :

Աւելի հասկնալի ըլլալու համար՝ հոս կ'ամփոփենք, քաղելով Ռիպոյի յիշուած հատորին (էջ 27—31 և 46), բոլոր այն ախտանիշները որոնք թէ՛ բարոյական և թէ՛ մարմնական վիշտերու ատեն կը յայտնուին գործարանաւորութեան վրայ :

ա. վիշտը կ'ազդէ սրտի շարժումներուն վրայ՝ արագութիւնը նուազեցնելով ընդհանրապէս : Ծայրայեղ պարագաներու մէջ այն յամրացումը նոյնիսկ թալուկի կրնայ յանգիլ : Գիտական աշխատանքներու մէջ՝ անասուններու գանկուղեղը հանուելէ վերջ նոյն իսկ՝ տեսնուած է որ վշտագին տպաւորութիւնները յառաջ կը բերեն սրտային կծկումներու նուազում մը : Նշանաւոր բժիշկ մը . Պիշա, ըսած է, «կուզէք գիտնալ թէ վիշտ մը կեղծ է, բազկերակը քննեցէք» :

(\*) Մրհեղութիւն բարձր մեծ մէջ այլաբանական չէ իմաստով : Ան բնախօսական երեւոյթ մը կը քայտարէ : Վիշտը իսկապէս կը ճեղք արհիւն փայտ, զայն կը ճեղքեն, ու կը դանդաղեցնէ արիւնի օրջանաւորութիւնը : Բան մը որ մեծապէս կը վնասէ զդային ու դնդրային գործունէութեան :

բ. վշտին ազդեցութիւնը շնչառութեան վրայ աւելի անկանոն և աւելի անկայուն է . — անոր կշռութիւնը (rythme) կ'ըլլայ տարուն (anormal), մերթ արագ, մերթ դանդաղ : Ներշնչումները յաջորդաբար կարճ և խորունկ կ'ըլլան : Բայց վերջնական հետեանքը կ'ըլլայ արտաշնչուած բնածխային թթուի նշանակելի նուազում մը, այսինքն շարունակներու իրական յամրացում մը : Բարեխառնութիւնը կ'իջնէ . մարդոց և անասուններու վրայ փորձերով ապացուցուած է այս պարագան :

գ. Շատ ծանօթ է մարտդական գործունէութեան վրայ վիշտին ազդեցութիւնը որ կը յայտնուի գանդազուումով կամ խանգարումներով . — ախորժակի պակասութիւն, արտածորութիւնը ընդհատում (arrêt des sécrétions), անմարտութիւն, փսխում, փորի լուծում, ևն : Եթէ ան երկար տեւէ, ընհանուր սննդառութեան վրայ ալ կ'ազդէ, և կը յայտնուի միզահոսումի փոփոխութիւններով, մորթի և մազերու մընայուն գունափոխութեամբ : Օրինակները շատ են մեծ վիշտի մը ազդեցութեան տակ քանի մը օրուան մէջ ձերմկած մազերու, մօրուքներու, յօնքերու :

դ. Շարժիչ պաշտօնները (fonction motrice) երևան կը բերեն վիշտը երկու ներհակ եղանակներով . — կրաւորական ձեւը, շարժումներու նուազում, ընդհատում կամ ամբողջական ծնում, ենթական կը թուի անէացած : Ներգործական ձեւը, վրդովում, գալարումներ, ջղաձգութիւններ և աղմուկներ : Այս վերջին պարագան կարծես կը հակասէ ընդհանուր բանաձևին որ վիշտը կը կապէ գործունէութեան նուազումի մը : Ռիպօ կը խորհի որ այս բուռն գրգռումը իրապէս վասնում է որ շուտով կը զգացուի և վերջնական հետեանք կ'ունենայ ենթակային ուժասպառութիւնը : Ախրաւորուած անասունը կը ցնցէ իր մարմնի ցաւած մասը, իր թաթը կամ դրուխը, իբր թէ ուղեր անկից վանել տառապանքը : Բոլոր այս շարժիչ հակազդեցութիւնները, անկանոն ու բուռն, են գործարանաւորութեան պաշտպանութիւն մը որ անօգուտ ու շատ մը պարագաներու մէջ վնասակար է :

Այս ամէնը Ռիպօ կը խտացնէ միակ բանաձևի մը մէջ . — վիշտը կապուած է կենսական պաշտօններու նուազումին կամ անկանոնութեան :

Թէ հոգեկան ու մարմնական ցաւերը միշտ կը պակսեցնեն ուժերը, յայտնի է նաև անկից որ հաճոյքները միշտ կ'աւելցնեն զանոնք : Ֆէրէ փորձերով ապացուցած է որ «ախորժելի զգայութիւններուն կ'ընկերանայ կորովի յաւելում մը, մինչդեռ անախորժներուն կ'ընկերանայ կորովի նուազում մը» :

Ընդհանուր բանաձև . — «Հաճոյքը իբր պայման ունի գործունէութեան աճում մը, վիշտը գործունէութեան նուազում մը» :

Ե

Յենուած այն իրողութեան վրայ որուն համեմատ տառապանքը ուժի վատնում է և գիտակցութեան աճումին հետ ուղիղ կը համեմատի, կարելի է հասնիլ սա տեսակ յոռետես եզրակացութեան մը . —

Քանի մարդիկ մտաւորապէս յաւաքդիմեն, այնքան շատ պիտի տառապին, և հետեւաբար այնքան շատ պիտի վատնեն իրենց կենսական կորովը: Քանի որ մարդուն մէջ բարոյական կարողութիւններու զարգացումին հետ զուգընթացաբար կը յառաջանայ բարոյական (որմէ նաև մարմնական) վիշտերու աճումը, ուրեմն, քաղաքակրթութեան կամ մտաւոր կատարելութեան մէկ բարձրագոյն կէտին վրայ մարդիկ ցաւերու սաստկութեան տակ տրորուած՝ պիտի կորսուէին:

Այսպիսի եզրակացութիւն մը՝ սակայն՝ դէմ է տառապանքի մասին մեր տուած բացատրութեան: Քաղաքակրթութեան հետ, ըսինք մենք քիչ վերը, մարդուն մէջ հոգեկան և մարմնական կեանքի պահանջները կը շատնան և ստիպողական կը դառնան, պակաս ու սխալ բաներու մասին խելահասութիւնը կ'աճի, ցաւառիթ պատճառներու ծանօթութիւնը կ'ընդլայնի: Իր մէջ ընկերային ու մտաւոր ճիգերը կը բազմապատկուին, լրացնելու համար ինչ որ պակաս է, գոհացնելու համար ինչ որ ստիպողական պահանջ է, վանելու համար ինչ որ ցաւեր և անախորժութիւններ կրնայ պատճառել: Այսպիսի լարուած դրութեան մը մէջ, բնական է, քաղաքակրթ մարդը շատ կը յոգնի, շատ կը տառապի, մանաւանդ որ իր ճիգերը միշտ չեն արդիւնաւորուիր, երբեմն ալ կը վիժին: Ար վիժին, վասն զի ո՛վ որ շատ կը յղանայ ու շատ կը ձեռնարկէ, շատ կը հանդիպի սրտնեղիչ անակրնկալներու, որոնցմէ մտաւորապէս ու Ֆիզիքապէս ամենէն անգործ մարդը միայն կրնայ որոշ չափով գերծ մնալ: Իսկ քաղաքակրթ ընկերութիւնները յղացումի և նախաձեռնութեան մէջ յառաջատուաբար կ'ըլլան անգերազանցելի:

Եթէ այսպէս է իսկապէս, եթէ մէկ կողմէն՝ պէտքերու և ձգտումներու ճոխացումը, ու միւս կողմէն՝ պակաս, սխալ, վնասակար և անպէտ բաներու խելահասութիւնը պատճառ են կերպով մը տառապանքի աճումին, այն ատեն քաղաքակրթ մարդուն տառապանքը պէտք է կոչել բնական:

Գիտակից տառապանքը չզարդիր սպառիչ ազդեցութիւն մը ունենալէ: Ան կը համապատասխանէ վիշտի այն ներգործական ձևին որ կը յայտնուի վրդովումներով, ազմուկներով, գալարումներով, ջղաձգութիւններով, բայց որ վերջ-վերջը կը յանգի մեծ ուժասպառութեան մը: Գիտակից տառապանքը բուն հակազդեցութիւն մըն է, և յոգնութիւնն ու սպառումը իրեն կը յարորդեն անխուսափելիօրէն: Բայց ան մեզ կը մղէ կեանքի աւելի զիւրատար պայմաններ գտնելու: մեր մէջ վառ ու կենդանի կը պահէ ստեղծագործելու հաւատքը: պէտ-

քերու, պակասներու, չարիքներու դարձնել փնտռել կուտայ մեզի: Եւ ասոնք կը սահմանափակեն տառապանքը, հետեւաբար կը նուազեցնեն նաև ուժերու սպառումը: Հաշիւի պէտք է առնել նաև այն հաճոյքը զոր կ'ունենայ ամէն նոր բան ստեղծող մարդ, և որ մեծ մասով, յաճախ ամբողջապէս կը դարմանէ նախընթաց վիշտին աւերները, ոգևորելով արեան շրջանաւորութիւնը, կանոնաւորելով շնչառութիւնը, զիւրացնելով մարտողութիւնը, ևն: — Արկնակ շահ նախ դարմաններու այսինքն պիտական նորութիւններու ճոխացում: յետոյ տառապանքի թեթեւացում: Երկու պարագային ալ մարդկային կարողութիւնները կը դուրսնան կանոնաւոր սնտեսութեան մէջ:

Յառաջդիմելով մարդկութիւնը կ'ըլլայ խելամուտ իր շահերուն և իր կորուստներուն, ու մանաւանդ իր տառապանքի պատճառներուն: Իսկ գիտակից տառապանքը շատ աւելի արդիւնաւոր սնտեսութիւն մը կ'ենթադրէ, քան անգիտակից երջանկութիւնը:

Ատկէց զատ, արդէն ծանօթ իրողութիւն է, վիշտը աւելի բարձրին և աւելի կատարեալին մղումը կը դնէ մարդուն մէջ: Աշտահարը դժգոհ մըն է իրերու վիճակէն: Դժգոհութիւնը քաղաքակրթական ազդակ է: Տառապանքը չարիքի մը կամ պակասի մը խելամուտութեան կամ չգոհացուած բաղձանքի մը կը յարորդէ: Գտնենք չարիքը, պակասը, բաղձանքը դարմանող միջոցները, ու մարդիկ աւելի քիչ պիտի տառապին:

Արդի գիտութիւնը մեզ կը ջանայ համոզել որ մարդուն ապերջանկութեան գլխաւոր պատճառներէն մէկն ալ վերջամեաց վնասակար գործարաններուն, հաստաղիներու մանրէներէն կազմուող բոյներուն, սեռային հատուկութեան և ծնունդի շրջաններուն յատուկ դժուարութիւններուն պէտք է վերագրել: Ահա սրբագրելի բաներ նոյն իսկ մարդկային գործարանաւորութեան մէջ: Ասոնց դարմանումի միջոցները գտնելով մարդը աւելի առողջ ու երջանիկ պիտի ըլլար ուրեմն: Այսպէս կը հաւաստէ գոնէ գիտութիւնը:

Պէտք չէ ըսել. — քանի մարդիկ զարգանան այնքան շատ կը տառապին: Պէտք է մանաւանդ ըսել. — քանի մարդիկ զարգանան այնքան լաւ կը նշմարեն չարիքը, պակասը: Այս երկու նախադասութիւնները իմաստով նոյն են գրեթէ: Բայց վերջինը կը նախընտրենք, որովհետև ան յայտնապէս մեզի կը հասկցնէ թէ զարգացումը կ'ընկերանայ ուղիղ ու սուր տեսողութեան, ինչ որ յատկանիշն է գիտակից տառապանքին:

Աւղիղ ու սուր տեսողութիւն ամէն բանի մէջ, պատճառներու, հետեւանքներու, գաղտնիքներու, աղէտներու, ապագայ մթութիւններու մէջ: Ասի արդէն տնտեսական է, թէև քիչ մը տառապեցնող:

Անասուններու մէջ բարոյական վիշտը շատ թեթեւ է և սահմանափակ: Նախամարդուն մէջ

ալ հարկաւ այդպէս էր : Իսկ անասունէն և նախամարդէն մինչև քաղաքակիրթը տառապանքի զարգացում մը կայ, բայց կայ մանաւանդ մտաւորական կարողութիւններու ճոխացում մը : Յպացուցուած կարելի է նկատել ուրեմն որ մարդուն մէջ գիտակից տառապանքը քաղաքակիրթապէս աւելի կ'արժէ, քան անասունին մէջ կոյր կրջանկութիւնը :

2

Քաղաքակիրթ հասարակութիւններէն դէպ ի յետամնաց համայնքները իջած ատեննիս ուշագրաւ երեւոյթ է նաև այն — թող ներուի մեզ քիչ մը աւելի ընդլայնել այս կէտը որ վերը արդէն պարզած էինք — որ տառապանք առաջացնող պատճառին գիտակցութիւնը աստիճանաբար կը նուազի և կ'ոչնչանայ :

Հոգեբանորէն ու քաղաքականապէս ստրուկ ժողովուրդները միշտ կը խորհին որ իրենց մեղքերուն համար է որ կը հարստահարուին, կը ջարդուին, սովամահ կը կորսուին : Ռամիկները երկնաուար պատիժներ կը նկատեն հիւանդութիւնները և բնական աղէտները : Իր մեռելին համար «հոգուհաց» շտուող հայ գեղջուկը անանկալ պատուհասի մը վախը ունի միշտ : Վերջերս կովկասի մէջ քօլերա կը պատահի ու կարսի սնահաւատ հայ ժողովուրդը անկից բրկուել կը յուսայ «եօթն լէրէի դասերու», գոր փերել կուտայ յատուկ պատգամաւորով և որուն մեծ ընդունելութիւն կ'ընէ :

Անհրաժեշտ չէ կարծեմ երկարել այս օրինակներու շարքը : Իրողութիւնը այն է որ մտաւորապէս աղքատը կամ չգիտեր, կամ սխալ կը հասկնայ իր ցաւերուն պատճառը : Կամ անգիտակից է, կամ կէս-գիտակից է այն շարժառիթներուն որոնք զինքը հոգեկան ու մարմնական դժբաղդութիւններու կը մատնեն :

Արդ, համայնք մը իր ուժերը կը վասնէ այնքան շատ որքան քիչ գիտակից է իր տառապանքի պատճառներուն : Արովհետև իր մտաւոր ու մարմնական բոլոր արժէքներովը կը դառնայ գերի բնական աղէտներու, հիւանդութիւններու, կրօնական ու քաղաքական ունայնութիւններու, ընտանեկան փուճ աւանդութիւններու և նախնական ժամանակներէ մնացած վայրագ բնագոյններու :

Հակառակն ալ ձիշտ է : Հասարակութիւն մը իր ուժերը կը տնտեսէ այնքան լաւ, որքան շատ գիտակից է իր տառապանքի պատճառներուն : Արովհետև կը սորվի պաշտպանուել ամէն տեսակ բնական և ընկերական շարիքներու դէմ :

Իսկ ինչ որ արդի քաղաքակիրթ մարդուն տառապանքը կը կազմէ — դժգոհութիւնը, յուսահատութիւնը, յուստեսութիւնը, ներքին հոգեկան պառակտումները — ընդհանրապէս վերագրելի է այն հանգամանքին որ միտքի յառաջացումին հետ ուղիղ չբաղկեր ընկերային աւելորդութիւններու բարձումը :

Վնասակար դարձած գործարաններու պէս, կան նաև՝ ներկայ փոխանցումի պահին վրայ՝ փուճ ու վնասակար դարձած աւանդութիւններ անտեսական, կրօնական, քաղաքական : Չարքացած միտքը անոնց մէջ դրուած կը տառապի, որովհետև իր բարձր մտածումը շինող գիտական ճշգրտութիւններէն ոչինչ կը գտնէ «գործնական» կոչուած կեանքին մէջ : Ան կը գտնուի այնպիսի շրջանի մը մէջ ուր տառապանքը ամէն ժամանակէ աւելի ուժերու սպառում, և ուժերու սպառումը տառապանք կը բերէ մարդուն, պատճառ և արդիւնք իրար ամբողջացնելով. ուր սխալ, պակաս, անպէտ, վնասակար բաներու հետաքրքրութիւնը կը տիրէ. ուր չարիք առաջացնող շարժառիթներու հետազոտութիւնը և ծանօթացումը կ'ընդհանրանայ. ուր գիտական այլազան պահանջներու և անտրամաբան աւանդութիւններու միջև կոհուր կը դառնայ աւելի և աւելի անողորմ ու կատաղի : — ցաւագին յեղափոխութիւն մը թէ՛ անհաստական և թէ՛ մանաւանդ ընկերային հոգեբանութեան մէջ :

Հասկնալի է ուրեմն, արդի հասարակական կարգերուն գէշ յօրինուածութիւնէն կ'առաջագայի ժամանակակից տառապանքը իր շատ մը բարդութիւններովը. հետեւաբար նաև հաւաքական կորովին անօգուտ սպառումները, այնքան աղէտաւոր՝ ժողովուրդներու զարգացումի և աճումի տեսակէտէն :

Ահա չարիքը :

Բայց չարիքին գիտակցութիւնը կը խորանայ գիտութիւններու առաջացումին հետ զուգահեռաբար : Սա լաւ է, որովհետև դարմանումներ փնտելու կարողութիւնը կ'ոգւորէ :

Պիտի գայ ժամանակ ուր յառաջդիմութեան հետ աճող պէտքերու, ակտիվութիւններու, ձգտումներու իրականացումը պիտի չխափանուի ընկերային կարգերէն, իսկ բնութեան դժուարութիւնները մարդուն մէջ պիտի ուժեղցնեն հետապնդութեան ոգին. ուր մարդիկ պիտի ապրին աւելի գիտական և աւելի բարի գետիւնի վրայ, և այսպէս, փափուկ հոգիներու տանջանքը պիտի չբազմանայ յարաբերութիւններու ընդլայնումով. ուր մտաւոր կարողութիւններու ճոխացումը այնքան շատ հաճելի արդիւնքներ պիտի արտադրէ որ վիշտերու աւերը տեսական ոչ մէկ հանգամանք պիտի ունենայ. ուր ցաւ առաջացնող պատճառներու գիտակցութիւնը մարդոց պիտի ընկ տայ նախազգուշութիւններ որոնք պիտի չլքեն, որովհետև ընկերութիւնը հաւաքական կորովով անոնց մղում պիտի տայ. ուր անհաստականութեան պահպանումն ու մեծացումը պիտի տեղի ունենան բանականութեան և ազնիւ զգացումներու ուժով միայն, վասն զի վայրենութենէ և մութ անցեալներէ մնացած բնագոյնները, կիրքերը, փուճ

աւանդութիւնները կամ յիշատակները արդէն ջնջուած պիտի ըլլան :

Ու տառապանքը պիտի սահմանափակուի : Ընկերային կարգերը , այն ատեն աւելի գիտական հիմերով , պիտի չմեղցնեն , պիտի կենդանացնեն մանաւանդ : Անթուրիւնը , պատերազմները , թալանը , կրօնական ու քաղաքական սարսափները պիտի վերնան աշխարհէն : Բնական աղէտները պիտի քիչնան , վասնզի գիտութիւնը անոնց առջև պիտի բարձրանայ պատենչի մը պէս ամուր , մեծ , անխորտակելի :

Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ ԳԵՂԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ՅՈՒԲԵԼԵԱՆԸ

Այս աշնան պիտի կատարուի Մկրտիչ Փորթուգալեանի ազգային հրապարակագրական գործունէութեան յորելեանը : Ստացած ենք՝ հրատարակուելու համար՝ հետեւեալ կօչը .

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ  
Յոբելեանական Յանձնախումբ  
ՄԱՐՍԷՅԼԻ

Կ Ո Չ

Բազմաշխատ վաստակաւոր գրական-հասարակական անխոնջ գործիչ Մկրտիչ Փորթուգալեանի յորելեանը արժանաւճիւղ կերպով տօնելու համար յանձնախումբ մը կազմուած է Մարսէյի մէջ :

Յանձնախումբը պարտականութիւն կը համարի յիշեցնել Թիւրքիոյ եւ արտասահմանի գիտակից երիտասարդութեան , փութալ իրենց շրջանակներու մէջ եւս յանձնախումբը կազմել , բարոյապէս եւ նիւթապէս աջակցելու ծերունազարդ հրապարակագիր-գործիչին , եւ ատով քաջալերելու առ հասարակ բոլոր հասարակական աշխատաւորները :

Ամէն նուիրատուութիւն , մանտա եւ այլն զրկել V. Vahouni, Rue St-Jacques N° 119 — Marseille.

Թղթակցութիւն , տեղեկութիւն հաշիւ եւն. զրկել՝ K. Hovnanian, 5, Rue St-Cannat հասցէին :

Ասեմապէս Ասեմադպիր  
Մ. Տէր-Աթանասեան Գ. Յովնանեան  
Գանձապահ Անդամներ  
Վ. Վահուցի Վ. Ղազարեան, Գ. Շահլամեան  
Օ. Կիլէտեան Օ. Պալքասեան

Մկրտիչ Փորթուգալեան գործած է նախ իբր ուսուցիչ : Ինք Պոլսեցի , փոխանակ մայրաքաղաքին մէջ հանգիստ ու փայլուն կեանք մը վարել ձգտելու , նախընտրած է գաւառներն երթալ եւ հոն անշուք պայմաններու մէջ

ապրել՝ բայց բուն հայկական միջավայրին մէջ գործել եւ Հայաստանի մէջ տիրող մտաւոր խաւարը լուսաւորելու նպատելու : Չորս տարի ուսուցիչ եղած է Թոքաթ , ու եօթը տարի վան : Մանաւանդ վանայ մէջ է որ իր գործունէութիւնը շատ բեղմնաւոր եղած է : «Փորթուգալեանի եօթնամեայ գործունէութիւնը վասպուրականի մէջ , կը գրէր Ամերիկայի յորելեանական յանձնախումբը իր կենսագրականի շրջաբերականի մէջ իւր կեանքի ամենարեղուն շրջանը կը կազմէ : Վարժապետանոցը եւ անոր շարունակութիւնը եղող Կեդր. վարժարանը՝ եղան վաւարաններն որ գաղափարների , որոնցմով սնու եւ զօրացաւ վասպուրականի երիտասարդութիւնը : Փորթուգալեանը Հայոց Հայրիկից յետոյ , առաջին մարդը եղաւ , որ յաջողեցաւ յեղաշրջել վասպուրականի կրթական գործը : Իւր հասցուցած ուսուցիչներով եւ իւր յամառ յախատութեամբ ան քանդեց Տէր Թօթիկեան սիստմը , եւ ժամանակակից կրթական նոր ուղղութեամբ ահագին զարկ տուաւ վասպուրականի զարոցներուն :

« Եւ ցանց նոր կեանքի , նոր գաղափարների եւ յեղափոխական պայքարի կենդանի սերմեր հայ ժողովրդի սրտին եւ մտքին մէջը : Սերունդներ դաստիարակեցան այդ ուղղութեամբ , անոր աշակերտները երկար տարիներ վասպուրականի , Ատրպատականի , Տուրքմենիստանի եւ Բաղէշի կրթական գործը վարելով մէկտեղ՝ եղան եւ յեղափոխական գաղափարների առաքեալներ : 96 թւի վանի ինքնապաշտպանութեան կուրի մէջ երեւան եկաւ Փորթուգալեանի ցանած սերմերի արգելիչը : Եւ եղաւ ազատագրական շարժման նախակարապետը վասպուրականի մէջ » :

Փորթուգալեան իր կեանքին երկրորդ մասին մէջ գործած է իբր հրապարակագիր :

1885ին եկաւ Մարսէյ եւ հիմնեց Արմենիան , եւ հանդիսացաւ հայ յեղափոխական շարժման ռանվիրաներէն մին : Երբուհազարդ գործիչին հասակը զնները մտադիր են իր գործունէութեան քառասնամեակը եւ Արմենիայի քսանամեակը տօնելու : Ամէն Հայ , նոյն իսկ անոնք որ վերապահումներ ունին Փորթուգալեանի գործունէութեան այս կամ այն կէտին նկատմամբ , անշուշտ պիտի աջակցի այս յորելեանին՝ նկատի ունենալով յորելեանի կեանքին ու գործունէութեան ամբողջութեանը մէջ տիրող ազգասիրական յառաջդիմական ոգին :

Le Gérant : FRÉDÉRIC MACLER.  
Impr. Ch. NERCÈS, 328, Rue St-Jacques, PARIS.

# ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ

20, Չաքմաքճըլար, 20

## Կ. ՊՈԼԻՍ

	Ֆր.
Զօհրադ Գ. Կեանքը ինչպէս որ է, վէպ	1.75
Թուրքի, Լ. «Յարութիւն», Ա. Բ. Գ. հատոր, վէպ, թարգմ. Օտեան Ե.	5
Պարթեւեան Ս. Հայուհին, վիպակ	1.25
» Բայքայում, »	1.50
» Կիլիկիան արհաւիրք	2
Ուկեան Կ. Սրտի ժամեր	2
Շեքերեան Լ. Յաւին տունը (բանտար-կեալի մը յիշատակները)	1
Նուպարեան Մ. — Նուպար փաշա (կենսագրութիւն մեծ պետական մարզուն)	1.25
Գառնի Խորհրդաւոր աղջիկը, վէպ	2.50
Անպունեան Ա. Կաւէ արձաններ	2
Այվազեան Ա. Բառանմոյշ	0.70
Նուպարեան Երջանկութեան երկիրը	0.70
» Կրթական վերածնութիւն	1
Գուլանեան Ե. Արեւելքի բոցեր (բանաստեղծութիւն)	1.25
Շիրանեան Ա. Անգրանիկ (թատրերգ.)	0.80
Էսաճանեան Լ. Այրած քնար մը (բանաստեղծութիւն)	0.60
Ճլամարեան Գ. Գիսաւորներ	1.25
Բելաբա Ս. Հրացանակիր քահանան	1
Մարթեան Յ. Գ. Հայ մեծատուններ	2.25
Սեւակ Ռ. Կարմիր գիրքը	1.25
Մարտիրեան Տ. Առաջնորդ թարգմանութեան անգլ. լեզուի	0.70
Կարմա — Ինչո՞ւ Հայը հայդուկ եղաւ	0.70
Նուպարեան Մ. Պրանս-հայ աշխարհ. բառըն.	6.50

## ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԱՌՉԵՌՆ ԲԱԹԱՐԱՆ  
ՖՐԱՆՍԵՐԻՆԷ ՀԱՅ-ԱՇԽԱՐՀԻԿ  
Յօրինեց

ՍԵՍՐՈՊ ՆՈՒՊԱՐԵԱՆ

Դին 7½ ֆրանք

Դիմել Պալենց գրատուն, Պոլիս:



## Ա. ՉՊԱՆԵԱՆԻ

### ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գրքի Ծրագր

<b>Les massacres d'Arménie,</b> préface de G. Clémenceau.	1
<b>L'Arménie,</b> son histoire, sa littérature, son rôle en Orient; introduction d'Anatole France.	1
<b>Zeïtoun,</b> depuis les origines jusqu'à l'insurrection de 1895, par Aghassi; traduction française; préface de Victor Bérard.	—
<b>Նախագիտութեան Գրքի Պատմութիւնը,</b> (քննական ուսումնասիրութեամբ մը հրատարակուած)	2
<b>Poèmes arméniens anciens et modernes,</b> traduction française, précédée d'une étude sur la poésie et l'art arméniens par Gabriel Mourey.	1
<b>Chants populaires arméniens,</b> traduction française avec une introduction et des notes; préface de Paul Adam. (պատկուած՝ Պրանսական Ակադեմիայէն):	3,50
<b>Մկրտիչ Պեօկրաբեանի հերոսածներն ու ճառերը,</b> (ճանօթագրութիւններով հրատարակուած):	2
<b>Les Trouvères arméniens,</b> traduction française, avec une introduction et des notes.	3,50
<b>Մկրտիչ Պեօկրաբեանի կեանքն ու գործը,</b> քննական ուսումնասիրութիւն	5
<b>Քերթուածներ.</b>	3
<b>Նաղագ Թովնարան առուղը եւ Թովնարան Թովնարանեան նկարիչը</b> (26 նկարներով զարդարուած):	3

## ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Georges Brézol

LES TURCS ONT PASSÉ LA...

Փաստալից ստուար կարեւոր հատոր մը:

La Vérité sur les massacres d'Adana en 1909

en vente chez l'auteur, 66 Bd. Ornano, Paris


Թուրքիոյ համար դիմել Պ. Բ. Ազնաուրբի, 22-24 Հալուզլու խան, Կ. Պոլիս, 5 ֆր. 75ի մանտա-փօսթով մը:

Գրքին վաճառուէն գոյանալիք զուտ հասոյթը յատկացուած է Կիլիկիան Որբախնամին

ԱՆԱՀԻՏԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Նիւ-Նոր		Խմբագրութիւն «Արմէնիա»
Սեկրըր Յօլս	Պարոն	Սահակ Ծառուկեան
Աղեքաներիա	»	Յովհաննէս Գարանձեան
Գանիրե	»	Արմենակ Ատիլեան
Կ. Պոլիս		Պալենց գրատուն
»		Արծիւ գրատուն
Ադրիանուպոլիս	»	Տիգրան Մարտիրոսեան
Իզմիս	»	Դաւիթ Պօղոսեան
Իզմիր	»	Սեդրաք Թօքաձեան
Պարսիզակ	»	Մելքոն Յովսէփեան
Թոֆաթ	»	Ա. Խոխ Լալպազեան
Նիքաւր	»	Պետրոս Տրապիզոնլեան
Սամսոն	»	Յարութիւն Յ. Տիփանեան, «Արարատեան» գրատուն
Յաւաթա	»	Սենեքերիմ Քէլպազձեան
Մարգուան	»	Յակոբ Պապասինեան
Կեսարիա	»	Գէորգ Ճամձեան
Բաքերդ	»	Զարէն Ալպազեան
Կարին	»	Միսաք Կոլոթեան
Սեզնկա	»	Սեդրաք Գրիգորեան
Շապին-Գարահիսար	»	Խորէն Սէրձէնեան
Խարբերդ	»	Գարեգին Կոստանեան
Կիւրին	»	Սարգիս Չիլինկիրեան
Ասանա	»	Միհրան Քէշիշեան
»	»	Դաւիթ Խաչիկեան
Մերսին	»	Յովհաննէս Փոքուրեան
Ուրժա	Գեր. Արաւազգ Ծ. Վ. Գալէնտերեան	
Տօրթ-Տօլ	Պ.	Միհրան Տէր-Մելքոնեան
Հալեպ	»	Վահան Պասթաձեան
Մուս	»	Համալասպ Տէր-Յովհաննէսեան
Վան	»	Տիգրան Չիթուկի
Սեբասթա	»	Վահան Մոսկոֆեան
Ռուսնուզ	»	Գառնիկ Մազմանեան
Ֆիլիպի	»	Թադէոր Հինգլեան

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ



ԱՆԱՀԻՏը կը հրատարակուի երկու ամիսն անգամ մը :  
 Բաժանորդագրինն է սարեկան՝ 10 Ֆրանկ (Ֆրանսա), 12 Ֆրանկ (օտար երկիրներ),  
 2 սոլար (Ամերիկա), 5 ռուպլի (Ռուսիա):  
 Վեցամսեայ՝ 5 Ֆրանկ (Ֆրանսա), 6 Ֆրանկ (օտար երկիրներ), 1 սոլար (Ամերիկա),  
 3 ռուպլի (Ռուսիա):

Յօդուած եւ բաժանորդագրին դրկել հետեւեայ հասցեին .

A. TCHOBANIAN

17. Rue La Bruyère, Paris.

